



Կանանց
Աջակցման
Կենտրոն



Ընտանեկան բռնություններից տուժաժների հետ աշխատանքի ուղեցույց

**Ընտանեկան բռնությունից
տուժաժների հետ
աշխատանքի ուղեցույց**

Դիզայնը արվել է Proper Comapny
Անգլերենից թարգմանեց Աննա Շահնազարյանը

Երախտիքի խոսք

Ընտանեկան բռնությունից տուժածների հետ աշխատանքի ուղեցույցը մշակվել է Կանանց աջակցման կենտրոնի կողմից:

Ուղեցույցի մշակման մեջ իրենց ներդրումն են ունեցել բազմաթիվ անձինք ու կազմակերպություններ՝ տրամադրելով հետազոտական և ֆինանսական ռեսուրսներ, կիսվելով սեփական փորձով: Առանց նրանց առատագործության և նվիրվածության հնարավոր չէր լինի ավարտին հասցնել այս ձեռնարկը:

Երախտիքի մեր խոսքն ենք հղում Միջազգային զարգացման գերմանական գործակալությանը (Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ)), և բաց հասարակության հիմնադրամին, առանց որի աջակցության այս նախագիծը չէր իրագործվի:

Նախագիծը մեծապես հիմնված է եղել Նինա Ռոմա Աղվանյանի մասնագիտական ուղղորդման և փորձառության վրա: Նինա Ռոմա Աղվանյանը տրավմայի մասնագետ է և սեռական բռնության ենթարկված անձանց ճգնաժամային կենտրոնների սերտիֆիկացված խորհրդատու, վերջին տասը տարվա ընթացքում աշխատում է բռնության կանխարգելման ոլորտում, իր գործունեությունը ծավալել է չորս երկրում: Նինա Ռոմա Աղվանյանի փորձառությունը՝ որպես և՛ ուսուցանող և՛ ծառայություն մատուցող, առանցքային նշանակություն է ունեցել այս ուղեցույցի մշակման գործում:

Մեր սրտագին շնորհակալությունն ու երախտիքն ենք հայտնում Կանանց աջակցման կենտրոնի աշխատակիցներ Հասմիկ Գևորգյանին, Անի Զիլոգյանին, Ալվարո Կարապետյանին և Մարո Մաթոսյանին, ովքեր ներկայացրել են բռնություն վերապրած անձանց

և պետական կառույցների հետ իրենց ամենօրյա աշխատանքի փորձառությունը: Նրանց մտորումներն ու խորքային առաջարկներն անգնահատելի արժեք ունեն՝ անդրադառնալու Հայաստանում ընտանեկան բռնության հաղթահարման հետ կապված յուրահատկություններին:

Վերջում, մեր անկեղծ գնահատանքն ենք հայտնում բռնությունը վերապրած բազմաթիվ կանանց, ովքեր իրենց կարծիքներն ու մտորումները, ապրումներն ու պատմությունները վստահել են մեզ: Այս ուղեցույցը նվիրում ենք նրանց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երախտիքի խոսք	5
I. Ներածություն	9
II. Ինչ է ընտանեկան բռնությունը	15
ա. Բռնության տեսակները	16
բ. Ընտանեկան բռնարարքների դրդապատճառները	19
գ. Բռնության շղթան	21
դ. Ընտանեկան բռնությանն առնչվող փաստեր	24
ե. Ընտանեկան բռնությունը Հայաստանում. մշակութային առանձնահատկություններ	30
III. Ինչպես հասկանալ ճգնաժամում գտնվող տուժածին	33
ա. Ինչու կինը չի հեռանում բռնարարից	34
բ. Տրավմայի հոգեբանությունը	37
գ. Տրավմայի նշաններն ու ախտանիշները	40
դ. Հետևանքները երեխաների վրա	46
IV. Ընտանեկան բռնության դեպքերում համակարգված միջամտություն	48
ա. Գնահատում/ընդունում	52
բ. Սպանության ռիսկի գնահատում	56
գ. Ապաստարան	59
դ. Անվտանգության պլան	61
V. Սոցիալական աջխատողի դերը	67

ա. Ներուժի հզորացում, լավագույն մոտեցումները	69
բ. Ապահովության վերակառուցում	73
գ. Խորհրդատվության հիմնական հմտությունները	77
դ. Հաղորդակցության արգելակներ	80
ե. Ինչպես աշխատել Թեժ գծի վրա	83
զ. Սոաջարկեր տարբերակներ, ոչ խորհուրդ	90
է. Սահմաններ	92
VI. Աշխատանք բնակչության հատուկ խմբերի հետ	97
ա. Հաշմանդամություն ունեցող վերապրածներ	100
բ. Բռնություն վերապրած տղամարդիկ	102
գ. Բռնությունը վերապրած լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր (LGBS) անձինք	104
Հավելված 1	109
Հավելված 2	113
Հավելված 3	122
Գրականություն	125

ԼՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ



Այս ձեռնարկը մշակել են Հայաստանում աշխատող մասնագետներ՝ Նպատակ ունենալով աջակցել և հզորացնել այն հաստատությունների կարողությունները, որոնց գործունեությունն այս կամ այն կերպ կարող է առնչվել ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ: Սա ուղեցույց է, որի օգնությամբ հնարավոր կլինի բարձրացնել բռնության ենթարկված անձանց տրամադրվող ծառայությունների որակը, բարելավել այդ հաստատությունների աշխատանքային գործընթացները:


Ուղեցույցը հիմնված է հետևյալ հիմնարար սկզբունքների վրա՝

-  Ծառայությունները պետք է մատուցվեն հետևողականորեն, ժամանակին և հարգեն գաղտնիության սկզբունքները,
-  թեև ուղեցույցում կմատնանշվի ոլորտի միջազգային լավագույն փորձը, այդուհանդերձ բռնության ենթարկված յուրաքանչյուր անձի պետք է վերաբերվել անհատականորեն՝ հնարավորության դեպքում իր յուրահատուկ կարիքների համար ապահովելով հասցեագրված ծառայություններ և աջակցություն,
-  բոլոր այցելուները պետք է արժանանան հարգալից և արժանապատիվ վերաբերմունքի: Բռնությունը երբեք բռնության ենթարկվածի մեղքը չէ, երբեք որևէ մեկն «արժանի» չէ վնաս կրելու, և բռնության ենթարկվածները երբեք պարսավանքի չպետք է ենթարկվեն կամ հարկադրվեն անելու սեփական կամքին դեմ գնացող գործողություններ: Բռնության ենթարկված անձինք ունեն ծառայություններից հրաժարվելու իրավունք: Այս մասին ավելի մանրամասն կխոսվի ուղեցույցի հաջորդ մասերում:

Հնարավոր է վերջ տալ ընտանեկան բռնությանը. Միացյալ Նահանգներում, օրինակ, ըստ Արդարադատության դեպարտամենտի՝ 1994թ.-ից մինչև 2010թ. ընտանեկան բռնության դեպքերը նվազել են 64 տոկոսով՝ շնորհիվ «գրո

հանդուրժողություն» ապահովող օրենքների, հատուկ քաղաքականության, ոստիկանության արձագանքի և իրազեկվածության բարձրացման: Ընտանեկան բռնության դեպքում միջամտությունը և բռնության կանխարգելումը բարդ ոլորտ է, որտեղ անհրաժեշտ է սոցիալական, առողջապահական, իրավապահ և արդարադատական կառույցների մասնագիտացած աշխատանքը կանանց, երեխաների և ընտանիքների հետ: Այդպիսի կառույցներից են՝ դպրոցները, ոստիկանությունը, օրենսդիրները, հիվանդանոցները, նախարարական տարբեր վարչությունները: Հայաստանում ընտանեկան բռնության խնդիրն իրապես լուծելու համար անհրաժեշտ է լայն հանրության, ծառայություն մատուցող հաստատությունների և կառավարության բոլոր օղակների իրազեկվածությունը ընտանեկան բռնության մասին, նրանց համատեղ աշխատանքը, փոխադարձ հարգանքն ու թափանցիկությունը:

Ըստ ԱՄՆ-ի Արդարադատության դեպարտամենտի՝



Ընտանեկան բռնությունը խեղում է ընտանիքները, բռնարարները լուրջ ու տևական հոգեբանական սպի են թողնում բռնության ենթարկված ընտանիքի անդամների վրա: Նույնիսկ այն դեպքերում, երբ տանը տեղի ունեցած բռնության անմիջական զոհը երեխաները կամ ընտանիքի այլ անդամները չեն, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ընտանիքում բռնության ականատես լինելը կարող է նույնքան տրավմատիկ լինել, որքան անմիջական բռնության ենթարկվելը: Ոլորտում աշխատող սոցիալական աշխատողները պետք է գիտակցեն, որ առողջ ընտանիք ունենալու գերագույն նպատակը կարող է իրագործվել՝ բռնությունից զուրկ ընտանեկան միջավայր ապահովելով:

Անհնար է նաև անտեսել ոլորտում աշխատող մասնագետների անվտանգության հարցերը, ուստի պետք է այս ռիսկի հետ նույնպես լրջորեն հաշվի նստել: Ոստիկանության վերապատրաստումը ընտանեկան բռնության դինամիկայի և ապահովության շուրջ, ինչպես նաև համատեղ աշխատանքը մասնագիտացած փորձագետների հետ առանցքային նշանակություն ունեն: Ինչպես ոստիկանության, այնպես էլ ընտանեկան բռնության մասնագետների կողմից տրամադրվող ծառայությունները պետք է համահունչ լինեն, որպեսզի ապահովեն արդյունավետություն:

Ծանոթագրություն ուղեցույցում գործածվող բառերի ու եզրույթների կապակցությամբ

Հայաստանում ընտանեկան բռնության ենթարկված և համապատասխան ծառայությունների կարիք ունեցող անձանց մեծ մասը կանայք են (և նրանց երեխաները): Ամենաթիվ ինթերնեշնըլ միջազգային իրավապաշտպան կազմակերպության 2008թ. անցկացրած ուսումնասիրության գնահատումներով՝ Հայաստանում չորս կնոջից մեկը ենթարկվում է ընտանեկան բռնության՝ հիմնականում ամուսինների կողմից:¹ 2011թ. մեկ այլ կազմակերպության՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) կողմից Հայաստանում իրականացրած հարցումները ² պարզել են, որ հարցված կանանց 41-71 տոկոսը (կախված՝ շրջանից) ենթարկվել է բռնության որևէ տեսակի: Ընտանեկան բռնության ենթարկվածներից 61.4 տոկոսի դեպքում բռնարարը եղել է ամուսինը: Այս պատճառով ուղեցույցում երբեմն բռնարարի փոխարեն կարող է օգտագործվել ամուսին և բռնությունը վերապրած անձի փոխարեն՝ կին բառերը: Այնուամենայնիվ, ուղեցույցում տեղ գտած սկզբունքները կիրառելի են նաև բռնությունը վերապրած տղամարդկանց, կին բռնարարների և ընտանեկան տարբեր հարաբերություններում ներգրավված այլ անձանց նկատմամբ:

Ուղեցույցում գործածվում են ինչպես «բռնությունը վերապրած», այնպես էլ՝ «բռնության ենթարկված» և «տուժած» եզրույթները, որոնք վերաբերում են մասնագիտացած ծառայությունների կարիք ունեցող անձանց: «Բռնության ենթարկված անձ» կամ

1. Ամենաթիվ ինթերնեշնըլ, Հայաստան, «Լռությունը հայարտության նշան չէ, պայքար ընտանիքում տեղ գտած բռնության դեմ» (2008թ.), Երևան, Ամենաթիվ ինթերնեշնըլ իրապարակություն

2. Հայաստանում ընտանեկան բռնության հետազոտություն, (2011). [Հետազոտություն], Երևան, հայերեն, ԵԱՀԿ

«բնությունից տուժած» եզրույթն օգտագործվում է, որպեսզի ցույց տա, թե ինչ խորը տառապանք ու վիրավորանք է ընտանեկան բնությունը հասցնում ընտանիքի անդամներին՝ հատկապես երեխաներին: Մյուս կողմից՝ «բնությունը վերապրած անձ» եզրույթը ցույց է տալիս մեր օգնությանը դիմած անձանց կամային առանձնահատկությունները՝ ինքնագործությունը, հնարամտությունը, բազմակողմանի կարողությունները, ներքին կամքը՝ հաղթահարելու անսկարագրելի խոչընդոտներ ու տրավմա: Այս առանձնահատկություններն են, որոնք մենք ջանում են լրացնել ու սնել մեր ծառայությունների միջոցով:

II. ԻՆՉ Է ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅՈՒՆԸ

- ա. Բռնության տեսակները
- բ. Ընտանեկան բռնարարքների դրդապատճառները
- գ. Բռնության շղթան
- դ. Ընտանեկան բռնությանն առնչվող փաստեր
- ե. Ընտանեկան բռնությունը Հայաստանում.
մշակութային առանձնահատկություններ



Բռնությունը գործողություն է, որի նպատակն է անձին ուժի և վնաս հասցնելու միջոցով ենթարկեցնել մեկ ուրիշի կամքին: Բնավ պարտադիր չէ, որ բռնությունը լինի ֆիզիկական: Մասնավորապես ընտանեկան բռնությունը կրկնվող վարքագիծ է մտերիմ անձի նկատմամբ՝ նրան վերահսկելու նպատակով: Ընտանեկան բռնություն կիրառողներն իրենց գոհերին և երեխաներին վերահսկելու բազմատեսակ մեթոդներ ու ռազմավարություններ են կիրառում: Մասնավորապես՝

II ա. Բռնության տեսակները

-  **Էմոցիոնալ բռնություն** – վերբալ (խոսքային) բռնություն, ստախոսություն, ինքնազնահատականի նսեմացում, ծայրահեղ խանդ, անձի գործողությունների վերահսկում, սպառնալիքներ:
- Էմոցիոնալ բռնության մեջ է մտնում մշակութային բռնությունը կամ այլ կերպ ասած՝ ինքնության նկատմամբ ոտնձգությունը, այսինքն՝ այնպիսի արարք, որը անձի սեռը, ռասան կամ էթնիկ պատկանելությունը, դասակարգը, տարիքը, քաղաքացիական կարգավիճակը, կրոնը, մարմնի չափերը, ֆիզիկական ունակությունները, սեռական կողմնորոշումը կամ մայրենի լեզուն օգտագործում է նրա իսկ դեմ: Այդպիսի օրինակներից են՝ ստիպել անձին կատարելու գործողություններ «քանի որ նա կին է» կամ անձին ասել՝ «ոչ ոք քեզ չի օգնի այս երկրում, քանի որ դու նույնասեռական ես/հաշմանդամ/լեզու չգիտես և այլն»:

-  **Ֆիզիկական բռնություն** – հրել, հարվածել, ապտակել, ծեծել, խեղդել, խլել անձին անհրաժեշտ դեղամիջոցները, զրկել քնից, մեկուսացնել: Հաճախ բռնության էմոցիոնալ և ֆիզիկական տեսակներն իրար զուգակցում են: Էմոցիոնալ

բռնության տեսակ է համարվում նաև ֆիզիկական կամ սեռական բռնության ենթարկվելու վախը:

Սեռական բռնություն – բռնաբարություն, հարկադրանք ենթարկվելու այլ անձանց հետ սեռական ակտի մեջ, գիտակցաբար անձին ենթարկել սեռական ճանապարհով փոխանցվող վարակի/ հիվանդության վտանգի կամ անձին իր կամքին հակառակ ականատես դարձնել անցանկալի սեռական բնույթի պատկերների կամ գործողությունների:

Տնտեսական բռնություն – դրամի և ռեսուրսների վերահսկում կամ խլում, կողոպտում, միտումնավոր միջամտություն անձի զբաղվածության հարցերում, նվաստացում ֆինանսական հողի վրա և հարկադրանք, որպեսզի բռնության ենթարկված անձը շարունակաբար կախվածության մեջ լինի բռնարարից՝ նույնիսկ այնպիսի տարրական իրերի հարցում, ինչպիսիք են՝ հացը, օճառը, մանկական տակաշորերը, դեղամիջոցները և այլն:

Բռնության տարբեր տեսակներ կարող են գործի դրվել միաժամանակ կամ առանձին: Թեև ֆիզիկական բռնությունը թվում է, թե բռնության ամենատեսանելի տեսակն է, բռնության այլ տեսակների պարբերական կիրառումը ստեղծում է բռնության շատ ավելի մեծ համակարգ: Բռնարարները բռնության այս տեսակները կիրառում են «իրենց ուզածին հասնելու» համար կամ բռնության ենթարկվածին ցույց տալու, թե «ով է դրության տերը»: **Այլ կերպ ասած, բռնության նպատակը իշխանություն ու վերահսկողություն հաստատելն է. ընտանեկան բռնության հիմնական երկու շարժառիթները:** Ստորև բերված պատկերում բռնի ու ստորացուցիչ վարքի բոլոր այն տեսակների սպեկտրն է, որոնք կարող են զուգորդվել ֆիզիկական կամ սեռական բռնարարի ժամանակ: Թեև դրանք ավելի դժվար է նկատել, սակայն դրանց միջոցով հնարավոր

Է հարաբերության մեջ հաստատել սպառնալիքի և վերահսկողության կրկնվող վարքագիծ, ինչը հոգեբանական երկարատև բացասական հետևանք է ունենում:



Պատկեր 1 – Միջազգայնորեն ընդունված «իշխանության և վերահսկողության անիվ», որը ցույց է տալիս, որ ընտանեկան բռնության դրդապատճառը բռնարարի կողմից ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ և ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ հաստատելու ցանկությունն է

Ալկոհոլի մասին

Շատերը կարծում են՝ խմելն ընտանեկան բռնության պատճառն է: Բռնության ենթարկվածները հաճախ համարում են, թե բռնարարներն առավել բռնի են կամ բռնի են միայն ալկոհոլ օգտագործելու ժամանակ: Սակայն վերահսկող վարքագիծն այս դեպքերում առկա է, նույնիսկ եթե բռնարար անձը խմած չէ: Բռնարարների ռեաբիլիտացիայի մասնագետները փաստում են, որ նույնիսկ հարբած վիճակում բռնություն գործադրողները գիտակից որոշումներ են ընդունում, թե ինչպես և երբ գործադրել բռնությունն իրենց զուգընկերների հանդեպ: Այդ որոշումները գիտակցված և միտումնավոր են: Հայտնի է, որ ալկոհոլի ազդեցության տակ անձի մոտ իրականության և ուրիշին վերահսկելու զգացողությունը կարող է խաթարվել այն աստիճանի, որ նա իրեն ավելի անարգել զգա հարբած վիճակում և ալկոհոլն օգտագործի որպես բռնության արդարացում: Այդուհանդերձ, թեև ալկոհոլ օգտագործելը կարող է խնդիրը բարդացնել, ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն ընտանեկան բռնության պատճառը չէ: Պատճառն, ինչպես գրվել է վերևում, ցանկությունն է վերահսկել մտերիմ անձին և իշխանություն հաստատել նրա նկատմամբ, որն էլ բխում է գենդերային կարծրատիպերի ծայրահեղ զգացումից:

II բ. Ընտանեկան բռնարարների դրդապատճառները

Ընտանեկան բռնության ընթացքը տարբերվում է բռնության այլ տեսակների ընթացքից, քանի որ բռնարարքը տեղի է ունենում մեկի կողմից, ում բռնության ենթարկվածը սիրում է կամ վստահում: Այսպիսի բռնարարքը երկարատև կրկնվող վարքագծի մի մասն է, այդպիսով ստեղծելով տարբեր հանգամանքներից բխող կախվածություն, որը դժվարեցնում է բռնության ենթարկված անձի կողմից հեռանալը:

Ընտանեկան բռնությամբ պարուրված հարաբերություններն անմիջապես չեն սկսվում բռնությամբ, ընտանեկան բռնությունն իր ծանրությամբ աճում է ժամանակի ընթացքում: Բոլորովին տարօրինակ չէ, որ ընտանեկան բռնության վերաճած հարաբերությունները սկսված լինեն որպես առողջ ու երջանիկ հարաբերություններ:

Իրականում, բռնության խորության այս աճն է, որ բարդացնում է բռնության ենթարկվածի զգացմունքները բռնարարի նկատմամբ և դժվար դարձնում նրան լքելը կամ այլոց աջակցությանը դիմելը:

Վկայություն 1

«Մեր ամուսնություն սկզբում ամեն ինչ նորմալ էր, իրար շատ էինք սիրում: Չեմ հիշում՝ կոնկրետ երբ սկսվեց, բայց նա անտեղի նյարդայնանում ու տրամադրությունը զգում էր: Ամեն ինչ փորձում էի անել նրա ուզածը կատարելու համար, բայց ոչինչ կարծես չէր ստացվում: Մտածում էի, որ հենց երեխա ունենանք, մեզ դա կմերձեցնի, բայց երբ հղի էի, ինձ վրա շատ ուժեղ զայրանում էր, ասում էր, որ միայն երեխայի մասին եմ մտածում: Սկսեց ինձ հարվածել, նույնիսկ փորիս էր հարվածում: Շատ տխուր էի ու վախեցած, որ երեխային կկորցնեմ, բայց հանկարծ տուն էր գալիս ծաղիկներով ու ներողություն խնդրում: Նրան սիրում էի, ու երբ ներողություն էր խնդրում, հավատում էի իրեն: Կարծում էի, թե ամեն ինչ կհարթվի, բայց ավելի ու ավելի վատ էր դառնում: Տարիների հետ ծեծը ավելի ու ավելի ուժեղանում էր ու հաճախակի դառնում: Չգիտեի՝ ինչու էր ինձ ծեծում, փորձում էի հասկանալ, բայց կարծես միշտ մի անսպասելի բան կար, որից նա հանկարծ պայթում էր: Չեմ կարողանում հիշել: Մի անգամ այնքան ուժեղ էր ծեծել, որ չէի կարողանում խոսել, շրթունքներս ու աչքերս ուռել էին: Սկսեց աղաչել, որ ներեմ իրեն, ասաց, որ կփոխվի, որոշ ժամանակ ինձ չափազանց լավ էր վերաբերվում, երեխաներին նվերներ էր

բերում, տանը օգնում էր: Մտածում էի՝ միգուցե վախեցել է, որ կարող էր ինձ սպանած լինել կամ ես իրենից կհեռանայի: Նույնիսկ սկսեցի իրեն խղճալ, որովհետև շատ էր իրեն կորցրել: Իսկ ես չգիտեի, թե ինչ անեմ, ամաչում էի որևէ մեկին մի բան ասել: Մտածում էի հեռանալու մասին, բայց ո՛չ փող ունեի, ո՛չ էլ գնալու տեղ: Մտածում էի, որ երեխաներին հայր է պետք: Բայց նրանք էլ էին վախեցած: Մեծ աղջիկս հինգ տարեկանում սկսեց գիշերները տակն անել: Զգում էի, որ հորից շատ է վախենում: Հույս ունեի, որ գոնե վերջին ծեծը իրոք վերջինը կլինի, բայց կարծես ամեն ինչ նորից էր սկսվում: Նրա բարիությունը չքացավ, զոռով սեռական գործողություն էր անում՝ նույնիսկ երբ ես ինձ լավ չէի զգում, մի անգամ էլ՝ նույնիսկ բարձր տաքություն ունեի: Մի օր էլ՝ ինը տարվա ամուսնությունից հետո սպառնաց, որ կսպանի ինձ, խոհանոցից դանակը վերցրեց ու պահեց վրաս: Մտածում էի, թե կմեռնեմ: Ու հենց այդ պահին գիտակցեցի, որ պետք է հեռանամ: Նա անկառավարելի էր դառնում, իսկ ես չգիտեի ինչ կկատարվի հաջորդ քայլին: Մինչև հիմա հիշում եմ, թե ինչպես եմ իրեն սիրել, երբեմն իրոք զգում եմ դա:

– Անահիտ, 33 տարեկան

Անահիտի պատմությունը ցույց է տալիս, որ բռնությունը հաճախ շատ ավելի բարդ հարաբերությունների մաս է կազմում, որտեղ կան դրական ու սիրալիր պահեր, որոնք շփոթեցնում և շահարկում են բռնության ենթարկված կանանց: Գործողությունների այս շղթան արձանագրվել է բազմաթիվ անգամներ և հետևյալ տեսքն ունի:

II գ. – Բռնության շղթան

🕸 Լարվածության աճի փուլ: Լարվածությունը սկսում է ստեղծվել փողի, երեխաների, աշխատանքի հարցերից: Այս պահին սկսվում է վերբալ բռնությունը:

Բռնության գոհը սկսում է իրավիճակը հարթել բռնարարի ուզածն անելով, նահանջելով, նրանից խուսափելով: Չի ստացվում: Վերջնական արդյունքում՝ լարվածությունը հասնում է իր գագաթնակետին, որտեղ սկսվում է ֆիզիկական բռնությունը:



Պայթյունավտանգ իրավիճակ: Սկսվում է ֆիզիկական բռնությունը: Դրա համար խթան է հանդիսանում որևէ արտաքին իրադարձություն կամ բռնարարի էմոցիոնալ վիճակը և ոչ թե բռնության ենթակվածի վարքագիծը: Սա նշանակում է, որ ծեծի միջադեպը կարող է անկանխատեսելի և բռնության ենթարկվածի վերահսկողությունից դուրս լինել:



«Մեղրամիսի» փուլ: Բռնարարն ամաչում է իր վարքից, խղճի խայթ է զգում, փորձում է թեթևացնել իր բռնարար վարքագիծը, մեղքը բարդում է կողակցի վրա: Կարող է նույնիսկ ներողություն խնդրել, դրսևորել սիրալիր, բարի, առատաձեռն, աջակցող վարքագիծ: Կարող է նույնիսկ անկեղծորեն համոզել կողակցին, որ նման բռնարարք չի շարունակվի: Նման վարքագծի շնորհիվ կողակիցների միջև կապն ամրապնդվում է կամ դրդում է բռնության ենթարկվածին համոզվել, որ հարաբերությունն ընդհատելն անհրաժեշտ չէ: Սա բռնության ենթարկվածների համար ամենավնասակար փուլը կարող է լինել, քանի որ «լավ ժամանակների» հույս է ներշնչում ու առաջ բերում էմոցիոնալ կախվածություն բռնարարից: Այս փուլը վնասակար է նաև երեխաների համար, քանի որ դրանում տեղ են գտնում ծնողների մասին շփոթեցնող ու տրամազծորեն հակառակ պատկերներ, որտեղ սերը հավասարեցված է բռնությանը:

Այս փուլերի տևողությունը կարող է լինել ժամեր, օրեր, ամիսներ կամ տարիներ: Տարբեր հարաբերություններում դրանք տարբեր տևողություն կարող են ունենալ, իսկ

«Մեղրամսի» փուլը կարող է զարգանալ հարաբերության ընթացքում ու ժամանակի ընթացքում ավելի ու ավելի կարճանալ: Բռնարարները կարող են իրենց տարբեր կերպ դրսևորել: Մի պահ՝ բռնի, մեկ այլ պահի՝ հոգատար ու գորովալից: Տան պատերից դուրս նրանք հաճախ բռնության նշաններ ցույց չեն տալիս, այնպես որ մարդիկ դժվարությամբ են հավատում, որ տանը նրանք կարող են բռնություն գործել: Երբեմն էլ բռնությանը կարող են ականատես լինել ընտանիքի այլ անդամներ ու ընկերներ, կարող են նույնիսկ՝ նպաստել բռնությանը կամ թույլ տալ դրա շարունակությունը՝ վախենալով բարձրաձայնել: Հաճախ են դեպքերը, երբ ընտանիքի անդամները և/կամ ընկերները օգնության չեն հասնում՝ մեղքը բարդելով տուժածի վրա:

Վկայություն 2

Գայանեի ամուսնության 15-րդ տարին էր, արդեն երկու երեխա ուներ: Դեռ երբ նոր էր ամուսնացել, դադարեցրեց վարսավորի իր աշխատանքն ու դարձավ երեխա խնամող մայր: Այդ ժամանակվանից ամուսինը սկսեց ծեծել նրան: Երբ ամուսինը ծեծում էր հղի վիճակում, վախենում էր չնվաժ երեխայի համար, դրա պատճառով այդ շրջանում փորձում էր չբարկացնել նրան: Փորձում էր նրա ուզածը միշտ անել, լինել լավ կին, բայց կարծես ոչինչ ամուսնուն չէր գոհացնում: Նա կարող էր Գայանեին ծեծել ասենք՝ տունը լավ չմաքրելու կամ ուտելիքը ժամանակին չպատրաստելու համար՝ անկախ նրանից, թե որքան շուտ էր նա այդ գործերն արել: Ծեծում էր առանց պատճառի: Երբ Գայանեն մորը պատմեց, մայրն ասաց, որ պետք է փորձի չբարկացնել ամուսնուն, որ իր պարտականությունն է ընտանիքն ամուր պահել: Ասաց, որ նա լավ հայր է, տունը պահող է, պիտի այդքան լավ ամուսնուց չբողոքի: Ամուսինը սկսեց խմել, ու ծեծերն ավելի սարսափելի էին դառնում, երբ նա խմում էր: Շուտով դարձավ ահավոր խանդոտ, թույլ չէր տալիս որևէ մեկի հետ

առանձին խոսել կամ տնից դուրս գալ, նույնիսկ՝ ծնողներին այցելել: Վիրավորական արտահայտություններ էր անում, անվանում՝ «գեշ կով», ասում, որ բանի պետք չէ, նորմալ ոչինչ չի կարողանում անել: Եթե արձագանքում էր, ծեծում էր, դրա պատճառով Գայանեն դադարեցրեց պատասխանել: Շատ դժբախտ էր իրեն զգում, բայց չէր ուզում երեխաներին թողնել, չէր ուզում նաև երեխաներին իր հետ տանել, որ առանց հոր չմնան: Անգոր էր իրեն համարում որևէ բան դեպի լավը փոխելու: Կային ժամանակներ, երբ ամուսինն իրար հետևից այնպես էր ծեծում ու նույնիսկ վախենում էր կենդանի չմնալ: Մի անգամ փորձեց ծնողների մոտ վերադառնալ, բայց ծնողները մեղադրեցին երեխաներին առանց հոր, առանց փողի թողնելու, իրենց ընտանիքն՝ ամոթով անելու մեջ: Ինչ կասեին հարևանները: Կամ ինչպե՞ս էր ապահովելու երեխաների ապրուստը: Ծնողները Գայանեին իրենց տանը չպահեցին: Իրավիճակն անտանելի էր դառնում, ու մի օր Գայանեն երեխաների հետ եկավ կանանց ապաստան:

– Գայանե

Գայանեի ու Անահիտի պատմությունները տիպիկ են, դրանց օրինակներով կարելի է հստակ տեսնել ընտանեկան բռնության ընթացքն ընդհանրապես ու հատկապես՝ Հայաստանում: Այս պատմությունները ցույց են տալիս, թե որքան դժվար է բռնության ենթարկված կնոջ համար հեռանալ բռնարարից:

II դ. – Ընտանեկան բռնության առնչվող փաստեր

 Ընտանեկան բռնության է ենթարկվում յուրաքանչյուր չորս կնոջից մեկը (Ամենսթի ինթերնեշնլը կազմակերպության հետազոտության արդյունքները՝ կատարված Հայաստանում և

համադրելի համաշխարհային վիճակագրության հետ): Իրավիճակը բարելավվում է այն երկրներում, որտեղ ընտանեկան բռնությունը կանխարգելող օրենքներ ու մեխանիզմներ են կիրառվել:

 Ընտանեկան բռնությունը տեղ է գտնում բոլոր դասակարգերի, կրոնների, սեռական կողմնորոշման մարդկանց շրջանում: Այն նույնչափ լուրջ խնդիր է հարուստների, կրթվածների, կրոնապաշտների և նույնասեռականների ընտանիքներում:

Թեև ոմանք համարում են, թե բռնությունը տեղի է ունենում միայն ցածր եկամուտներով ընտանիքներում, փաստն այն է, որ Հայաստանում բարեկեցիկ ընտանիքներից սերած, նույնիսկ՝ աշխատատեղ և բարձրագույն կրթություն ունեցող կանայք կարող են ենթարկվել բռնության և ավելի խիստ վերահսկողության տակ գտնվեն, քանի որ ամուսնու ընկերական և բարեկամական կապերը կարող են ապահովել, որ իրենց պաշտոնների չարաշահմամբ նրանք թաքցնեն տղամարդու բռնությունը:

 Ընտանեկան բռնությունը պահի տակ հավասարակշռությունից դուրս գալու իրավիճակ չէ, ոչ էլ՝ պատահական ապտակ կամ անլուրջ հարված: Ընտանեկան բռնությունը վերահսկող ու բռնարար վարքի կրկնվող մոդել է՝ լրջագույն հետևանքներով: Անկախ նրանից, թե բռնարարքը տեղի է ունենում ամեն օր, ամիսը մեկ անգամ, թե տարին մեկ անգամ, այն միևնույն է՝ ընտանեկան բռնություն է համարվում: Երբ կիրառվում է նաև հոգեբանական կամ տնտեսական բռնություն, այն սովորաբար մշտական է լինում, որի նպատակն է բռնության ենթարկվածին նսեմացնել, ոչնչացնել նրա ինքնագնահատականն ու ինքնավստահությունը, բարձրացնել նրա նկատմամբ վերահսկողությունը:




Բռնարարները մեզ կյանքում ամեն օր հանդիպող նորմալ մարդիկ են: Նրանք հազվադեպ են անձնային կամ հոգեկան առողջության խախտումներ ունենում: Փոխարենը՝ բռնարարներն իրականում հիմնալի կերպով կարողանում են մանիպուլացնել մարդկանց, հմայիչ են, նրանց հեշտ է հավանելը, ինտիմ հարաբերություններից դուրս բռնություն չեն կիրառում: Սա շփոթեցնող տպավորություն է թողնում տան նիստուկացի անտեղյակ մարդկանց մոտ, և նրանք կարող է չհավատան բռնության ենթարկվածին:



Բռնարարքը, սակայն, նորմալ Չէ: **Բռնարարքը ձեռքբերովի վարքագիծ է և ոչ թե «բնական»**

հակազդեցություն արտաքին որևէ միջադեպի:

Բռնարարները հստակորեն գիտակցված որոշումով են միջադեպին արձագանքում բռնությամբ: Նրանք լիովին գիտակցում են, թե ինչ են անում, սակայն հերքում են բռնարարքի տեղի ունենալը և մեղմում դրա թողած հետևանքները: Նրանք իրենց բռնարար վարքագծի համար, որպես կանոն, մեղադրում են բռնության ենթարկվածին կամ այլ մարդկանց: Բռնարարներն ամբողջությամբ չեն ընդունում, որ սխալ բան են արել և լիովին պատասխանատվություն չեն վերցնում իրենց գործողությունների համար: Բռնարարները կարող են նույնիսկ ստել և բռնության ենթարկվածին մեղադրել՝ ասելով, որ նա հոգեկան հիվանդ է կամ



Մարո Գուլյանի ընտանիքը սգում է ընտանեկան բռնության զոհ դարձած Մարոյի մահը, որը բռնարար ամուսինը ներկայացրել էր որպես ինքնասպանություն:

թմրամոլ: Նույնիսկ սպանությունների դեպքում բռնարարները Հայաստանում փորձել են ներկայացնել, թե իբր իրենց կանանց հետ դժբախտ դեպք է տեղի ունեցել կամ նրանք ինքնասպանություն են գործել:

 Բռնության խնդիրը ՉԻ լուծվի առանց օժանդակության: Եթե բռնարարներն իրենց գործողությունների համար պատասխանատվության չենթարկվեն, նրանց գործողությունները չեն փոխվի: Բռնարարներն ու բռնության ենթարկվածները պետք է օգնություն ստանան առանձին վայրերում, քանի որ փորձը ցույց է տալիս, որ բռնություն պարունակող հարաբերություններում բարկության վերահսկման ու ամուսնական խորհրդատվության ծառայությունները ավելի են վտանգում բռնության ենթարկվածներին:³ Բռնության դեպքում լուծում ԵՐԲԵՔ չի կարող լինել ամուսնությունը կամ երեխա ունենալը: Ակնհայտորեն այդ վարքագիծը չի նվազեցնում բռնության հավանականությունը, ինչպես կարելի էր ենթադրել, այլ ընդհակառակը՝ ամուսնությունը և երեխաների առկայությունը բարձրացնում են բռնարարի կողմից վերահսկողության մակարդակը, քանի որ բռնության ենթարկվածն ավելի մեծ կախվածության մեջ է հայտնվում բռնարարից:

Վերահսկող ու բռնարար վարքագիծը չի արտահայտվում միայն ինտիմ հարաբերություններում, այն կարող է արտահայտվել նաև տարեց հոր նկատմամբ տղայի վարքագծում կամ հարսի նկատմամբ՝ սկեսրոջ վարքագծում կամ հաշմանդամություն ունեցողի նկատմամբ՝ ընտանիքի որևէ այլ անդամի վարքագծում: Երբեմն ինտիմ հարաբերությունում բռնությունը կարող է դրսևորվել ինչպես կողակցի, այնպես էլ՝ նրա հարազատների կամ ընկերների կողմից միաժամանակ:

3. Հաֆֆին, «12 պատճառ, թե ինչու խորհուրդ չի տրվում իրականացնել խորհրդատվություն զույգերին, երբ առկա է ընտանեկան բռնություն» [գրքույկ], Փորթլանդ, Օրեգոնի Ընտանեկան և սեռական բռնության դեմ կռավիցիա

✚ Բռնարարքը երկարատև հոգեբանական հետք է թողնում բռնության ենթարկվածների՝ հատկապես երեխաների վրա: Բռնության մեջ մեծացող երեխաներն ավելի հակված են փախչել տնից, բռնության դիմել, քրեական վարքագիծ դրսևորել, հոգեբանական խանգարումներ ունենալ, չարաշահել ակոհոլ կամ թմրանյութեր:⁴ Բռնության մեջ մեծանալը շատ ավելի բացասական հետևանքներ ունի, քան այնպիսի ընտանիքում, որտեղ հայրը ներկա չէ:

Բռնարարքը վարքագիծ է, որը ձեռք է բերվում ընտանիքում կամ հասակակիցներից և ծառայում է հարաբերություններում բռնությամբ հարցեր լուծելուն: Ընտանեկան բռնությունն անցյալից եկող ժառանգություն է, սակայն այն տեղ չի կարող ունենալ մերօրյա հասարակությունում: Անհրաժեշտ է կրթել հասարակությանը և ստեղծել ծրագրեր, որոնք կբարելավեն ընտանեկան բռնության ենթարկվածներին տրամադրվող ծառայությունները:

Բռնության հետևանքները

✚ Ընտանեկան բռնության ենթարկված կանանց մոտ սրտի կաթված և սրտային հիվանդություններ ստանալու հավանականությունը համապատասխանաբար 80%-ով և 70%-ով ավելի մեծ է, քան ինտիմ հարաբերություններում բռնության չենթարկված կանանց մոտ: Համապատասխանաբար 60%-ով և 70%-ով ավելի մեծ է նաև հավանականությունը, որ նրանց մոտ կզարգանա ասթմա և ակոհոլային կախվածություն:

4. Ֆելլիտի և այլք, «Մեծահասակի առողջական վիճակի հարաբերությունը մանկության ժամանակ տեղի ունեցող բռնության և ընտանիքի դիսֆունկցիայի միջև», Կանխարգելիչ բժշկության ամերիկյան ամսագիր, համար 14, 1998, 245-258



1995թ. հաշվարկների համաձայն՝ Միացյալ Նահանգներում կողակցի կողմից բռնաբարության, ֆիզիկական հարձակման, հետապնդման արդյունքում առաջացած դրամական ծախսը շուրջ 5.8 միլիարդ ԱՄՆ դոլար է յուրաքանչյուր տարի՝ հաշվի առնելով, թե որքան է ծախսվում անմիջական բուժօգնության և հոգեբանական ծառայությունների վրա, ինչպես նաև՝ որքան կորուստ է տեղի ունենում վարձու աշխատանքում և տնային աշխատանքներում արդյունավետության պակասը։*

Բռնարարները ցանկանում են իրենց մտերիմին վերահսկել, իշխանություն բանեցնել նրանց նկատմամբ, դարձնել նրանց կախյալ։ Սա նրանց տալիս է ուժեղ լինելու զգացողություն։ Կան մարդիկ, ովքեր համարում են, թե եթե տղամարդը լավ վաստակող է, աշխատասեր, հոգում է ընտանիքի ծախսերը, նրա կողմից մերթընդմերթ կիրառվող բռնությունը դեռ չի նշանակում, որ նրա ընտանիքը երջանիկ չէ։ Սակայն բռնությունը կարող է ճակատագրական դառնալ, նույնիսկ եթե դա տեղի ունենա մեկ անգամ։ Առողջ է այն հարաբերությունը, որում ամուսինները հարգում են իրար, փոխադարձաբար հոգատարություն ու սեր են դրսևորում, իրենց հարաբերությամբ օրինակ ծառայում երեխաներին։ Բռնությունը քանդում է ընտանիքները և ահռելի հոգեբանական սպիթոդնում երեխաների ու բռնության մյուս ականատեսների վրա։

Միայն ինտիմ հարաբերություններում չէ, որ կարող է դրսևորվել վերահսկող, բռնի վարքագիծ, այն կարող է արտահայտվել տղայի կողմից՝ տարեց հոր նկատմամբ, սկեսրոջ կողմից՝ հարսի նկատմամբ, ընտանիքի ցանկացած նդամի կողմից՝ հաշմանդամություն ունեցող հարազատի նկատմամբ։ Երբեմն բռնությունն ինտիմ հարաբերություններում կարող է նաև ուղեկցվել բռնարարի ձևողների կամ ընկերների կողմից բռնությամբ։

* Ծեծված կանանց ծառայություններ Ջըրսիում, Ընտանեկան բռնության վերաբերյալ Ձեռնարկ

II Ե. Ընտանեկան բռնությունը Հայաստանում. մշակութային առանձնահատկություններ

🎗 Հայաստանի հասարակությունը հայրիշխանական է, այսինքն՝ ավանդական մշակութային պատկերացումների պատճառով կանայք սովորաբար ստորադասվում են տղամարդկանց՝ իշխանություն ունենալու առումով: Ամուսնական կյանքում հայաստանցի տղամարդկանց սովորեցնում են են լինել կնոջ տերը, մինչդեռ կանանց՝ ամուսիններին հնազանդը: Կանանց նաև սովորեցնում են, որ իրենց ամենակարևոր դերը հասարակության մեջ օջախ պահպանողի կամ ընտանիքի ու տան հոգսը տանողի դերն է: Սա տղամարդկանց օժտում է ընտանիքում, այդ թվում՝ կանանց նկատմամբ վերահսկողի և որոշումներ կայացնողի բացառիկ իշխանությամբ, իսկ կանանց արժեքը բացառապես կապվում է տան հետ: Կանանց սովորեցնում են լինել լավ հայ կին, հնազանդ, ոմանց՝ նույնիսկ ներշնչում, որ նորմալ է, երբ տղամարդիկ իրենց չենթարկվող կանանց ծեծում են: Հասարակական նման դրվածքը խրախուսում է վերահսկելու և բռնանալու պրակտիկաները և չափազանց դժվարացնում հայաստանցի կանանց համար բռնարար հարաբերությունից դուրս գալը: Երեխաներին նույնպես ընտելացնում են այս գաղափարներին ու մայրերին ամոթանք տալիս, որ չլքեն ընտանիքը:

🎗 Երբեմն վերահսկող վարքագիծը ձեռք է բերվում շատ ավելի փոքր տարիքից, երբ հայկական ընտանիքներում տղաներից ակնկալվում է վերահսկել իրենց քույրերի նույնիսկ՝ մայրերի գործողություններն ու որտեղ լինելը: Տղաներին օժտում են բոլոր իրավունքներով ու սովորեցնում իշխանություն բանեցնել ու տիրություն անել:

Ավանդաբար երբ հայ կանայք ամուսնանում են, նրանք տեղափոխվում են իրենց ամուսինների տուն: Եթե գործադրվում է բռնություն, այն ավելի է բարդացնում կնոջ խոցելիությունը, քանի որ նա գտնվում է իր համար նոր վայրում, որտեղ բոլորն աջակցում են բռնարարին, իսկ ինքը մեկուսացված է իր մտերիմներից ու ընկերներից: Հայաստանում շատ է արժևորվում հարգանքը մեծերի նկատմամբ, հարսներից ակնկալվում է հնազանդ լինել սկեսրոջը, ով ենթադրաբար ավելի գիտակ է ու կրում է հարսին կրթելու ու տնտեսվարություն սովորեցնելու պարտականությունը: Սակայն մեր փորձը ցույց է տալիս, որ նման դրվածքը սկեսուրները երբեմն չարաշահում են ու դառնում իրենց հարսների համար էմոցիոնալ, տնտեսական ու ֆիզիկական բռնության նոր աղբյուր:

Խորհրդային տարիներին աշխատում էր ամուսնական զույգից յուրաքանչյուրը, մանկական խնամքն ամբողջությամբ անվճար էր, ի տարբերություն մեր օրերի, երբ տիրում է գործազրկության բարձր մակարդակ: Կանանցից ակնկալվում է մնալ տանն ու խնամել երեխաներին, իսկ տղամարդկանցից՝ դրամ վաստակել: Արդյունքում՝ ստեղծվում է իրավիճակ, երբ կանայք սկսում են իրենց ամուսիններից ֆինանսական կախվածության մեջ գտնվել: Այն իրավիճակներում, երբ առկա է բռնություն, կնոջ համար զուտ տեխնիկապես անհնար կարող է լինել հեռանալ բռնարարից:

Ամուսնալուծությունը կամ ընտանիքը թողնելն ամոթ է համարվում, նույնիսկ ընտանեկան անձնական խնդիրներն ընտանիքից դուրս քննարկելն է ամոթ համարվում, որի պատճառով բռնության

ենթարկված անձինք վարանում են օգնություն փնտրել նույնիսկ ամենալուրջ իրավիճակներում:



Ծառայություններն ընտանեկան բռնությունից տուժածների համար նոր գաղափար են, իսկ կառավարության և ոստիկանության կողմից այդ ծառայություններին որևէ օժանդակություն չի տրվում: Սա է պատճառը, որ տուժածները սովորաբար չեն էլ իմանում, որ գոյություն ունի օգնության հնարավորություն, կան թեժ գծեր, որոնցով կարելի է զանգահարել ու օգնություն ակնկալել:

III. ԻՆՉՊԵՍ ՀԱՍԿԱՆԱԼ ՃԳՆԱԺԱՄՈՒՄ ԳՏՆԿՈՂ ՏՈՒԺԱԾԻՆ

ա. Ինչու կիևը չի հեռանում բռնարարից

բ. Տրավմայի հոգեբանությունը

գ. Տրավմայի նշաններն ու ախտանիշները

դ. Հետևանքները երեխաների վրա





Եւ ընտանեկան բռնությունից տուժածները գտնվում են հարաբերությունը չընդհատելու հզոր ճնշման տակ, նրանց մեծ մասն ինչ-որ պահի դադարեցնում կամ փորձում է դադարեցնել հարաբերությունը՝ հուսալով ավելի լավ ու ապահով կյանք վարել, ինչպես նաև նման կյանք ապահովել իրենց երեխաների համար: Երբեմն նրանց կողակիցները փորձում են կանգնեցնել նրանց՝ վախեցնելով և նոր բռնությամբ: Բռնությունից տուժածները վախենում են նոր վրեժխնդրությունից:

Կարևոր է ընկալել, որ բռնությունից տուժած անձինք ոչ թե շարունակում են նույն ընտանիքում ապրել այն պատճառով, որ նրանց դուր է գալիս կամ անհրաժեշտ է բռնությունը, այլ քանի որ նրանք շարունակաբար հույս են տաժում, որ բռնությունը կդադարի ու շարունակում են նույն ընտանիքում ապրել, քանի որ ֆինանսական կախման մեջ են բռնարարից, չունեն այլընտրանքային ապրելու վայր, փորձում են ընտանիքը պահպանել: Նրանք մնում են բռնարարի հետ, քանի որ հույս ունեն, որ իրավիճակը կփոխվի:

III ա. Ինչու կինը չի հեռանում բռնարարից

Վախ (ամուսնու հետագա քայլերից) – «Ասաց՝ կսպանի ինձ», «Ինձ հետապնդելու է, ուր էլ՝ գնամ», «Իմ մասին վատ լուրեր է տարածելու», «Ասաց, եթե հայրական ընտանիք վերադառնամ, նրանց էլ է վնաս հասցնելու»:

Բռնարարի հետևանքներ – Դեպրեսիա, անշարժության զգացում, որոշումներ կայացնելու դժվարություն, այլընտրանքի բացակայության զգացողություն:

- Տնտեսական կախվածություն** – «Նա է դրամ վաստակում/դրամը պահում», «Երբեք աշխատանք չեմ ունեցել, հմտություններ չունեմ, ինչպես եմ ինձ ու երեխաներիս պահելու», «Ավելի լավ է ծեծվեմ, քան երեխաներս փողոցում հայտնվեն»:
- Բռնարարի նկատմամբ խղճմտանք** – «Ուրիշ ոչ ոք կողքին չկա, չեմ կարող թողնել իրեն», «Եթե թողնեմ իրեն, կյանքը կխորտակվի», «Մտահոգ եմ, որ կսկսի խմել», «Սպառնում է, թե ինքնասպան կլինի, եթե իրեն թողնեմ»:
- Երեխաներ** – «Երեխաներին հայր է պետք», «Տղաներին օրինակ է պետք», «Երեխաներն ինձ են մեղադրելու, եթե հեռանամ», «Եթե երեխաներին հետո տանեմ, նրանց առևանգելու է», «Երեխաներին ինձ երբեք չի թողնի, կապեր ու շատ փող ունի»:
- Գնալու տեղ չկա/մեկուսացում** – «Ինչպես կարող եմ դուրս գալ, նույնիսկ տնից թույլ չի տալիս դուրս գալ», «Թույլ չի տալիս, որ ընկերներ ունենամ, ո՞ւմ կանչեմ օգնության», «Մայրական ընտանիքս ասաց, որ իրենց հետ ապրել չեմ կարող», «Մերոնք էլ են նրանից վախենում», «Մեր շրջակայքում որևէ աջակցություն, ծառայություն չկա», «Ոստիկանությունից ասացին, որ իմ ընտանեկան խնդիրներն ինքս լուծեմ»:
- Ժառանգական կենսագրություն** – «Հայրս մորս ծեծում էր, ու նրանք չբաժանվեցին», «Ինձ ոչ ոք տիրություն չէր անում, մինչև ինքը հայտնվեց, նույնիսկ եթե ծեծում է, դա ավելի լավ է, քանի միայնակ լինելը»:
- Ամոթ** – «Եթե գնամ, մարդիկ կասեն, թե վատ ամուսին եմ/վատ հայ կին եմ/անբարոյական եմ/ընտանիքս քանդեցի/դժեցի ամուսնական երդումս», «Մարդիկ կբամբասեն»:



Սեր և հույս – «Նրան սիրում եմ», «Խոստացել է, որ կփոխվի», «Լավ բաներ էլ կան, չեմ ուզում դրանցից հրաժարվել»:

Քանի որ շատ դժվար է լինում բռնի իրավիճակից հեռանալը, մեր ծառայություններին հիմնականում դիմում են «կյանքի կամ մահվան» դեպքերում: Այստեղ՝ Հայաստանում, կարող է պատահել, որ բռնության ենթարկված կինը կարողանա միայն վերջին պահին դուրս պրծնել, այն էլ՝ վստահ լինելուց հետո, որ սա իսկապես կարող է իր մահով ավարտվել: Կինը Հայաստանում զոհը հաճախ փախչում է այն ժամանակ, երբ ինքը վստահ է, ար այս անգամ իրեն սպանելու է: Նա կարող է փախչել ընկերոջ կամ հարազատի մոտ ծեծի ընթացքում՝ առանց որևէ հստակ պլան ունենալու: Այդ հարազատներն են, որ նրանց բերում են մեր կենտրոն, երբ կանայք դեռ լիակատար շոկի վիճակում են: Ընտանեկան բռնությունից տուժածները մեր կենտրոններ են դիմում ճգնաժամի մեջ: **Նրանց հնարավոր լավագույն ծառայությունները մատուցելը նշանակում է՝ փորձել հասկանալ, թե իրենց հետ պատահածն ինչպես է ազդել նրա ուղեղի, մարմնի ու հոգեկան աշխարհի վրա:**

Քանի որ ընտանեկան բռնությունը Հայաստանում դեռևս առանձին հանցանք չի ճանաչվում համապատասխան օրենքի բացակայության պատճառով, ոստիկանությունը կարող է արձագանքել, կարող է նաև չարձագանքել կնոջ դիմումին՝ պաշտպանել նրան: Շատ են դեպքերը, երբ ոստիկանները չգիտեն՝ ինչ անել, քանի որ չկան համապատասխան կարգավորումներ, մեխանիզմներ ու պատրաստվածություն, որոնք կհուշեն, թե ոստիկանն ինչ գործողության պետք է դիմի:

III բ. Տրավմայի հոգեբանությունը

Բռնության ենթարկվածին ըմբռնելու համար, առաջինն անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ բան է տրավման:

Ընդունված էր մտածել, թե տրավման հոգեկան առողջության խնդիր է: Նեյրոկենսաբանության և տրավմայի թողած ֆիզիկական հետքերի հետազոտությունների առաջխաղացումը ցույց է տալիս, որ տրավման նյարդային համակարգի գերբեռնվածության արդյունքն է, որն իր ազդեցությունն է թողնում ողջ մարմնի վրա:⁵

Սովորաբար, մարդը հավասարակշիռ վիճակում է գտնվում: Նա ունի աուտոնյարդային համակարգ, որն օգնում է մեզ ակտիվանալ, երբ սթրեսի մեջ ենք և հանգստանալ, երբ ապահովության մեջ ենք: Մեզնից յուրաքանչյուրը կարող է հիշել իր փորձառությունից, թե ինչպես են այս նշաններն ի հայտ գալիս, երբ լարված ենք, նյարդային կամ վախեցած, և ինչպես է մեր մարմինը թուլանում, երբ սթերսն անհետանում է: Կարելի է հիշել քննություններ հանձնելու կամ վախ ապրելու պահերը, երբ ի հայտ են գալիս հետևյալ նշանները.

5. Էվերեթթ, Գ, Առաջին օգնություն տրավմայի դեպքում:
Մեթոդաբանություն և տեխնիկաներ [ձեռնարկ], Սանտա
Ֆե, Առաջին օգնություն տրավմայի դեպքում ՍՊԸ

Մարմինը ԼԱՐՎԱԾ Է (արագացնում է աշխատանքը)	Մարմինը ԹՈՒԼԱՑԱԾ Է (դանդաղեցնում է աշխատանքը սթրեսից հետո)
Շնչառությունն արագանում է (զլխապտույտ/շնչարգելություն է առաջանում)	Շնչառությունը դանդաղում է, շարժումները դանդաղում են, հոգնածություն է առաջ գալիս)
Արյան ճնշումը բարձրանում է	Արյան ճնշումն իջնում է
Սրտի աշխատանքն արագանում է (սրտխփոց, հիպերակտիվություն)	Սրտի աշխատանքը դադաղում է (դանդաղ բաբախյուն, հոգնածություն)
Քրտնարտադրության աճ (շոգածություն)	Քրտնարտադրության նվազում
Մկանների լարում	Մկանների թուլացում
Մարսողության համակարգի կանգ (մարսողության խանգարում) Թքարտադրության նվազում (բերանի չորացում)	Մարսողության աշխատանքի վերականգնում (քաղցի զգացողություն) Թքարտադրության աճ
Ուղեղի կոզնիտիվ ֆունկցիան անջատվում է (օր՝ տրամաբանումը) և թույլ տալիս, որ բնագոյային հակազդեցությունը զբաղեցնի տեղը (շփոթվածություն, ուշաթափություն, հիշողության կորուստ)	Ուղեղի կոզնիտիվ ֆունկցիայի վերականգնում

Աղյուսակ 1. Աուտոնյարդային համակարգի սիմպատիկ և
պարասիմպատիկ ֆունկցիաները: Աղապտացված է «Առաջին
օգնություն տրավմայի դեպքում» ձեռնարկից

Սթրեսի այս արձագանքները նման են այն նշաններին, որոնք կարելի է ապրել ավտովթարի կամ շան հարձակման ենթարկվելու դեպքերում: Նմանատիպ են նաև այն ռեակցիաները, որոնք ունենում են ընտանեկան բռնության ենթարկվածները՝ միակ տարբերությամբ, որ ընտանեկան բռնություն վերապրածի մոտ սթրեսը մշտական վիճակ է, նա դրանից չի կարողանում ձերբազատվել, քանի որ այն իր տանն է կատարվում: Սա նշանակում է, որ նրա աուտոնյարդային համակարգը երբեք չի հանգստանում: Սթրեսի նրա արձագանքները մշտական են ու բարդացված: Նա գտնվում է հավասարակշռության և գործունակության ցածր մակարդակում: Անհավասարակշռության այս վիճակը կարող է դառնալ քրոնիկ, նրա համակարգը կարող է գտնվել արագացված սթրեսի վիճակում («ակտիվացում») կամ ընկճված վիճակում («դանդաղում»), տևական կանգ է առնում պասիվ վիճակում:

Դեպք 1: «Ակտիվ վիճակ»

Անժելան գրասենյակ եկավ շատ ոգևորված: Շատ էր խոսում, լաց էր լինում պահ առ պահ, ասում էր, որ ամուսնու մոտ չի վերադառնա: Երբ պատմում էր իր պատմությունը, դժվար էր հետևել նրան, քանի որ խոսում էր անդադար, մի թեմայից մյուսն էր թռչում: Նույնիսկ երբ հարցեր էինք տալիս կամ փորձում նրբորեն խոսակցության ուղղությունը փոխել, նա անընդհատ շեղվում էր: Չէր ցանկանում դադարեցնել խոսելը: Երբ հասանք ապաստարան, շատ բարձր տրամադրություն ուներ, էներգիայով լի, մերթ ծիծաղում էր, մերթ լացում:

Դեպք 2: «Պասիվ վիճակ»

Հասմիկը մեր գրասենյակ եկավ քողջ ու ծնողների հետ: Մարմնին կապտուկներ կային, ցրված վիճակում էր, աչքերը կարծես դատարկ լինեին: Թմրած էր, բացարձակապես չէր

խոսում, չէր կարողանում կենտրոնանալ, մտքերը հավաքել, հայացքը կարծես մթազևած լիներ ու անջատված: Երբ բոլորն իր կողքին եռանդով խոսում էին, զգացվում էր, որ նա ավելի էր անջատվում իրականությունից: Կանանց աջակցման կենտրոնի աշխատակիցները նրան ուղեկցեցին առանձին սենյակ՝ օգնելու, որ նա թուլանա, ջուր առաջարկեցին, խորհուրդ տվեցին խորը շունչ քաշել մինչև որ գնահատում կատարվի: Բացատրեցինք, թե ինչ ծառայություններ ենք մատուցում ու զգուշորեն փորձեցինք նրանից տեղեկություններ ստանալ: Սակայն շատ արդյունքի չհասանք, քանի որ Հասմիկը չէր կարողանում նախադասությունները հստակորեն ձևակերպել կամ խոսակցությանը հետևել: Նա, սակայն, մեզ ասաց, որ վտանգի մեջ է և ցանկանում է ապաստան գնալ: Մենք անմիջապես կազմակերպեցինք, որ նա գնա այնտեղ: Մի քանի օր անց, երբ նա ավելի հանգստացած էր, կարողացանք զրուցել, թե ինչ էր նա ցանկանում անել՝ կապված դատական հայցերի հետ: Օրեր էին անցել, սակայն նույնիսկ ապաստարանում Հասմիկն անընդհատ քնի կարիք ուներ, ամբողջ օրը քնում էր, որևէ բան անելու էներգիա չուներ: Գլխացավերից էր բողոքում, ախորժակ չուներ: Նման վիճակում մենք անհրաժեշտ համարեցինք, որ փաստաբանը ներկա լինի քննիչի հետ հանդիպմանը, քանի որ նրա դանդաղ էր վերհիշում, ու նման իրավիճակում շատ հեշտ կլիներ նրա ասածները մանիպուլացնել կամ ճիշտ չհասկանալ իրեն :

III գ. Տրավմայի նշաններն ու ախտանիշները

Բռնությունը վերապրած անձի մոտ կարող էք նկատել հետևյալ նշաններից մի քանիսը, նույնիսկ այն պահերին, երբ նրանք ապահով վայրում են: Այս ախտանիշների երկարաձգված վիճակն է, որ վերաճում է տրավմայի: Տրավմայի մեջ գտվող բռնության ենթարկվածների մոտ կարող ենք նկատել հետևյալ նշանները: Ուշադրություն դարձրեք, թե ինչպես է սթրեսն ազդում մտքի, մարմնի ու ոգու վրա:

Էմոցիոնալ ախտանիշներ	Ֆիզիկական/վարքային ախտանիշներ
<u>Բարձր աստիճանի՝</u> Կատաղության/բարկության - Վախ - Տագնապի/պանիկայի նոպաներ (շնչարգելում - Տրամադրության տատանումներ - Հիպերակտիվություն <u>Շոկային արձագանքներ</u> Թմրածություն - Քարացածություն - Ապակոդմոորոշում - Ընկճվածություն Հուսալքություն	Գերհոգնածություն - Մարսողության խանգարում - Քրոնիկ գլխացավեր - Արյան բարձր ճնշում - Սրտխփոց - Քնի խախտումներ - Գերհոգնածություն/տնից դուրս գալու անկարողություն - Ռեգրեսիվ վարք - Պոռթկունություն - Ամեն ինչից՝ վեր թռչելը - Բարձր ռիսկային վարքագիծ - Թմրանյութերի/ակլիոլի չարաշահում
Կոգնիտիվ ախտանիշներ	Ներանձնային և միջանձնային ախտանիշներ
Տեղի ունեցածն ընկալելու, զգալու, ըմբռնելու անկարողություն - Մոռացկոտություն - Ապրումը բնութագրելու անկարողություն - Կենտրոնանալու դժվարություն/վազող մտքեր - Նոր բաներ սովորելու դժվարություն - Որոշումներ կայացնելու անկարողություն - Ապակոդմոորոշվածություն և շփոթվածություն - Մեղադրում ուրիշներին	<u>Ներանձնային</u> Ինքնամեղադրում/մեղքի զգացողություն - Ինքնավնասում <u>Միջանձնային</u> Խուսափողականություն Դիմադրություն - Մեկուսացում - Դեպրեսիա - Խզում ընտանիքից - Անվստահություն հարաբերություններում - Նոր ամուսնության կամ ամուսնալուծության արագ որոշում <u>Հավատքի/հոգևորի</u> Հավատքի կորուստ - Աստծո նկատմամբ բարկություն - Նոր հավատքի դավանանք կամ հավատքի խորացում

Սխալ դատողություններ գոհի մասին

Տրավմայի վերը նշված նշանները կարող են տուժածի հետ աշխատող սոցիալական աշխատողի կամ քննիչ ոստիկանի գործը դժվարեցնել: Բռնության ենթարկված անձինք հնարավոր է, որ չկարողանան հիշել կամ նկարագրել իրադարձություններ, դժվարանան կենտրոնացնել միտքը, անկարող լինեն որոշումներ ընդունել: Սրանք վիճակներ են, որոնք դժվարեցնում են վկայություն վերցնելու գործընթացը, նույնիսկ՝ անարժանահավատ դարձնում վկայությունը: Ուստի շատ կարևոր է հասկանալ, որ դրանք բռնության ենթարկվածների մոտ հաճախ հանդիպող նշաններ են, և ժամանակ պետք է անցնի, որպեսզի նրանք հաղթահարեն տրավման: Այս ընթացքում առանցքային նշանակություն ունի սոցիալական աշխատողի ուղղորդումը:

Բռնություն վերապրածների մոտ բռնությունից հետո մնում է վերահսկողության կորստի և ուժագուրկ լինելու զգացողություն: Բռնությամբ լի իրենց տներում նրանք իրենց անուժ են համարում դադարեցնելու բռնությունը և պաշտպանելու իրենց երեխաներին: Եթե նրանք թողնում են բռնարարին, հետո մեղքի ու անտարբերության զգացում են ունենում, որ չեն կարողացել հարաբերությունը հարթել ամուսնու հետ, որին միգուցե դեռ սիրում են: Այս զգացմունքներն ավելի են խառնվում, երբ հասարակության և մտերիմների կողմից ճնշումը բռնությունը բարդում է բռնության ենթարկվածի վրա: Ընտանիքի անդամներն ու ընկերները սկսում են կարծիքներ արտահայտել, թե ինչ նա պետք է աներ կամ չաներ, կարող էր կամ չէր կարող անել, արդունքում՝ զրույցից դուրս թողնելով բռնարարի պատասխանատվությունը: Անկախ նրանից՝ բռնության ենթարկվածները որոշում են մնալ բռնարար ընտանիքում, թե լքել այն, միևնույն է, ոչ մի որոշում նրանց ճիշտ չի թվում: Հարաբերությունն ընդհատելու դեպքում ուժագուրկ լինելու զգացողությունը սնվում է տագնապի ու լարվածության

զգացողությունից, որն էլ արդյունք է բնականոնության բացակայության: Նա թողնում է իր ամեն ինչը՝ տունը, ընտանիքին, ամենօրյա կյանքը, որպեսզի ապահովություն գտնի: Սա այն ժամանակն է, երբ մեզնից շատերն սկսում են շփվել բռնություն վերապրած անձի հետ, նրա կյանքի ամենադժվար պահերից մեկը: Ոմանք կարող են մերժել բռնությունն ու բարդ համարեն ձեզ այցելելու որոշումն ընդունելը: Ճնշված իրավիճակից՝ կինը կարող է լինել բարկացած, քեն պահող, բացասական, դրսևորի չհամագործակցող վարքագիծ: Ականատես կարող եք լինել տրամադրության տատանումների կամ աֆեկտային կտրուկ փոփոխությունների: Ամբողջ ընթացքում կարող է միտքը փոխել ու դժվարանա որոշումներ կայացնել: Բռնությունից գրեթե բոլոր տուժածներն իրենց են մեղադրում:

Տրավմայի նշանները ճանաչելն օգնում է մեզ հասկանալ, թե ինչ իրավիճակից է նա մեզ մոտ գալիս: Դա նաև օգնում է բռնություն վերապրածին բացատրել, թե տրավման ինչ հետևանքներ կարող է թողնել, քանի որ նա հնարավոր է՝ շփոթված ու վախեցած լինի իր մարմնի ու էմոցիաների նկատմամբ վերահսկողությունը վերագտնելու անկարողությունից: Տրավմայի նշանները ճանաչելն օգնում է նաև լրջորեն ընդունել բռնության եկթարկված անձին՝ անկախ նրանից, թե նա ինչպես է իրեն պահում, ծիծաղում է, թե՞ լալիս, սուիցիդալ է, թե՞ վրեժ է ցանկանում լուծել: Անշուշտ, մեզ համար շատ դժվար կարող է լինել գործ ունենալ անձի հետ, ով անընդհատ միտքը փոխում է, մոռանում իրեն արդեն փոխանցված տեղեկատվությունը: Աշխատանքը մեկի հետ, ով ցանկություն չունի համագործակցել, բոլորովին չի խոսում կամ խոսում է շատ ու անըմբռնելիորեն արագ, կարող է ձեր համբերությունը ստուգելու հնարավորություն լինել: Ընտանեկան բռնության սթրեսի հետևանքները շատ լուրջ են ու բարդ, ուստի լուծումներ գտնելը երբեմն կարող է նույնպես բարդ լինել: Ընտանեկան բռնություն վերապրածների հետ աշխատանքը պահանջում է համբերատարություն,

կարեկցանք, կարողություն չանձնավորելու տեղի ունեցածը: Այն պահանջում է մանրութների նկատմամբ ուշադրություն, ստեղծարարություն, անհատական հոգատարություն: Անկախ նրանից՝ տուժածն ինչպես է արձագանքում մեզ, բռնություն վերապրած բոլոր անձինք պետք է արժանանան մեր օգնությանը: Նման օգնությունը պրոֆեսիոնալ, կարեկից, հաջող կերպով տրամադրելն էլ ոգևորում է ինչպես մեզ, այնպես էլ՝ մեր այցելուին:

Տրավմայի հետ հարմարվելու նպատակով բռնության ենթարկվածները որդեգրում են պաշտպանվողական և մերժողական մեխանիզմ: Սա ակնհայտ է մեզ մոտ եկած բոլոր տուժածների դեպքում: Կարևոր է հասկանալ, որ պաշտպանվողական և մերժողական մեխանիզմները իրավիճակը հաղթահարելու մեխանիզմներ են: Այդ իսկ պատճառով բռնության ենթարկվածներին երբեք պետք չէ դատել կամ պիտակավորել:

Մերժողական և պաշտպանվողական մեխանիզմներ

Ստորև ներկայացված են զոհի կողմից որդեգրվող մերժողական և պաշտպանվողական մեխանիզմներ:

Խուսափում

Թեմային առնչվելիս՝ դրա շրջանցում, պատասխան չտալը, թեմայի հետ առճակատման չընդունում, պատասխանատվությունից հրաժարում՝ հեռանալով գրույցից և «հիմար» ձևանալով:

Մեղադրում

Բռնարարի գործողությունների համար ուրիշներին

մեղադրելը, օրինակ՝ «Բռնությունը հորից է սովորել, չի կարող փոխվել», «Սկեսուրս է նրան ստիպում այդպես վարվել»:

Արդարացում

Աընդհատ արդարացումներ փնտրելը, պատճառներ բերելը

Թերագնահատում

Մի բան իր իրական վիճակից սվագեցնել, օրինակ՝ «Ես ծեծված կիև չեմ, ինձ երբեք էլ չեն հարվածել»

Տեղափոխում

Բարկության արտահայտում մեկ ուրիշի նկատմամբ, քանի որ բարկության հիմնական աղբյուրի նկատմամբ դա չափազանց վտանգավոր կլինի, երեխաների, ընտանի կենդանիների ծեծ, գողգողոց

Մեկուսացում

Տանը մնալը, մարդկանց հետ շփումներից խուսափելը, տևից ընդհանրապես դուրս չգալը

Ներքնայնացում

Սեփական անձին մեղադրելը, ասելը, որ դա «իմ մեղքն էր», «Եթե ես ավելի լավ կիև լիների, նա չէր...»

Փախուստ

Փախուստ ճշմարտությունից, օրինակ՝ բնակավայրի փոփոխում, թմրանյութերի կամ ալկոհոլի չարաշահում, հեռուստացույցից կառչելը, անընդհատ աշխատելը, խաղամոլություն, գերսնվելը

Դիմադրություն

ճշմարտության և պատասխանատվության դեմ ըմբոստանալը, օրինակ՝ մարդկանց առաջարկներին, խորհուրդներին դիմադրելը

Ստախտություն

Նույնիսկ ճշմարտությունն իմանալու դեպքում, դրա մերժումն այլոց մոտ

Ազդեսիա

Վախեցնելը, հարձակվելը, սպառնալը, վերահսկելը կամ բռնանալը, որպեսզի մարդիկ նրա հետ ճշմարտությունից չխոսեն

Հարմարվողականություն

Ձևացնել, թե համաձայնվում է, երբ իրականում համաձայն չէ: Սրա շնորհիվ մարդիկ այլևս հարցականի տակ չեն դնում նրա վարքագիծը, օրինակ՝ խոստանում է ընտանիքի անդամներին/ ընկերներին, որ կզանգահարի ուստիկանություն կամ «հաջորդ անգամ» օգնության կդիմի, բայց չի անում

Մերժում

Ձևացնել, թե ոչինչ տեղի չի ունենում, օրինակ՝ «Միայն հանգստյան օրերին եմ ալկոհոլ օգտագործում, իրականում խնդիրներ չունեմ»:

Բանականության դերի չափազանցում

Հույզերի մերժում, կառչում բանականությունից, օրինակ՝ տեղի ունեցածին բարդ բացատրություններ տալը՝ առանց որևէ հույզ արտահայտելու:

III դ. Հետևանքները երեխաների վրա

Ընտանեկան բռնության միջավայրում ապրող փոքր երեխաները կարող են հետևյալ դժվարությունները կամ դրանցից մի քանիսն ապրել, սակայն երեխաներն այս խնդիրները կարող են նաև ունենալ տարբեր այլ պատճառներով և նման խնդիրները դրսևորող երեխաները կարող են նաև ընտանեկան բռնության ականատեսը եղած չլինել:

- 🔴 ֆիզիկական գանգատներ (գլխի, որովայնի ցավեր)
- 🔴 տաճնապ բաժանումից (ավելի բարձր մակարդակի, քան կարելի էր ակնկալել այդ տարիքում)
- 🔴 քնի խանգարումներ (վախ քնելուց)
- 🔴 ագրեսիվ վարքագծի և զայրացկոտ զգացմունքների շատացում (ինքն իրեն կամ ուրիշներին ֆիզիկապես վնասելը)
- 🔴 հավանական վտանգից մշտապես անհանգստանալը
- 🔴 նախկինում սովորածի թվացյալ կորուստ (զուգարանից օգտվելու, գույները ճանաչելու)
- 🔴 մեկուսացում մարդկանցից ու իրադարձություններից
- 🔴 որևէ բան անելու կամ զգալու հետաքրքրության պակաս
- 🔴 սիրելի մարդկանց ապահովության մասին չափազանցված անհանգստություն (քույր-եղբայրներին օրվա ընթացքում տեսնելու անհրաժեշտություն, անդադար մոր կարիքը զգալը, մայրիկի մասին անընդհատ հարցուփորձ)
- 🔴 որևէ գործ կամ առաջադրանք ընտրելու և ավարտելու դժվարություն
- 🔴 ակտիվության շատ բարձր մակարդակ, անհանգիստ շարժումներ և/կամ կենտրոնանալու դժվարություններ՝ երեխայի այդ տարիքի համար արտասովոր մակարդակի
- 🔴 Առաջադիմության ցածր մակարդակ, բացակայություն կրթարանից:

Ծնողներին առաջարկում ենք երեխային օգնելու համար դիմել բժշկի կամ ընտանեկան խորհրդատուի, երբ նա անում է հետևյալը՝

- 🔴 ուրիշ երեխաներին կամ մեծերին ֆիզիկական վնաս է հասցնում (օր.՝ մկրատով կտրտում է հագուստը, փողոցում պառկում է և այլն)
- 🔴 այնքան սուր են արտահայտված վերը նշված նշանները, որ խանգարում են երեխայի առօրյային և ընտելացմանը դպրոցում/ հատուկ ծրագրում
- 🔴 երեխային ուղղորդելու տարրական մոտեցումներին չի արձագանքում,
- 🔴 վերը նշված նշանները երկար ժամանակ չեն անցնում (3-ից 6 շաբաթ):

IV. ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՆՈՒԹՅԱՆ ԴԵՊԲԵՐՈՒՄ ՀԱՄԱԿԱՐԳԿԱԾ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆ

ա. Քնահատում/ընդունում

բ. Սպանության ռիսկի գնահատում

գ. Ապաստարան

դ. Անվտանգության պլան



Երբ ընտանեկան բռնություն վերապրած անձը դիմում է մեր ծառայություններին, նա արդեն ճգնաժամում է գտնվում: Նա վտանգավոր մի վիճակում է, որը պահանջում է պլանավորված, լավ իրագործված և համագործակցային միջամտություն: Սա նշանակում է ճգնաժամային միջամտության լավագույն պրակտիկաների ըմբռնում, ինչպես նաև ապահովություն ու օժանդակություն ապահովելու այնպիսի աշխատանք, որն արժևորում և խրախուսում է նրա կարծիքները, ուժեղ կողմերը, կարողությունները:

Երբ բռնության ենթարկված կինը գալիս է մեր կենտրոն ճգնաժամի մեջ և անհավասարակշիռ վիճակում, մենք պետք է հավասարակշռությունը վերականգնելու համար վերականգնենք հավասարակշռող գործոնները: Որոշ դեպքերում, հատկապես՝ ապաստան դիմող կանանց դեպքում, այս գործընթացը կարող է տևել օրեր, շաբաթներ և նույնիսկ՝ ամիսներ: Հավասարակշռող գործոններն են՝

Իրադարձության իրատեսական ընկալում

Շատ մարդիկ ներքնայնացրել են այն միտքը, թե ընտանեկան բռնությունն ընտանիքի մասնավոր խնդիրն է և/կամ բռնությունն իրենց հարաբերություններում նորմալ է: Միգուցե բռնություն տեղի է ունեցել իրենց հարևանների, ծնողների, ընկերների կամ բարեկամների հետ, այդ իսկ պատճառով նրանք թերագնահատում են բռնարարքի լրջությունը կամ համարում, որ այլընտրանք չկար: Շատերը չեն ընդունում, որ բռնությունը սխալ է, ոմանք դա իրենց մեղքն են համարում: Այսպիսով, նրանք պաշտպանություն փնտրում են այն ժամանակ, երբ արդեն իրենց կյանքին է վտանգ սպառնում: Բռնությունից հետո կյանքի քայլերը շարունակելը պահանջում է, որ բռնության ենթարկվածը հավատա, որ իր կյանքը կարող է տարբեր լինել: Մենք հանդարտորեն պետք է օգնենք նրան դա տեսնել: Մեր առաջին քայլերից մեկը պետք է լինի շեշտադրել, որ.

1. ընտանեկան բռնությունը սխալ է, օրինակ կարող եք ասել հետևյալ արտահայտությունը. «Մտահոգված եմ, բռնությունը վնասում է քեզ ու երեխաներիդ»:
2. Որևէ մեկը բռնության արժանի չէ բռնության, «Դու սրան արժանի չես, սիրած մարդու նկատմամբ բռնության գործադրմանը որևէ արդարացում չի կարող լինել»:
3. Բռնարարները բռնության չդիմելու տարբերակ միշտ ունեն. Պետք է ասել՝ «Բռնության դադարեցումը կողակցիդ պատասխանատվությունն է, ոչ՝ քոնը»:

Այս երեք սկզբունքները շեշտադրելը կօգնի բռնության ենթարկվածին ընդունել, որ բռնարարն իր մեղքով չի տեղի ունեցել, մի բան, որ առանցքային նշանակություն ունի իր ապաքինման համար: Նա պետք է նաև ի վիճակի լինի իրավիճակն անկեղծորեն հասկանալ, եթե որոշում է խնդիրը լուծել նոր կյանք կառուցելու ուղղությամբ: Այս փուլում, ԵՐԲԵԲ կասկածներ մի արտահայտեք իր պատմածի առնչությամբ, նույնիսկ եթե համարում եք, որ մի բան այն չէ:

Աջակցություն/ռեսուրսներ

Ճգնաժամին անմիջապես հաջորդող ժամանակաշրջանում սոցիալական աշխատողը/ ոստիկանության աշխատակիցը պետք է ուղղորդի դեպի այնպիսի ռեսուրսներ, ինչպիսիք են՝ թեժ գիծ, ապաստարանը, խորհրդատվական ծառայությունները, ինչպես նաև հոգեբանական աջակցություն ընկերների և ընտանիքի անդամների համար, ում վրա նույնպես ազդել է այդ ճգնաժամը և ովքեր կարող են բռնության ենթարկվածին օգնել՝ հաղթահարելու դժվարին ժամանակները: Բռնության ենթարկվածը կարող է նաև ցանկանալ գնալ հիվանդանոց կամ ոստիկանություն, ուստի անհրաժեշտ կլինի, որ նրան սոցիալական աշխատող կամ փաստաբան ուղեկցի: Անձի ներուժը և ինքնաբավությունը զարգացնող

այլ ռեսուրսների կարիք նույնպես կարող է լինել, ինչպես՝ զբաղվածության և վերապատրաստման ծրագրեր, ժամանակավոր կացարան, երեխաների համար նոր դպրոց և արտադպրոցական հաստատություններ ընդունվելու հնարավորություն՝ հատկապես եթե նրանք ապահովության նկատառումներով բնակավայր են փոխել:

Ներուժի հզորացում

Բռնության ենթարկված կնոջ ինքնագնահատականն ու ինքնավստահությունը բարձրացնելը մեծ նշանակություն ունի նրա հետագա երկարատև հաջողության համար: Նոր կյանքի պահանջները հաղթահարելու համար անհրաժեշտ է ինքնագործության զգացում: Բռնության էմոցիոնալ հետևանքների հաղթահարման համար պետք է աջակցություն և անմիջականություն: Նրան պետք է դրական խոսքեր, վստահեցում, լսող ականջ, օգնություն, որ նա վերաբացահայտի իր այն հմտությունները, որոնցով ժամանակին հպարտացել է և որոնք իր բռնարարն արգելել կամ տարհամոզել է կիրառել, օգնություն, որ նա նոր հոբբիներ բացահայտի, նոր հմտությունների ուսուցում, որպեսզի նա սկսի ինգնագոհ և ընդունակ զգալ:

Սրանք են այն սկզբունքները, որոնց պետք է հետևել բռնության ենթարկվածին ճգնաժամային վիճակից դուրս գալու օգնություն ցուցաբերելիս: Հաջորդ գլխում, որը ներուժի հզորացման է վերաբերում, ավելի մանրամասն կխոսենք այս սկզբունքների մասին: Մինչ այդ, բերեք նայենք, թե ինչ կոնկրետ գործիքներ ու մեթոդներ կարող են մեզ օգնել այս սկզբունքները կիրառելու հարցում:

IV ա. Գնահատում/ընդունում

24/7 

Այս բաժինը հատկապես կարևոր է սոցիալական աջխառնողների համար, ովքեր իրենց շահառուին առաջին անգամ են հանդիպում: Եթե կինն օգնություն է խնդրում, անմիջապես կապվեք Կանանց աջակցման կենտրոնի թեժ գիծ՝ 099-887-808:

Մինչ բռնություն վերապրած անձը տարբեր ծառայություններ է ստանում, նրա վիճակի ու կարիքի գնահատումը պետք է շարունակական գործընթաց լինի: Այն սկսվում է մի շարք հարցերից՝ մասնավորապես, թե ինչը նրան բերեց ձեզ մոտ: Սա կոչվում է «գնահատում»: Գնահատումը ներառում է անվտանգության մտահոգությունների, ներկա իրավիճակի դիսամիկայի (բռնության կրկնություններ և պատմություն), ֆիզիկական և հոգեկան առողջության հետ կապված գանգատների, ինչպես նաև արդեն գոյություն ունեցող ռեսուրսների ու հաղթահարման հմտությունների և աջակցության համակարգերի բացահայտում:

Շատ ժամանակ ճգնաժամում գտնվող կինը չի կարողանում հավաքել իր մտքերը: Պետք է համբերատար լինել, պահպանել հանգստություն: Ցույց տվեք, որ դուք հանգիստ եք նրա դրսևորած հույզերի նկատմամբ: Տվեք նրան ժամանակ ու տարածություն պատասխանելու համար: Տվեք նրան ընդմիջումներ:

**Գնահատման ընթացքում վստահեցնող
ուղերձներ փոխանցեք, օրինակ՝**

1. «Դու սրան արժանի չես: Ընտանեկան բռնությունն արդարացում չունի, դու լավին ես արժանի»:
2. «Ես մտահոգված եմ: Սա քեզ համար վնասակար է (և կարող է վնասակար լինել երեխաներիդ համար):
3. «Սա բարդ իրավիճակ է, երբեմն երկար ժամանակ է պահանջվում այն հարթելու համար»:
4. «Դու մենակ չես այս հարցը լուծելու մեջ: Տարբերակներ կարող են լինել: Ինչ ընտրություն էլ կատարես, ես կաջակցեմ քեզ»:
5. «Ես քո մասին մտածում եմ: Ուրախ եմ, որ ինձ պատմեցիր: Ուզում եմ, որ միասին աշխատենք քո ապահովության ու առողջության պահպանման ուղղությամբ, որքան դա հնարավոր է»:
6. «Բռնությունը դադարեցնելը կողակցիդ պարտականությունն է, ոչ՝ քոնը»:
7. «Կան կազմակերպություններ, որ կարող են քեզ օգնել, դու մենակ չես»:

Գնահատման ժամանակ շատ կարևոր է դիտարկել, ավելի շատ լսել, քան խոսել, արձագանքել էմպաթիայով/ապրումակցել, հարգել, ընդունել ու հոգատար լինել: Առանց դատելու մոտեցումը բռնությունը վերապրածներիս առանցքային նշանակություն ունի նրանց անկեղծությունը բացելու համար ապահով տարածք ստեղծելու առումով: Անկախ նրանից, թե նա ինչպիսին է, ինչ կենսափորձ, կրթություն, արտաքին, կենսակերպ ունի, բռնություն վերապրած բոլոր մարդիկ արժանի են մեր օգնությանը: Մեր անձնական համոզմունքներն ու կարծիքները պետք է մեր աշխատանքից դուրս պահենք, այդպիսով՝ ապահովելով, որ մեր աջակցությունն ու պաշտպանությունը բռնության ենթարկվածներիս հավասար ու արդար կերպով հասանելի լինի:

Բռնությունից տուժածին մեր ծառայություններ ընդունելու գործընթացը պետք է սկսվի նրա վիճակի մասին բաց գրույցից: **Խնդրի սահմանումը պետք է տա բռնությունը վերապրած անձը և ոչ թե սոցիալական աշխատողը կամ ոստիկանության աշխատակիցը:** Թույլ տվեք նրան իր բառերով ասել, թե որն է խնդիրը: Մենք կարող ենք հեշտացնել այս գործընթացը՝ բաց հարցեր տալով, օրինակ՝

-  Ի՞նչն է ձեզ այստեղ բերել:
-  Ինչպե՞ս կարող եմ օգնել:
-  Ինչի՞ մասին կուզեիք խոսել:

1. **Գնահատման փուլում առաջնահերթ է անմիջական **ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ** ստեղծելը:**

Հարցրեք բռնության ենթարկվածին:

-  Ձեզ անմիջական վտանգ սպառնում է:
-  Որտե՞ղ է բռնարարը հիմա:
-  Ձեր նկատմամբ բռնություն գործադրած անձն արդյոք գիտի, թե որտեղ եք հիմա գտնվում:
-  Կարի՞ք ունե՞ք անմիջական անվտանգության կամ ոստիկանությանը տեղեկացնելու:
-  Բռնություն գործադրողը վերահսկելի՞մ է ձեր հեռախոսը/էլեկտրոնային փոստը/սոցիալական էջի պրոֆիլը: Ինչպե՞ս կարող եմք ձեզ հետ անվտանգ կերպով կապ հաստատել:

2. **Բռնության ենթարկվածի կյանքում բռնության կրկնության և պատմության գնահատում:**

(Այս հարցերը կարող են նաև ցույց տալ, թե վտանգն ինչ աստիճանի է և կա՞րողյոք սպանության ռիսկի հավանականություն:)

-  Բռնությունը ֆիզիկական էր, թե՞ հոգեբանական (հայիոյանքներ, նվաստացում, ստախոսություն):

- 🎗 Կողակիցդ հարկադրել է սեռական հարաբերություն կամ սեռական առումով վնաս հասցրել է:
- 🎗 Կողակիցդ վերահսկում է գործողություններդ, դրամդ, երեխաներին:
- 🎗 Կողակիցդ երբևէ քեզ հետապնդել է:
- 🎗 Կողակիցդ ընտանիքիդ անդամներին, ընկերներին, ընտանի կենդանիներին վնաս պատճառել է:
- 🎗 Որքան է տևել բռնությունը:
- 🎗 Ի՞նչ հաճախականությամբ է նա քեզ վիրավորում:

3. **Բռնության ենթարկված անձի հոգեկան ու ֆիզիկական առողջության վրա բռնության հետևանքների գնահատում**

- 🎗 Ինչպե՞ս է կողակցիդ բռնարար վարքն անդրադառնում ֆիզիկական առողջությանդ վրա (օր.՝ պարանոցի կամ մեջքի քրոնիկ ցավ, միզրեն և հաճախակի գլխացավեր, կմկմոց խոսելիս, տեսողության խնդիրներ, սեռական ճանապարհով փոխանցվող վարակներ, որովայնի քրոնիկ ցավ, ստամոքսի խոց, հաճախակի փորլուծություն, փորկապություն, մարսողության խանգարումներ)
- 🎗 Ինչպե՞ս է բռնարար վարքագիծն անդրադառնում հոգեկան առողջությանդ վրա (օր.՝ դեպրեսիա, ինքնասպանության մտքեր, սթրես, հոգեկան խանգարումներ, ակոհոլի կամ թմրանյութերի չարաշահում)

4. **Բռնության ենթարկվածի համար այլ ծառայությունների կամ աջակցության ծրագրերի հասանելիության գնահատում**

(Հնարավոր է, որ դուք նույնպես կարողանաք կապ հաստատել նրանց հետ կամ հորդորեք, որ ձեր շահառուին նրանք օգնեն)

-  Այլ ծառայություններ մատուցողների հետ կապ հաստատել եք: Օգտակար եղել են նրանք:
-  Ձեզ հետ աշխատող կազմակերպություններից որոնց եք վստահում:

5. **Բռնության ենթարկվածի անվտանգության, մասնավորապես՝ կյանքին սպառնացող կամ լուրջ վնասվածք հասցնելու վտանգի գնահատում**

Ընտանեկան բռնության հետ առնչվող մասնագետները մշակել են սպանության ռիսկի գնահատման թերթիկ: Որքան շատ են հարցաթերթում դրական պատասխանները, այնքան մեծ է սպանության ռիսկը: Այս թերթիկն օգտագործած կենտրոնները կարողացել են ավելի ճշգրտորեն գնահատել վտանգն ու համակարգված արձագանքել, որի արդյունքում կանխվել է սպանության փորձը:

IV բ. Սպանության ռիսկի գնահատում

Ստորև նկարագրված են վարքագծեր, որոնք համարվում են գործողության փորձ և որպես համախումբ, կարող են գնահատվել որպես սպանության ռիսկի գործոններ:⁶

1. Բռնարարը սպառնում է սպանել բռնության զոհին
2. Բռնարարը սպառնում է գործածել զենք/դանակ կամ այլ առարկա բռնության զոհի նկատմամբ
3. Բռնարարը խեղդելու փորձ է անում
4. Բռնարարը միշտ և կատաղի խանդոտ է
5. Բռնարարը հարկադրում է սեքս անել
6. Բռնարարը վերահսկում է բռնության ենթարկվածի առօրյան

Քեմփբել, Վեբստեր, Գլաս (2009), «Վտանգի գնահատում: Կողակցի կողմից կնոջը սպանելու ռիսկը գնահատող գործիքի ստուգում», Միջանձնային բռնության

7. Բռնարարին հեշտությամբ հասանելի է գեները
8. Բռնարարը գործազուրկ է
9. Ժամանակի ընթացքում աճում է ֆիզիկական բռնության ուժգնությունը և/կամ հաճախականությունը
10. Բռնարարը չարաշահում է ալկոհոլն ու թմրանյութերը
11. Բռնարարը բռնի է վարվում, երբ կինը հղի է
12. Բռնարարը սպառնում է կամ փորձում է ինքնասպան լինել
13. Բռնարարը հետևում, հետապնդում, գաղնտալսում է բռնության ենթարկվածին և/կամ սպառնալիքներ է ուղարկում
14. Բռնարարը խուսափում է ընտանեկան բռնության մեղադրանքով ձերբակալումից
15. Բռնության ենթարկվածը համարում է, որ բռնարարը կարող էր իրեն և/կամ երեխաներին սպանել ***

⚠ Փորձը ցույց է տալիս, որ բռնության ենթարկվածի կողմից ռիսկի մակարդակի գնահատումը ճշգրիտ է լինում: Եթե բռնության ենթարկվածն ասում է՝ «Նա ինձ կսպանի», ապա այս պնդմանը պետք է ՇԱՏ ԼՐՋՈՐԵՆ վերաբերվել:

Բացի վերը նշվածից, սպանության զոհերի հետ կապված հետազոտությունները ցույց են տալիս, որ սպանությունն ավելի հավանական է դառնում, երբ սպառնալիքները դառնում են ավելի հաճախակի և մանրամասն: Բացի վերը նշված թերթիկին դրված դրական պատասխաններից, ուշադրություն պետք է դարձվի նաև սպառնալիքների հաճախակիության, մանրամասնության և խորության վրա: Հայաստանում այս հարցաթերթիկն օգտագործվել է որպես գործիք՝ գնահատելու ապաստարան տեղափոխվելու անհրաժեշտությունը: Խորհուրդ է տրվում, որ բռնության ենթարկված անձինք, ում սպառնում է սպանվելու վտանգը, անմիջապես տեղափոխվեն ապաստարան (իհարկե զոհի համաձայնությամբ):

Ոստիկանության մասին

Երբեմն տրավման այնպիսի հետք է թողնում բռնության ենթարկվածների վրա, որ նրանք կարող է թողնեն անվատահեղի կամ անազնիվ մարդու տպավորություն: Երբեմն նրանք կարող է չհիշեն որոշակի մանրամասներ կամ ժամկետներ, նրանց պատմությունը խառնիճաղանջ լինի: Կարող են մի պահ մի բան ասել, հետո՝ մեկ այլ բան: Կարող են մտափոխվել ու վերադառնալ բռնարարի մոտ: Այս ամենը պահանջում է համբերատարություն և ըմբռնում:

Շատ դեպքերում ոստիկանության աշխատակիցները նվազեցնում կամ թերագնահատում են ընտանեկան բռնության բացասական հետևանքները՝ անվանելով այն ընտանեկան հարց, ուստի վարանում են միջամտել: Երբեմն նրանք նույնիսկ կարող են կնոջը համոզել բողոք չներկայացնել: Երբ բռնության ենթարկվածներն ինքնավստահ չեն լինում, ոստիկանության աշխատակիցներն ավելի արդարացված են համարում գործ չհարուցել: Լինում են դեպքեր, երբ ոստիկաններն ամոթանք են տալիս բռնության ենթարկվածներին և նույնիսկ տեղեկացնում բռնարարներին ներկայացված բողոքի մասին, որի արդյունքում բռնության զոհն ավելի դաժանորեն է ծեծի ենթարկվում:

Սոցիալական աշխատողներին խորհուրդ է տրվում բռնության ենթարկվածներին աջակցել, երբ նա գնում է ոստիկանություն բողոք ներկայացնելու կամ բռնության վերաբերյալ հայց ներկայացնելու: Ձեր շահառուներին զգուշացրեք, որ ոստիկանությունում կարող են հանդիպել նման վերաբերմունքի և որ նրանք չհիասթափվեն: Ոստիկանությունում նրա շահերը պաշտպանեք հաստատակամորեն և անզիջում կերպով: Առաջնահերթությունը տվեք նրա անվտանգությանը և ընդունեք, եթե նա պատրաստ չէ կամ վախենում է բողոք ներկայացնել: Միշտ բռնության ենթարկված անձն է որոշում, թե իր համար ինչն է ճիշտ:

IV գ. Ապաստարան

ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ ԵՐԲԵՔ ԶՊԵՏՔ Է լինի, որ բռնության ենթարկվածը հեռանա բռնարարից: Հեռանալու որոշման հետ կապված դժվարությունների մասին խոսել ենք III ա գլխում: Շատ կարևոր է գիտակցել, որ բռնության ենթարկված անձի կյանքում **ՀԵՌԱՆԱԼՆ ԱՄԵՆԱԿՏԱՆԳԱԿՈՐ** ժամանակաշրջանն է: Ընտանեկան բռնության արդյունքում սպանվածների 75%-ը սպանվել է այն պահին, երբ փորձել է հեռանալ կամ հայտարարել է, որ հեռանալու է: Բռնարարից հեռանալու որոշումը միշտ պետք է բխի բռնության ենթարկվածից, այն չի կարող պարտադրվել նրան:

Բռնության ենթարկվածին հեռանալու հարցում օգնելը պահանջում է համակարգված ջանքեր և լավագույնս իրագործվում է այն ժամանակ, երբ հստակ պլանավորվում է: Երբ բռնության ենթարկվածը որոշում է հեռանալ, պլանի կարևորագույն մասն է դառնում ապաստարան տեղափոխվելը և այնպես տեղափոխվելը, որ դա անվտանգ լինի:

Հայաստանում բռնություն վերապրածներից շատերի համար ապաստանն անհրաժեշտություն է, քանի որ բռնարարները հաճախ տեղյակ են լինում նրա ընտանիքի, բարեկամների և ընկերների բնակության հասցեներին, ինչը նշանակում է, որ ուր էլ բռնության ենթարկվածը գնա, ապահով չի կարող լինել: Սա հատկապես կիրառելի է փոքր գյուղերում, որտեղ բռնության ենթարկվածը չի կարող աննկատ մնալ, քանի որ բռնարարը նրան կարող է տեսնել՝ նույնիսկ գյուղում շրջելով: Ավելին, բռնարարը գիտի, թե որ դպրոցն են հաճախում երեխաները, նա կարող է երեխաներին հետևելով՝ գտնել նրանց մոտը կամ կարող է առևանգել երեխաներին:

Ընտանեկան բռնությունից տուժածների ապաստանները ժամանակավոր վայրեր են վերապրածների և նրանց երեխաների համար: Արդյունավետորեն աշխատող ապաստանը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին.

-  տեղակայված է **ԳԱՂՏՆԻ** վայրում,
-  ունի անվտանգ տրանսպորտային միջոցներ,
-  հարմարեցված է կոմունալ բնակության համար,
-  բնակիչների համար առանձին լինելու հնարավորություն ունի,
-  ժամանակավոր է, օժանդակում է երկարատև բնակարանային տարբերակներ փնտրելու գործընթացին՝ մինչ կինը սկսում է դառնալ ֆինանսապես անկախ:

Կանոնների մասին

Ապաստանի արդյունավետ գործելու համար միգրացիոն անհրաժեշտ լինի սահմանել որոշակի կառուցվածք և կանոններ: Դրանք նաև օգտակար են լինում բռնություն վերապրածի ապաքինման գործընթացում, քանի որ ապահովում են կանխատեսելիություն ու վերահսկողություն: Կանոնները սահմանում են հստակ չափանիշներ, որոնք այցելուները կարող են ըմբռնել ու կատարել: Բռնարարքի ժամանակ, ի տարբերություն, վիճակը ճիշտ հակառակն է, բռնարարքի ժամանակ կանոններ չկան, կինը չի կարող իմանալ ինչ կարող է անել և ինչ չի կարող: ՍԱԿԱՅՆ կանոնները կարող են նաև սահմանափակող լինել և վերահսկողությունից դուրս բերել: Եթե պահանջվում է հետևել կանոններին, ապա այցելուները պետք է հստակորեն իմանան, թե կանոններն ինչի համար են: Եթե կնոջ որոշ ազատություններ սահմանափակվում են իր իսկ անվտանգության համար, նրան պետք է հստակորեն և կարեկցանքի տեսանկյունից բացատրվի, թե իր գործողություններն ինչպես կարող են իր (և ձեր)

ապահովությունը վտանգել: Մյուս կողմից՝ չափազանց խիստ և շատ կանոնները, նրանց անընդհատ հետևելը, առանձնապես հնարավորություն չտալը, հեռախոսից օգտվելը և ուրիշների հետ խոսելը սահմանափակելը կարող են հեղձուցիչ լինել նրա համար՝ վերարտադրելով այն բռնարարքները, որոնցով վերահսկում էր իրեն իր բռնարարը: Դրա համար մենք չենք նշում դրանք իբրև կանոն, այլ՝ իրավունքներ և պարտականություններ: Այսպիսով, շեշտը դրվում է արտոնությունների ու արգելքների վրա:

IV դ. Անվտանգության պլան

Ինչ է անվտանգության պլանը անհատական մանրակրկիտ պլան է, որը բռնությունը վերապրած անձին օգնում է պաշտպանվել բռնարար հարաբերության բոլոր փուլերում: Անվտանգության պլանները պետք է կազմվեն բռնություն վերապրած բոլոր անձանց համար և կարող են տարբեր լինել՝ կախված բռնարարքի տեսակներից, նրանից, թե բռնության ենթարկվածն ապրում է բռնարարի հետ, թե՞ մտածում է հեռանալու մասին, ր թե՞ հեռացել է:

Ինչու: Եթե կինը որոշում է բռնարար հարաբերությունը չընդհատել, անվտանգության պլանն օգտակար է, որպեսզի նա կարողանա այդ հարաբերության մեջ կողմնորոշվել: Այն պետք է ներառի վնասի նվազեցման տեխնիկաներ:

Վնասի նվազեցումը վերաբերում է բոլոր այն մոտեցումներին, ծրագրերին և պրակտիկաներին, որոնց նպատակն է նվազեցնել ընտանեկան բռնության հետ կապված վնասներն այն վերապրածների համար, ովքեր նախընտրում են կամ ի վիճակի չեն հեռանալ: Բռնության ենթարկվածներին և նրանց երեխաներին առաջարկելով օգնության տարբերակներ գոյատևելու նույնիսկ վտանգավոր իրավիճակում՝ մենք հաստատում ենք իրենց ապահով պահելու հարցում իրենց ինքնուրույնությունը: Սրա միջոցով նրանց մոտ

նաև զարգանում է մտածելակերպ, որ իրենք կարող են գործոն լինել իրենց հետ կապված հարցերում և որ իրենք ճիշտ բան են անում: Վնասի նվազեցման մոտեցումների շնորհիվ բռնություն վերապրած կինը վստահ է լինում, որ առանց ամաչելու և ճնշումների կարող է օգնության դիմել՝ նույնիսկ եթե պատրաստ չէ հեռանալ բռնարարից:

Ստորև ներկայացված են անվտանգության մոտեցումներ այն դեպքերում, երբ բռնություն վերապրածը հաջողացրել է դադարեցնել հարաբերությունը և բնակվում է ապաստանում/այլ ապահով վայրում

-  Խրախուսեք նրան փոխել հեռախոսահամարը:
-  Առաջարկեք գրառումներ չկատարել սոցիալական ցանցերում (facebook / odnoklassniki և այլն)
-  Խրախուսեք, որ հրապարակային չդարձնի, թե որտեղ է և ինչ է պլանավորում անել
-  Տեղեկացրեք, որ նախընտրելի է խուսափել քաղաքի այն խանութներից և վայրերից, որտեղ բռնարարը կամ իր ընկերները/ընտանիքի անդամները կարող են իրեն հանդիպել
-  Առաջարկեք տեղեկացնել երեխաների դպրոցին/մանկապարտեզին, թե ով իրավունք ունի երեխաներին տուն տանել և ով՝ ոչ:
-  Տեղեկացրեք, որ զգույշ լինի ընկերներին կամ ընտանիքի անդամներին իր գտնվելու վայրի մասին տեղեկացնելու հարցում, քանի որ բռնարարները կարող են նրանց սպառնալ ու տեղեկություններ քաշել (ապաստանում գտնվելիս՝ սոցիալական աշխատողները կարող են ընտանիքի անդամներին տեղեկացնել, որ բռնության ենթարկված կինն ապահով է, սակայն **ԵՐԲԵՔ** ապաստանի հասցեն չպետք է փոխանցեն)
-  Տեղեկացրեք նրան, որ զգույշ լինի ցանկացած տեղեկատվություն որևէ մեկին հաղորդելու հարցում:

Վնասի նվազեցման հետևյալ մոտեցումները կարող են առաջարկել բռնություն վերապրած այն կանանց, ովքեր դեռևս բռնարար հարաբերության մեջ են

-  Տեղեկացրեք նրան բռնության ցիկլի մասին (նկարագրված է II գլխում) այնպես, որ նա պատրաստ լինի հաջորդ դրվագին և սկսի հասկանալ, որ բռնարարն իր մեղքով չի տեղի ունենում, այլ՝ ցիկլի մասն է:
-  Առաջարկեք, որ մտապահի կամ գրառի բռնության յուրաքանչյուր դրվագի հետ կապված մանրամասները (թաքցնելով գրառումները), այնուհետև վերլուծի ու փորձի բացահայտել կրկնվող վարքագիծը կամ բռնության խթանները:
-  Ներկայացրեք, թե բռնության դեպքում ապահովության ինչ տարբերակներ կարող է կինն ունենալ.
 - խուսափել վզկապ/շարՖ կամ վզնոց կրել այդ պահին, որպեսզի բռնարարը դրանից քաշելով չխեղդի,
 - տեղափոխվել ցածր ռիսկային սենյակներ՝ ննջասենյակ, հյուրասենյակ, և հեռու մնալ բարձր ռիսկային սենյակներից (որտեղ կարող է լինել զենք կամ որոնք մեկ ելք ունեն), ինչպիսիք են խոհանոցը, բաղնիքը, ավտոտնակը,
 - մնալ դռներից մոտ և խոշոր կահույքի ու բռնարարի արանքում տվյալ պահին:
-  Առաջարկեք, որ նա փորձարկի ապահով կերպով դուրս գալը, երբ բռնարարը ներկա չէ (օր՝ ընտրի, թե որ դռներից կամ պատուհաններից ու սանդուղքով կարող է դուրս գալ):
-  Խրախուսեք, որ նա անվտանգության պլաններ մշակի նաև երեխաների հետ՝ սովորեցնելով և փորձելով նրանց հետ բռնության դրվագից դուրս գալը (օր՝ գնալ լավ կողավող սենյակ, հարևանի տուն և այլն): Երեխաներին սովորեցնել կողավորված բառ, որպեսզի նրանք օգնություն կանչեն:



Եթե բռնության ենթարկված կինը որոշում է հեռանալ բռնարարից, ասացեք նրան.

- որ **ԵՐԲԵՔ** չհիշատակի կամ ցույց չտա իր մտադրությունն ամուսնալուծվելու կամ բաժանվելու: Սա կարող է ճակատագրական լինել:
- Պատրաստի ունենա պայուսակ, որտեղ կա որոշակի գումար, իր կողմից օգտագործվող դեղամիջոցները, առաջին անհրաժեշտության հագուստ, որպեսզի արագ հեռանալու դեպքում դրանք հասանելի լինեն: Եթե նման պայուսակ տանը պահելը կարող է կասկածներ առաջացնել, նա կարող է պայուսակը պահել իր կողմից վստահելի անձի մոտ:
- Փաստաթղթերը (թննդյան վկայական, ամուսնության վկայական, գույքի վկայական, աշխատանքային փաստաթղթեր և այլն) պահի մոտը կամ հեշտ հասանելի մի տեղ:
- Ունենա բոլոր իրավական փաստաթղթերի կրկնօրինակները և թողնի դրանք, ինչպես նաև տան բանալիների հավելյալ օրինակը վստահելի մեկի մոտ:
- Հարևաններին խնդրի զանգել ոստիկանություն, եթե նրանք աղմուկ են լսում:
- Բջջային հեռախոսը միշտ իր մոտ կամ ապահով մի տեղ պահի:

24/7 

- **Անգիր հիշի ընտանեկան բռնության դեպքում թեժ գծի հեռախոսահամարը (Կանանց աջակցման կենտրոնի թեժ գիծ – 099-887-808).**
- Մտածի վայրերի մասին, որոնց ամուսինը տեղյակ չէ:
- Կազմի փախուստի այնպիսի պլան, որը կոնկրետ է ու մանրամասն և փորձի այն.
 - Ուր կգնամ:
 - Երբ/որ ժամանակն է ամենաապահովը:
 - Որ ճանապարհն է ամենաապահովը:

- Կտանեմ արդյոք երեխաներին, թե՛ երեխաները կարող են ընկերների/հարազատների մոտ մնալ:
- Արդյո՞ք բոլոր փաստաթղթերը պատրաստ են:

Միայն անվտանգության պլան ունենալը չի կարող երաշխավորել անվտանգություն: Օգտակար կլինի առաջարկել, որ բռնության ենթարկվածն ունենա վերահսկողության և ինքնազորության զգացում, որ այն կարող է օգնել ընտանեկան բռնության վնասները նվազեցնելու հարցում, բայց խնդրի լիակատար լուծում չէ: Բռնությունից տուժածներին այս մասին պետք է տեղեկացնել: Իրենց նաև պետք է հիշեցնել, որ շատ վտանգավոր պահերին պետք է զանգել ոստիկանություն, որ միջամտեն:

Ծեծված կանանց անվտանգության պլանները կարող են ներառել ինչպես հարաբերությունը չընդհատելու, այնպես էլ՝ հարաբերությունն ընդհատելու ստրատեգիաներ: Որոշ կանանց համար հարաբերությունն ընդհատելը կարող է բարձրացնել վտանգները և իր համար լավագույն տարբերակը կարող է լինել շարունակել հարաբերությունը: Մենք դա պետք է ընդունենք:

Ծեծված կինը մշտապես պետք է վերանայի անվտանգության իր պլանը՝ կախված փոփոխվող հանգամանքներից: Անվտանգության պլանի վրա ազդում են՝ առկա ստրատեգիայի հաջողությունը կամ ձախողումը, ընտանեկան բռնության հարցերով զբաղվող ծառայությունների օժանդակությունը և տեղեկատվությունը: Օրինակ, կինը կարող է որոշել դադարեցնել հարաբերությունը՝ համալսարանն ավարտելուց, աշխատանք գտնելուց, երեխաներին ինքնախնամքի տարիքի հասցնելուց հետո: Եթե կնոջը ժամանակ է անհրաժեշտ հարաբերությունը դադարեցնելու համար, ապա նա կարող է տարբեր ստրատեգիաներ մշակել այդ ընթացքում իր և երեխաների անվտանգությունը պահպանելու ուղղությամբ:

ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Միայն բռնության ենթարկվածն է, որ կարող է կայացնել իր անվտանգության վերաբերյալ վերջնական որոշում: Մենք նրան կարող ենք տեղեկություններ ու օժանդակություն տալ, սակայն հարյուր տոկոսով նրա անվտանգությունը երաշխավորել չենք կարող: Ուստի, երբևէ իրավունք չունենք նրան հրամայել, վախեցնել կամ հարկադրել որևէ որոշում ընդունել: Բռնարարից հեռանալը գործընթաց է, երբեմն՝ բարդ ու դժվար գործընթաց (ինչպես քննարկվել է Ուա գլխում): Մինչև վերջնական բաժանումը միջինը բաժանման 7 փորձ է կատարվում: Սա մի գործընթաց է, որին բռնության ենթարկված կինը համաձայն է, իսկ մեր դերը համակարգված ապահովությամբ օժանդակելն է:

Աշխատակիցները նույնպես պետք է թույլ տան և խրախուսեն, որ բռնությունից տուժածներն իրենց լիարժեք անհատականությունը բերեն մեր ծառայություններ, խոսեն բռնարարի նկատմամբ իրենց բոլոր զգացմունքներից, այդ թվում՝ ներհակադիր/ամբիվալենտ հույզերից և սիրուց: Հարաբերությունը դադարեցնելը պայքար է: Մենք պետք է ընդունենք, թե որքան դժվար է և քաջություն է պահանջում հարաբերություն դադարեցնելը:

Աշխատակիցները պետք է ընդունեն, որ բռնության ենթարկված կինը կարիք ունի այնպիսի լուծումների, որոնց հետ նա կարող է համակերպվել, այսինքն՝ նրանք պետք է հարգեն կնոջ որոշումներն ու նրան ժամանակ տան: Աշխատակիցները չպետք է ակնկալեն, որ բռնության ենթարկվածը կարող է վերացնել տրավմաների բոլոր հետևանքները և մեկ օրում փոխվել: Նոր կյանքին հարմարվելու գործընթացը որոշ ժամանակ կտևի: Սոցիալական աշխատողները երբեք բռնության ենթարկվածի որոշումները չպետք է կապեն իրենց աշխատանքի հետ կամ նրա ընտրությունն ընկալեն որպես իրենց պարտականությունների հաջողություն կամ ձախողում: Այնքանով, որքանով մենք սատարում ենք նրա ինքնորոշման իրավունքը և վստահեցնում, որ նա ունակ է և փորձառու սեփական կյանքն ու ճանապարհն առաջնորդելու, մենք մեր աշխատանքը լավ ենք անում:

V. ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԴԵՐԸ

ա. Ներուժի հզորացում, լավագույն մոտեցումները

բ. Ապահովության վերակառուցում

գ. Խորհրդատվության հիմնական հմտությունները

դ. Հաղորդակցության արգելակներ

ե. Ինչպես աշխատել Թեժ գծի վրա

զ. Առաջարկեք տարբերակներ, ոչ խորհուրդ

է. Սահմաններ



Սոցիալական աշխատողները յուրահատուկ դեր ունեն։ Քանի որ Նրանք ուղղորդում ու աջակցում են բռնության ենթարկվածին ապաքինման գործընթացում և հաճախ մերձորեն են ներգրավված շահառուի պլանի և կարիքների կազմման մեջ, Նրանք պետք է սովորեն իրենց աշխատանքն անել հետևողականորեն, օբյեկտիվորեն և առանց ֆավորիտներ սահմանելու։ Նրանք պետք է լինեն կարեկցող, սակայն՝ չեզոք։ Պետք է ընկերաբար վերաբերվեն, սակայն՝ չդառնան ընկեր։ Նրանք պետք է զգուշորեն բացատրեն տարբերակներ, սակայն խորհուրդ չտան։ Նրանք միշտ պետք է մնան պրոֆեսիոնալ և հստակ սահմաններ պահպանեն։

Կան հիմնարար սկզբունքներ, որոնց սոցիալական աշխատողը իր ծառայությունները մատուցելիս պետք է հետևի և պետք է հարգի շահառուի կենսափորձը և աշխատանքի ընթացքը.

-  բռնությունը գործադրողի և ոչ զոհի պատասխանատվությունն է,
-  ոչ ոք «արժանի» չէ վնաս կրելու՝ անկախ նրանից, թե նա ինչ է ասել, արել, հագել կամ մտածել։ Բռնությունը երբեք արդարացում չունի,
-  բռնություն վերապրածները մինչ այդ պահը կատարել են իրենց իրավիճակում հնարավոր լավագույն որոշումներն ու ընտրությունը՝ հաշվի առնելով իրենց սահմանափակումները, վախերը, զգացմունքները և այլ հանգամանքներ,
-  բռնությունը վերապրածներն ունեն աիռելի ուժ և ապաքինման կարողություն, սակայն յուրաքանչյուրի տեմպը հատուկ է իր ապաքինման ընթացքին և կարող է դժվարությամբ կատարվի, ամեն վերապրող իր անհատական ապաքինման ուղին ունի։ Բռնություն վերապրած ամեն կնոջ կարիքները յուրահատուկ են։

Խորհուրդ

Նույնիսկ խնդրելու դեպքում, խորհուրդ չպետք

է տալ: Շատ կարևոր է օգնություն տրամադրելիս՝ ներկայացնել այլընտրանքներ, սակայն խորհուրդ ՉՏԱԼ շահառուին կամ նրա փոխարեն որոշում կայացնել:


Ճգնաժամի վիճակում մարդը կարող է այնքան շփոթված ու հուսահատ լինել, որ չկարողանա գործողությունների դիմել, ուստի նրան որոշակի ուղղորդում է անհրաժեշտ: Սա, սակայն, խորհուրդ չէ: Ճգնաժամային իրավիճակները պետք է հարթվեն՝ հատուկ ուղեցույցների հետևելով: Դրանց մասին կխոսվի առանձին:

Որպես օգնող՝ դուք սահմանափակված եք այնպիսի կարծիքներ արտահայտել, որոնք բնույթով կարող են բժշկական կամ իրավական խորհուրդ հանդիսանալ: Օրինակ՝ ընկերական շփման ընթացքում, երբ ձեր ընկերն ասում է, որ գլխացավ ունի, կարող եք առաջարկել ասպիրին ընդունել: Աշխատանքային միջավայրում սա կարող է ընկալվել որպես բժշկական խորհուրդ, ինչը բժշկական որակավորում չունեցող անձանց արգելվում է անել (նաև մենք չգիտենք այդ անձի ռեակցիան դեղի հանդեպ):

Վ ա. Ներուժի հզորացում, լավագույն մոտեցումները

Ներուժի հզորացման մոդելը պարտադիր պետք է կիրառվի ընտանեկան բռնությունից տուժածների հետ աշխատանքում: Սա մի մոդել է, որը համաշխարհային մասշտաբով կիրառվում է ընտանեկան բռնության հարցում մասնագիտացած կազմակերպությունների կողմից:

Բռնությունը վերապրած անձը բռնարար հարաբերության մեջ կրում է վերահսկող վարքագծի կրկնություն: Բռնարարը կարծես իրեն իրավունք է վերապահած լինում անձի փոխարեն որոշումներ ընդունել, ասել նրան՝ ինչ անի, երբ անի, ինչպես անի: Նախկինում ոլորտում ծառայություններ մատուցողները, թեև ունենալով լավագույն մտադրություններ, այնուամենայնիվ բռնության ենթարկվածներին մոտենում էին «փրկչի» հոգեբանությամբ՝ ասելով նրան, թե ինչ անի, ինչպես, երբ, որպեսզի վերականգնվի և շարունակի կյանքը: Չնայած ծառայություն մատուցողները «օգնում» են բռնության ենթարկվածին կարճաժամկետ կտրվածքով՝ նրա համար ամեն ինչ անելով, սակայն վերջնական արդյունքում նրան թողնում են այնպիսի վիճակում, ինչպիսի վիճակում նա իրեն զգացել էր բռնարար հարաբերության մեջ՝ անզոր: Երկարատև իմաստով, բռնությունից տուժածի հաջողության համար ամեն ինչ նրա փոխարեն անելը ճակատագրական սխալ է, քանի որ նա իրեն չի զգա ընդունակ և հմտություններով օժտված՝ հոգ տանելու իր և երեխաների մասին: Ստորև բերված պատկերում նկարագրված է, թե ինչպես կարող է բռնության ենթարկված անձը շարունակել մնալ անզոր վիճակում:



Գծապատկեր 2. Աղապտացված է Քարփման Դրամա եռանկյունուց⁷ Չնայած սոցալխատողը ցանկանում է օժանդակել բռնությունից տուժածին՝ վերահսկելով նրա հաջողությունը, սակայն արդյունքում նրան պահում է նույն վիճակում, ինչ բռնարարը, անզոր

7. Քարփման ՄԴ, Ստեֆեն (1968). «Հեքիաթների ու թատերական սցենարի վերլուծություն», Տրանսակցիոն վերլուծության բյուլետեն 26 (7): 39–43

Ժամանակի ընթացքում, երբ մասնագետներն ավելի շատ փորձ ձեռք բերեցին բռնություն վերապրած անձանց հետ աշխատելով, հասկացան, որ նրանց ամենաշատն անհրաժեշտ է մեկը, ով կսատարի ԻՐԵՆՑ որոշումներին, կխրախուսի ու կամրապանդի ԻՐԵՆՑ ուժեղ կողմերը, ռեսուրսներ կտարամադրի ԻՐԵՆՑ նպատակներին հասնելու համար: Բռնություն վերապրածները հաջողության են հասնում, երբ իրենք են վերահսկում ապաքինման իրենց ընթացքը: Այս մոտեցումը կոչվում է *Ներուժի հզորացում*:

Ներուժի հզորացման մոդելը կամ *Տրավմային արձագանքի և Ներուժի հզորացման մոդելը*, որոնց վրա հիմնված է այս ձեռնարկը, ապացուցել են, որ իրենց միջոցով հնարավոր է բարձրացնել անձի անհատական անվտանգության և ինքնազորության մակարդակը և նվազեցնել տագնապը, տրավման և հոգեբանական սիմպտոմները: Փորձը նաև ցույց է տալիս, որ այս մոդելները բարձրացնում են կազմակերպության արդյունավետությունը և աշխատակիցների գոհունակությունը: Ներուժի հզորացումն ըմբռնելը առանցքային նշանակություն ունի մեր երկրում ընտանեկան բռնությունից տուժածներին տրամադրվող ծառայությունների հաջողության հարցում: Այս մոտեցումը հիմնարար կարևորություն ունի, որպեսզի բռնություն վերապրածն ազատվի բռնարար հարաբերությունից, սովորի հմտություններ, որոնք կարևոր են իր անկախության, հաջողության և ապաքինման համար: Ներուժի հզորացման մոդելը խրախուսում է մի միջավայր, որտեղ բռնություն վերապրածն ինքն է առաջնորդում իր վերականգնման գործընթացը, ինքն է պատասխանատու իր գործողությունների, որոշումների և երջանկության համար: Մեր հաջողության երաշխիքն այն է, որ բռնությունից տուժածը մեր կարիքն այլևս չունենա:

Ինչն է խլել բռնարարը	Ինչն է վերականգնում ներուժի հզորացումը
Ապահովություն – Բռնարարները բառի բոլոր իմաստներով խլում են անձի ապահովությունը՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ՝ էմոցիոնալ	Մենք տրամադրում ենք ապաստան և ապահով վայր
Վերահսկողություն – Բռնարարները վերահսկողություն են սահմանում կնոջ ողջ կյանքի նկատմամբ՝ թույլ չտալով նրան կատարել ազատ ու կամային որոշումներ կամ սեփական կարծիքի ու կարիքների առաջնահերթության սահմանում	Իր կյանքի որոշումներն ինքն է կատարում: Առաջնահերթ են իր կարիքները:
Կապվածություն – Բռնարարքը խանգարում է, որ անձը վստահի ու կապվածություն ունենա ուրիշների հետ	Վստահության վրա հիմնված հարաբերություններ բռնություն վերապրածների հետ, կապվածություն է ստեղծում ուրիշների (աշխատակիցների) հետ
Հաղորդակցություն – Բռնարարը թույլ չի տալիս անձին ինքնարտահայտվել	Կանանց խրախուսում է ինքնարտահայտվել

Աղյուսակ 3. Ներուժի հզորացման արդյունավետ մոդելի նպատակն է վերականգնել այն, ինչը խլել է բռնարարը:

V ք. Ապահովության վերակառուցում

1. Ֆիզիկական ապահովություն

Ֆիզիկական ապահովությունը (հրատապ և երկարաժամկետ) պետք է գնահատվի՝ ինչպես այցելուի հետ առաջին անգամ հանդիպելիս, այնպես էլ՝ յուրաքանչյուր հանդիպման ժամանակ (տես՝ IV դ. գլուխ): Ստորև բերված են հիմնարար սկզբունքներ, որոնց պետք է հետևի սոցիալական աշխատողը՝ այցելուների հետ աշխատելիս:

2. Էմոցիոնալ ապահովություն

Էմոցիոնալ ապահովություն ստեղծելու գործընթացը ենթադրում է մտածված և ուշադիր վերաբերմունք բոլոր այն մանրուքներին, որոնք կապված են ձեր ծառայությունների հետ, սկսած՝ միջավայրից, մինչև ցուցաբերած վերաբերմունք:

-  Ձեր գրասենյակը պետք է հեշտ հասանելի և լուսավորված լինի:
-  Այցելուին ցույց տվեք, որ անձնական տարածքը պահպանելը ձեզ համար կարևոր է: Հարցրեք, կուզե՞ր դուռը փակել կամ առանձին սենյակ գնալ:
-  Կողմնակի գործերով մի՛ զբաղվեք, մի՛ պատասխանեք հեռախոսազանգերին կամ եկող գնացողներին, երբ այցելուի հետ եք աշխատում:
-  Գրասենյակը մաքուր ու կոկիկ պահեք, ապահովեք հարմարավետ ջերմաստիճան:
-  Ցույց տվեք, թե որտեղ են գտնվում զուգարանը, որտեղից կարելի է ջուր վերցնել և այլն:
-  Հանդիպման ժամանակի սահմանափակության մասին տեղեկացրեք նախապես:
-  Դիպչելուց առաջ, հարցրեք՝ կարելի՞ է:

Էմոցիոնալ ապահովություն ապահելու համար պետք է հավատալ այցելուին, նրա կյանքում վստահաբար շատ մարդիկ են եղել, ովքեր թերագնահատել և մերժել են բռնությունն իր նկատմամբ: Հավատ ընծայելը նրա պատմությանը անհրաժեշտ քայլ է, որպեսզի նա նույնպես սկսի վստահել ու ապահով զգալ:

Բռնարարը էմոցիոնալ բռնությամբ նրանից խլել է որոշումներ կայացնելու, լավաժ և վստահված լինելու, հարգված, կոմպետենտ ու արժանավոր անձ լինելու իրավունքը: Մենք պետք է ճիշտ հակառակն անենք:

3. Գաղտնիություն

Մեր այցելուի անունը, անձնական տվյալները, գտնվելու վայրը, աշխատավայրը, երեխաների դպրոցի մասին տեղեկությունները պետք է մնան գաղտնի: Գաղտնիությունը, հատկապես, եթե կինը լքել է բռնարարին և գտնվում է ապաստարանում կամ թաքնվում է նրանից, պարզապես պրակտիկ իմաստով կենսական նշանակություն ունի նրա ապահովության համար: Ձեր գրասենյակի հասցեի գաղտնիությունը նույնպես առանցքային նշանակություն ունի սոցիալական աշխատողների ապահովության համար:

Հայաստանում կազմակերպությունները հաճախ բավարար կերպով չեն արժևորում գաղտնիությունը, որի արդյունքում բռնությունից տուժածի և նրա գտնվելու վայրի մասին նրա ծանոթները, հարազատները հեշտությամբ տեղեկանում են տարբեր պետական կառույցներում պահպանվող փաստաթղթերից: Ուշադիր եղեք, թե ում եք տեղեկություններ տրամադրում:

Օրինակ՝ մի անգամ ոստիկանության մի աշխատակից մյուսի հետ քննարկում էր, թե որտեղ է գտնվում բռնությունից տուժածը, որը պարզվեց՝ բռնարարի ընկերներից էր:

Արդյունքում, բռնարարը գտավ կնոջն ու դաժանորեն ծեծեց:

Բռնարարները կարող են անգիջում ու վտանգավոր լինել: Նույնիսկ այն բանից հետո, երբ կինը հեռանում է բռնարարից, նա և/կամ իր երեխաները գտնվում են առանցքային բռնարարի կողմից և պատժվելու վտանգի մեջ, որովհետև դիմել են օգնության: Սպանվելու ռիսկն ամենամեծն է, երբ բռնության ենթարկված կինը հեռանում է բռնարարից: Ուստի անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ կանխարգելիչ միջոցները.

-  Կոնկրետ դեպք քննարկելիս, նույնիսկ աշխատակիցների հետ, շահառուի իրական անունը մի տվեք, եթե կասկածում եք, որ ուրիշները կարող են գաղտնալսել: Եթե հեռախոսով եք խոսում կամ պատասխանում եք թեժ գծի զանգերին, արեք դա առանձնացված տարածքում:
-  Ոստիկանությանը տեղեկություններ մի փոխանցեք:
-  Որևէ մեկի մոտ մի նշեք, թե կինը որտեղ է, նույնիսկ՝ նրա ընտանիքի անդամներին:
-  Որևէ լուսանկար կամ տեղեկատվություն մի հրապարակեք՝ բացառությամբ եթե դրա համաձայնությունը տվել է կինը և լիովին գիտակցում է ապահովության հետ կապված հավանական ռիսկերը:

Անձի վստահությունը վերականգնելու և էմոցիոնալ անվտանգություն ապահելու հարցում ամենակարևոր հարցերից մեկը գաղտնիության ապահովումն է: Գաղտնիության հետ կապված հարցերը հստակորեն քննարկեք ձեր շահառուի հետ, մասնավորապես՝ թե ինչը պետք է լինի գաղտնի և ինչը չի կարող գաղտնի պահվել: Պահպանեք այդ կանոնները: Երբեք մի խոստացեք գաղտնիություն, եթե այն հնարավոր չէ ապահովել: Շահառուի հետ աշխատանքի յուրաքանչյուր գործընթացում ներգրավվելիք աշխատակիցների հարցում նույնպես հստակ եղեք: Մի քննարկեք այցելուի հետ կապված հարցերը

ձեր աշխատակիցների հետ, եթե նա դրա թույլտվությունը չի տվել: Ճշգրտեք, թե հրատապ դեպքերում ում կարելի է անձնական տեղեկատվություն տրամադրել: Այցելուի մասին հեռախոսով կամ գրասենյակում մի խոսեք, եթե ձեզ կարող են լսել կողքից: Այցելուի մասին նրա ներկայությամբ որևէ մեկին շշուկով տեղեկություն մի փոխանցեք, սա կխախտի նրա կողմից Ձեզ տրված վստահությունը:

Այս աղյուսակում նկարագրված են վարքագծային տարբերությունները բռնարարի և նրա, թե ինչ է անհրաժեշտ տուժածին ձեր կողմից: Սա կենսական նշանակություն ունի նրա ռեաբիլիտացիայի համար:

Բռնարար	Ընտանեկան բռնությունից տուժածի հետ աշխատողը
Խոսակցության մեծ մասն ինքն է վարում	Ավելի շատ լսում է, ավելի քիչ՝ խոսում
Խիստ ճնշում է գործադրում	Համբերատար է, հարգում է նրա դատողությունները՝ կապված գործողության դիմելու պատրաստակամության հետ
Նվաստացնում է	Վերաբերվում է որպես հավասարի, խուսափում է ձայնի մեջ արտահայտել որևէ բարկություն
Համարում է, որ նրա կյանքը վերահսկելու իրավունք ունի	Հարգում է նրա ինքնորոշման իրավունքը

Համարում է, որ երեխաներին ավելի լավ է հասկանում	Ենթադրում է, որ նա ունակ ու հոգատար մայր է
Նրա փոխարեն է մտածում	Նրա ՀԵՏ է մտածում, վերաբերվում է որպես հավասարի, ուժերը միավորում է իր հետ, չի ասում. «Եթե քո տեղը լիների, այսպես կանեի»:
Մտածում է, թե գիտի նրա համար ինչը լավ կլիներ	Տուժածն ինքն է իր կյանքի լավագույն փորձագետը, նրա հետ աշխատողները չեն ենթադրում, թե գիտեն տուժածի կարիքները:

V գ. Խորհրդատվության հիմնական հմտությունները

Վստահություն

Եթե ցանկանում եք վստահության արժանանալ, ապա նախ պետք է ցույց տաք, որ վստահելի եք.

-  Անկեղծ եղեք, եթե որևէ բանի պատասխանը չգիտեք
-  Մի խոստացեք անել բաներ կամ լուծել խնդիրներ, որոնք չեք կարող անել
-  Հստակ եղեք, թե ինչ ծառայություններ կարող եմ տրամադրվել, տեղեկացրեք բոլոր այն հավանական վայրերի ու ծառայությունների մասին, որոնք կարող ենք օգնել շահառուին հասնել իր նպատակին
-  Բացատրեք և նկարագրեք, թե հետագայում ինչ կարող է տեղի ունենալ

 Խրախուսող ու վստահեցնող վերաբերմունք
ցուցաբերեք նրա նպատակների հարցում,
նույնիսկ եթե դրանց հետ համաձայն չեք

 Մի դատեք նրան

 Հարգեք գաղտնիությունը:

Հետաքրքրվածություն

Եթե ցույց տաք, որ հետաքրքրված եք, ներգրավված եք,
ուզում եք լսել ու իմանալ, հոգատար եք, բռնությունից
տուժաձն ավելի ու ավելի կբացվի ու կանկեղծանա:

Հետաքրքրվածությունը ցույց տալու համար՝

 կողքի դրեք մնացած գործերն ու լիովին ձեր
ուշադրությունը տրամադրեք նրան: Մի պատասխանեք
կողմնակի հեռախոսազանգերին, ուրիշների
հետ խոսքի մի բռնվեք, ժամացույցին մի նայեք:
Մարմնի ձեր շարժումները հստակորեն փոխանցում
են, թե որքանով եք դուք այցելուին լսում:

 կենտրոնացեք ասվածի վրա,

 հարցեր տվեք, խրախուսեք, որ նա խոսի,

 անձի անհատական հատկանիշներին ուշադրություն
դարձրեք, մտապահեք, հիշատակեք դրանց մասին:

Լսելու ունակություն

Բռնության ենթարկված անձի հետ հաղորդակցվելիս՝
օգտագործեք հետևյալ մեթոդները, որ նա զգա, որ
դուք լսում եք: Լսելու ձեր ջանքերը հաղորդելը թույլ է
տալիս շահառուին ավելի անկեղծանալ ու պատմել
եղելությունն ու թե ինքն իրեն ինչպես է զգում:

1. Խրախուսեք նրան շարունակել խոսքը՝ օգտագործելով
նմանատիպ արտահայտություններ. «Ահա»,
«Ա՛հ», «Հասկանում եմ», «Հետո՞», «Ե՛վ»

2. Ժամանակ առ ժամանակ ամփոփեք քննարկվածը
«Այսինքն, ուզում եք ասել, որ...»
3. Եթե մի բան չեք հասկանում, խնդրեք, որ կրկնի:
Մարդիկ կարիք ունեն հասկացված լինելու, այս
կերպ դուք ցույց եք տալիս, որ դուք ինքներդ ձեզ
տրամադրել եք իր պատմությունը լիովին ընկալելուն:
4. Արձագանքեք նրան, օր.՝ «Սա փաստորեն ձեզ համար
իսկապես կարևոր է», «Ինձ թվում է, թե դուք զայրացած
եք... տազնապում եք... անհանգստացած եք»
5. Հավաստեք անկեղծությունը, «Գնահատում եմ նման բարդ
հարցերն ինձ պատմելու Ձեր պատրաստակամությունը»
6. Լռությանը նույնպես ժամանակ տվեք, թույլ
տվեք, որ նա իր մտքերը հավաքի:
7. Փոխեք թեմայի կիզակետը, շատ ժամանակ տուժածները
կարող են շարունակ պատմել, թե ինչ է արել բռնարարն
ու ինչ է արել ինքը: Եթե անհրաժեշտ է թեմայի ֆոկուսը
փոխել, ասացեք. «Գիտեմ շատ բան կա պատմելու,
բայց կարող եմք կենտրոնանալ սրա վրա...»

Ապրումակցում

Բռնության ենթարկվածի հետ կկարողանաք
անմիջականություն ստեղծել, եթե ըմբռնումով
ու ապրումակցումով մոտենաք: Ամրումակցում/
Էմպաթիա նշանակում է, որ դուք ձեզ պատկերացնում
եք իր վիճակում, փորձում եք հասկանալ, թե նա
ինչ է զգում: Ապրումակցումը կզգացվի, եթե՝

-  հաղորդակցվեք ինչպես բառերով, այնպես էլ՝
մարմնի լեզվով՝ հայացքի կոնտակտով, նրա
կողմ թեքվելով կամ առաջ գալով, ցավալի
բան լսելիս՝ գլուխը տարուբերելով և այլն:
-  Ընդունեք նրա զգացմունքները, «Ցավում եմ,
որ տխուր եք/վախեցած/վիրավորված»:

 Ցույց տվեք, որ նրա բոլոր հույզերը
նորմալ են տվյալ իրավիճակում:

V դ. Հաղորդակցության արգելակներ

Ուշադիր եղեք, որ հաղորդակցության արգելակներ
չօգտագործեք և չդադարեցնեք անձի
հաղորդակցությունը: Մի ընդհատեք նրան:

1. Փորձեք խուսափել «Ինչո՞ւ» հարցից: Որպեսզի մեկը
կարողանա պատասխանել «Ինչո՞ւ» հարցին, նա
պետք է փորձի բացատրել բաներ, որ հաճախ իրեն
էլ պարզ չեն: Բացի այդ, «Ինչո՞ւ» հարցն ակնարկում
է, որ նա տիրապետում էր իրավիճակին, սակայն
դա մի բան է, որի հետ նա միգուցե համաձայն չէ
և որը նրան կարող է ստիպել մտածել, թե ինքը
մեղավոր է: Որևէ համատեքստում բռնությունն
ընդունելի չէ, ուստի ուշադրության կենտրոնացումը
նրա վրա, թե ինչ արեց բռնության ենթարկվածը և
ոչ թե՝ բռնարարը, շեղում է բռնության հիմնական
պատճառից ու պատասխանատուից:

Օրինակ՝ **«Ինչո՞ւ այդպես վարվեցիր»**-ի փոխարեն՝
**«Ինձ հետաքրքիր է, թե ինչը ստիպեց քեզ այդպես
արձագանքել»**

Օրինակ՝ **«Ինչո՞ւ է սա քեզ համար կարևոր»**-ի
փոխարեն՝ **«Բերեք վերլուծենք այն պատճառները,
թե ինչու է սա Ձեզ համար այդքան կարևոր»**


2. Բռնությունից տուժածին մի ասեք, թե ինչպես
նա զգա: Մեկին ասել՝ «Մի անհանգստացիր դրա
մասին» կամ «Մի տխրիր», նշանակում է թելադրող
վերաբերմունք ցուցաբերել: Բռնությունից հետո մարդն

անխուսափելիորեն հույզեր է ունենում, և ասել նրան՝ մի ապրիր այդ հույզերը, կարող է ընկալվել կարծես ամոթ կամ սխալ արարք կամ որ դուք իրեն չեք հասկանում: Նման արտահայտությունները կարող են արգելափակել մարդուն ու թույլ չտալ, որ նա անկեղծանա:

3. Մարդուն պետք չէ ասել, թե ինչն է իր համար լավագույն տարբերակը կամ որ դուք «իր վիճակը լիովին հասկանում եք»: Պետք չէ բռնությունից տուժածին քարոզել, թե նա «ինչ պետք է անի» կամ «պետք չէ անի»: Դուք նրա վիճակը կամ թե ինչ է կատարվում նրա հետ լիովին չեք կարող հասկանալ, ուստի պետք է հիմնվենք միայն նրա գնահատականների վրա: Կարող եք, օրինակ, առաջարկել՝ գնալ ապաստան՝ բացատրելով, որ նրան մեծ վտանգ է սպառնում, բայց թույլ տվեք նաև, որ այս հարցի կապակցությամբ նա իր հույզերն արտահայտի ու կարողանա վերջնական որոշումն ինքնուրույն կայացնել:
4. Մի ստիպեք կամ ճնշում գործադրեք, որ նա խոսի մի բանի մասին, որի մասին չի ցանկանում խոսել: Մի հարցրեք մանրամասներ (բացի նրանցից, որոնք անհրաժեշտ են նրա ապահովության համար): Երբ մարդը տրավմա հարուցող ապրումները բացատրում է, նա կարող է դրանք վերապրել, իսկ դա բոլորովին անհրաժեշտ չէ մեր աշխատանքը պատշաճորեն կատարելու համար: Եթե նա կարիք ունի խոսել մանրամասների մասին, խրախուսեք, որ խոսի հոգեբանի հետ:
5. Մի ստեղծեք կեղծ կամ ուռճացված ակնկալիքներ, մի արեք նման արտահայտություններ՝ «Ամեն ինչ լավ է լինելու», քանի որ ի՞նչ դուք, ի՞նչ էլ նա չեք կարող իմանալ, թե ամեն ինչ իրականում ինչպես է լինելու: Վստահությունը կորցնելու ամենահեշտ ճանապարհը մի բան խոստանալն ու դա չանելն է:

Հաղորդակցման հմտություններ

Բռնության ենթարկվածի գաղափարներն ավելի կարևոր են, քան Ձերը, այնպես որ լսե՛ք դրանք: Քննադատելը մեր ցուցաբերած վերաբերմունքի վերջին տարբերակը կարող է լինել, փոխարենը՝ պետք է ընդունենք նրա հույզերն ու խրախուսենք նրան:



Լավ լսելու արգելակները

- Դատելու համընդհանուր միտումը
- Անմիջապես եզրակացություններ անելու միտումը
- Ենթադրությունը, որ բոլորը մտածում են այնպես, ինչպես մենք
- Նեղմտությունը՝ կարծես մենք ամեն պատասխան ունենք
- Միտքը միայն շատ կարճ ժամանակով կենտրոնացնելու կարողությունը
- Երազանքներով մտածելակերպը
- Օգտագործել երկիմաստ բառեր



Լավագույն տարբերակն այցելուներին ընտանեկան բռնության ոլորտում մասնագիտացած կենտրոններ ուղղորդելն է: **Զանգահարեք Կանանց աջակցման կենտրոն՝ 099-887-808 հեռախոսահամարով:**

Վ ե. Ինչպես աշխատել Թեժ գծի վրա

Մարդիկ կարող են ձեր գրասենյակ զանգահարել, նույնիսկ եթե Թեժ գիծ չունեք: Ստորև մի շարք խորհուրդներ են, թե ինչպես վարվել հեռախոսազանգերի հետ:

Եթե կնոջը **վտանգ է** սպառնում, խնդրեք նրան **անմիջապես զանգահարել ոստիկանություն** կամ **099-887-808՝** ապաստարանում պաշտպանվելու համար: Եթե դա **հրատապ զանգ չէ**, խորհուրդ տվեք **մասնագիտական օգնության դիմել՝ 099-887-808 հեռախոսահամարով զանգահարելով:** Հեռախոսազրույցը պետք է վարել սիրալիր ու ըմբռնող վերաբերմունքով:

1. Նախ, վստահ եղեք, որ զանգահարողի համար ապահով է խոսելը: Ստուգեք՝ մոտիկ է բռնարարը, տնից շուտով դուրս կգա՞, կնայի՞ տուժածի զանգահարած հեռախոսահամարներին:
2. Թեժ գիծը պետք է աշխատի անանունության ու գաղտնիության սկզբունքով: Բռնության ենթարկվածը նույնպես կարող է որոշել կեղծանուն տալ կամ ընդհանրապես անունը չնշել: Մեր նպատակն է նրան անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը տալ և խրախուսել նրան գալ մեր կենտրոն ավելի խորքային զրույցի: Մենք որևէ զանգ չենք մերժում:
3. Միշտ տեղեկացրեք բռնությունից տուժածին, որ հեռանալու կամ ամուսնալուծվելու իր մտադրությունների

մասին բռնարարին չհայտնի, քանի որ նա կարող է ավելի վտանգավոր դառնալ և նույնիսկ՝ մահացու վնաս պատճառել: Շատ անգամ մարդիկ պարզապես զանգահարում են տեղեկատվություն ստանալու:

Տրամադրեք նրանց այդ տեղեկատվությունը կարեկցանքով, համբերատարությամբ և ըմբռնումով:

4. Երբեմն կինը կարող է զանգահարել՝ պարզապես ստուգելու արդյո՞ք նրբագգաց և սատարող են այնտեղի աշխատակիցները, և դրա հիման վրա վերջնական որոշում ընդունի: Բռնության ենթարկվածներն ընտելացած են, որ իրենց են մեղադրում՝ նույնիսկ վստահելի մարդիկ և ծառայություն մատուցողները: Թեժ գիծը հանձնառություն չենթադրող և անանուն ծառայություն է, այն հնարավորություն է տալիս բռնության ենթարկվածներին մտածել ծառայություններից օգտվելու մասին:
5. Եթե հրատապ դեպք է, գնահատեք իրավիճակը, վտանգը, երեխաների վիճակը: Եթե վտանգ է սպառնում, առաջարկեք զանգահարել ոստիկանություն: Եթե կինը տեղեկացնում է, որ արդեն զանգահարել է, սակայն ոստիկանությունը չի օգնել, Դուք զանգահարեք ոստիկանություն:
6. Եթե կինը կարիք ունի անմիջապես դուրս գալու տվյալ վայրից, որոշեք, թե ինչ ապահով վայրում կարելի է հանդիպել: Կարող եք նրան ուղղորդել դեպի կենտրոն կամ զանգահարել թեժ գծով՝ ապաստան տեղափոխելու համար: Հիշատակեք ապահովության պլանի սկզբունքներից մի քանիսը: Ընդգծեք, որ ավելի լավ է, որ իր կողակցին չասի, որ մտադիր է հեռանալ կամ ամուսնալուծվել: Առաջարկեք, որ փաստաթղթերն ու տան բանալիները հետը վերցնի:
7. Եթե զանգահարողը սուիցիդալ մտքեր է արտահայտում, փորձեք որքան հնարավոր է շատ տեղեկություններ ստանալ, այդ թվում՝ հեռախոսահամարը, իր համար վստահելի մարդու համարը, իր ներկայիս գտնվելու վայրը, տան հասցեն:

Ինչպես բացահայտել հուզական արձագանքները

Թեժ գծով զանգահարող որոշ կանայք կարողանում են ավելի լավ արտահայտվել, քան մյուսները: Նրանք կարողանում են բնութագրել բռնության հետ կապված իրենց զգացումները (հուզական արձագանքները), օր.՝ «Այնքան անօգնական/վախեցած/բարկացած/մեղավոր/ամոթ եմ զգում», կամ «Ինձ թվում է՝ խենթանում եմ»:

Մյուսները կասեն՝ «Ուղղակի անտրամադիր եմ», «Ամեն ինչ իրար է խառնվել»: Զանգահարողի համար օգտակար կլինի սահմանել իր զգացմունքները և զրույցի որոշակի սահմաններ դնել: Եթե գիտեք, թե ինչ զգացմունք է զանգահարողն արտահայտում, կարող եք վստահեցնել, որ այդպես զգալը նորմալ է, որ ձեզ հանդիպած այլ կանայք նույնպես բռնությունից հետո այդպես են իրենց զգում: Եթե թեժ գծով զանգահարում է բռնության ենթարկվածի հարազատը կամ ընկերը, կարևոր է խնդրել, որ բռնության ենթարկվածն ինքը զանգահարի, երբ ապահով վայրում է, այնուհետև հեռացնի հեռախոսահամարը հեռախոսից, որպեսզի հետագայում խնդիրներ չառաջանան:

Այս ուղեցույցը մշակվել է՝ օգնելու Ձեզ ըմբռնել բռնության ենթարկվածի զգացմունքները և առաջարկելու միջամտության եղանակներ:

1. Վերահսկողության կորստի և անօնգնականության արտահայտում

Ինչ-որ մեկի փոփոխական տրամադրության ու պոռթկումների ներքո ապրելը վախ և ֆրուստրացիա առաջացնող ապրելակերպ է, որը հեշտորեն կարող է հանգեցնել սեփական կյանքի նկատմամբ վերահսկողուն չունենալու զգացումի: Անկախ նրանից, թե ինչպես է կինը փոխում իր վարքագիծը, տղամարդը միշտ կարող

է առանց պատճառի հարձակվել նրա վրա՝ նույնիսկ եթե նա կատարում է նրա բոլոր ցանկությունները:

Հետևանքները. Վախը հաճախ առաջ է բերում հուզական կաթված, այսինքն՝ բռնության ենթարկված անձը իրեն պասիվ է զգում, իրեն թվում է, թե իր շուրջը տեղի ունեցող ամեն ինչ ուղղված է իր դեմ:

Միջամտության ստրատեգիա. Օգնել տուժածին ետ բերել վերահսկողության զգացողությունը՝ օգնելով նրան բացահայտել այն պահերը, երբ նա ճնշված և անօգնական է իրեն զգում: Օգնեք նրան առանձնացնել խնդրի առանձին բաղադրիչները, օրինակ՝ անմիջական բժշկական, իրավական կամ սոցիալական ծառայություններ ստանալու կարիքները: Օգնեք նրան՝ բացահայտել խնդիրը լուծելու եղանակներ: Իր որոշումները հենց ինքը պետք է կայացնի: Եթե նրան ասվի՝ ինչ անել, ապա դա միայն կբարձրացնի անօգնականության և վերահսկողություն չունենալու զգացումը:

2. Վախ

Ծեծված կանայք բազմաթիվ պատճառներ են բերում, թե ինչու են շարունակում ապրել իրենց բռնության ենթարկած անձանց հետ, սակայն բոլորի մոտ ընդհանուր պատճառներից է վախը: Վախ՝ վրեժխնդրությունից, եթե ինքը հեռանա կամ դիմադրի, մահվան կամ ցավի սպառնալիքից, հարձակումների անկանխատեսելիությունից և սրությունից, մենակ մնալուց, հատկապես եթե ամուսինն ասել է, որ առանց իրեն նա ոչինչ չի կարող անել:

Հետևանքներ. Վախից շատ ծեծված կանայք կարծես քարանում են, վախը դեկավարում է նրանց գործողություններն ու որոշումները՝ կրկին ստիպելով զգալ, թե անկարող են վերահսկել սեփական կյանքը: Այս

կանայք այնպիսի շոկի և վախի մեջ են ապրում իրենց մտերիմի գործադրած բռնությունից, որ անկարող են դառնում իրավիճակին արձագանքել: Վախը բռնարարի վրեժխնդրությունից ծեծված կանանց կանխում է օգնություն խնդրել ընկերներից, հարազատներից, նույնիսկ՝ ոստիկանությունից և այլ մարմիններից:

Միջամտության ստրատեգիաներ. Զանգահարողին վստահեցրեք, որ իր տվյալները գաղտնի են պահվում: Եթե բռնություն գործադրողի հետ չի ապրում, կարելի է առաջարկել տան անվտանգությունը բարձրացնել, նրա հետ հավանական հանդիպման ժամանակ այլ մարդկանց ներկայություն ապահովել (օրինակ՝ եթե նա այցելում կամ այցելության է բերում երեխաներին): Բռնարարի հետ ապրելու դեպքում առաջարկներից մեկը կարող է լինել այլընտրանքային ապաստարան տեղափոխվելը, փաստաբանի օգնությանը դիմելը: Կարելի է տեղեկատվություն տալ դատական կարգադրություն ստանալու, հայցեր ներկայացնելու, խնամակալության, բաժանվելու/ ամուսնալուծվելու գործողությունների հետ կապված:

3. Զայրույթ

Ընտանեկան բռնության ենթարկված անձինք կարող են նաև զայրույթ ապրել: Կինը կարող է իրեն խաբված զգալ կազմակերպություններից, որոնք կարող էին օգնել, բայց չօգնեցին, ոստիկանությունից, որի աշխատակիցները բարեհաճ չեն եղել, ընկերներից, որոնք մեջք են թեքել իրեն մերժելու կամ բռնարարի վրեժից վախենալու պատճառով: Թեժ գիծ զանգողներից ոմանք կարող են բռնարարի նկատմամբ իրենց զայրույթն արտահայտել, շատերը՝ ոչ:

Հետևանքները. Ներքնայնացված զայրույթի արդյունքում առաջանում է դեպրեսիա, մեղքի ու ինքնամեղադրման

զգացում: Զանգահարողը կարող է նաև զայրույթն ուղղել ուրիշների նկատմամբ՝ երեխաների, ուսուցիչների, սոցիալական Ժառանգության աշխատողների, Ձեր:

Միջամտության ստրատեգիա. Կարող է թվալ, թե զանգահարողն իր զայրույթը Ձեզ է ուղղում, Դուք միգուցե առաջին մարդն եք, ում նա կարողանում է արտահայտել իր զայրույթը: Թույլ տվեք, որ նա դա անի, սակայն նաև օգնեք նրան, որ գիտակցի, որ իր զայրույթն ուղղված է իր բռնարարին:

4. Մեղք

Մեղքի ակունքները սխալ ուղղությամբ ուղղված զայրույթի մեջ են: Այն առաջ է գալիս այն սխալ պատկերացումից, թե եթե կինը ծեծվում է, ապա դա նրանից է, որ դրան արժանի մի բան է արել, ինքն է հրահրել բռնությունը:

Հետևանքներ. Քանի որ կինն իրեն է մեղադրում ու մեղավոր է զգում բռնարարի գործողությունները չվերահսկելու համար, նա ձգձգում է օգնության դիմելու գործընթացը: Նա կարող է համարել, որ դա իր մեղքն է, որ բռնության արդյունքում ամուսնությունն ընդհատվեց, երեխաները զրկվեցին իր հետ ապրող հորից, ընտանիքը զրկվեց նախկին ֆինանսական կարգավիճակից և այլն:

Միջամտության ստրատեգիա. Օգնեք կնոջը ուշադիր ուսումնասիրելու, թե բռնությունն ինչ հետևանք է ունենում իր ամուսնության, երեխաների ու կենսակերպի վրա: Օժանդակեք բացահայտել ֆիզիկական բռնության մեջ ապրելու իրատեսական այլընտրանքներ:

5. Ամոթ

Կինը կարող է խեղճանալ, որ իրեն ծեծում են: Նա կարող է ամաչել իր կապտուկներից, սպիերից: Նա կարող է հիմար

վիճակում իրեն զգալ, որ նվիրվել է բռնարար տղամարդու և ամաչել, որ համակերպվել է կրկնվող ծեծերի հետ:

Հետևանքներ. Կինը, հնարավոր է, երբեք չի քննարկել իր խնդիրները կամ զգացմունքները որևէ մեկի հետ և կարող է վարանել դրանք ձեզ հետ կիսել:

Միջամտության ստրատեգիա. Բռնությունից տուժածին հիշեցրեք, որ ամիթ չէ մեկի բնավորության հարցում սխալվելը կամ հավատալը նրա խոստումներին, թե կփոխվի: Օգնեք կնոջը թեթևացնել իր զգացմունքները բեռից:

6. Մեկուսացում/Կասկած հոգեկան առողջության մասին

Ֆիզիկական բռնության մշտական վախի մեջ ապրելը կարող է մարդուն մղել սոցիալական ինքնամեկուսացման: Բռնարարը կարող է փորձել խրախուսել այդ մեկուսացումը, իսկ համայնքը, որտեղ նրանք ապրում են, կդիտարկեն իրավիճակը որպես անձնական խնդիր: Մեկուսացված վիճակում որևէ մեկը չի կարող հավաստիացնել կնոջ ողջամտությունը, նման կարծիք կարող է արտահայտել միայն բռնարարը, որը տևական իրեն անվանում է խուլագար և գիժ:

Հետևանքներ. Կինը կարող է կորցնել սեփական դատողությունը և սկսել մտածել, թե հենց ինքն է «խենթը»:

Միջամտության ռազմավարություն. Վստահեցրեք կնոջը, որ մեր փորձը ցույց է տալիս, որ նա այդպիսի իրավիճակում միակ կինը չէ: Օգնեք նրան տրամաբանական մտածողությունը վերգտնել, վերականգնել սեփական տեսանկյունը հարցի շուրջ:

7. Ամբիվալենտ (ներհակադիր զգացմունքներ (սեր/ատելություն)

Բռնարարը միշտ չէ, որ բռնություն է կիրառում: Հաճախ «բռնության ցիկլը» ներառում է սիրառատ ու զոջումով

լի վարքագիծ, որը դուր է գալիս կնոջը, չնայած նրա համար ավելի ու ավելի դժվար է դառնում համադրել նրա լավ կողմերը բռնության հետ: Բռնության պատճառով կինն ատում է նրան, բայց շարունակում է էմոցիոնալ ու ֆինանսական կախվածության մեջ գտնվել: Կինը հաճախ կարծում է, թե բռնարարն իր կարիքն ունի:

Հետևանքներ. Շփոթմունք ու համոզմունք, թե նա կփոխվի:

Միջամտության ստրատեգիա. Վստահեցրեք զանգահարողին, որ շփոթմունքն ու խառը զգացմունքները նորմալ են: Խրախուսեք կնոջը վերլուծել բռնության պատմությունը և բացահայտել կրկնվող վարքագիծն ու ընդունել, որ նախկինում փոխվելու խոստումները բավարար չեն եղել բռնությունը կանխելու համար:

V գ. Առաջարկեք տարբերակներ, ոչ խորհուրդ

Վերահսկողության զգացումի վերականգնում

 Այս հատվածը հատկապես նախատեսված է դեպք վարողների և այցելուների հետ երկարաժամկետ աշխատողների համար

1. Ներուժի հզորացման գաղափարի տակ ընկած է այն համոզմունքը, որ եթե մարդուն ասեն՝ ինչ անի, նա հանգիստ կարող է դա անել, սակայն պարտականության կամ վախի զգացումից: Սա չի ունենա նույն հետևանքը, երբ անձն ինքն է որոշում, թե իրեն ինչ է անհրաժեշտ անել, ինչն է իրեն դրդում մի բան անել նվիրվածությամբ, նպատակասլացությամբ, վերահսկողությամբ: Այս սկզբունքն առանցքային է:

Առաջարկեք տարբերակներ, ոչ խորհուրդ: Յուրաքանչյուր տարբերակ ներկայացրեք որպես համազոր՝ առանց դատելու կամ դրանցից մեկի նկատմամբ կողմնակալության: Հարցրեք նրան, թե իր կարծիքով յուրաքանչյուր տարբերակի դրական ու բացասական կողմերը որոնք կարող են լինել, քննարկեք դրանք իր հետ: Սակայն թույլ տվեք, որ որոշումն ինքը կայացնի: Երբեք նրան մի ասեք.

-  որևէ «ընտանեկան բռնություն վերապրածների» համար լավագույն տարբերակը,
-  հաջորդ քայլով ինչ պետք է նա անի,
-  ինչպես պետք է իրեն զգա:

Տեղեկատվություն ու տարբերակներ առաջարկելով՝ կնոջը տալիս եք հնարավորություն ունակ լինելու սեփական որոշումները կայացնել: Իր փոխարեն գործելու փոխարեն այս մեթոդի միջոցով խթանեք նրա ինքնապավիստումը, մի բան, որ շատ կարևոր է բռնությունից հետո առաջ շարժվելու համար:

2. Անհատական մոտեցում ցուցաբերեք յուրաքանչյուր այցելուի հետ աշխատանքին: Թույլ տվեք, որ նա ուղղորդի հաջորդ քայլերը:
3. Բռնությունից հետո շատ այցելուների մոտ նկատվում են տրավմատիկ երկարաձգվող արձագանքներ, որոնք ունենում են ֆիզիկական ու էմոցիոնալ դրսևորումներ (տես՝ Երրորդ գլուխը): Օգնեք այցելուներին ընկալել իրենց հույզերն ու մարմնի արձագանքները և կարգավորել այդ արձագանքները: Հանգստանալու տեխնիկաներ սովորեցրեք նրանց:

Կապվածության վերականգնում

Այցելուի հետ աշխատանքում մեր յուրաքանչյուր գործողության հետ կապված հստակ ու անկեղծ լինելը,

Նախապես տեղեկացնելը շատ կարևոր է նրա մոտ վստահության ու կապվածության զգացումը վերականգնելու համար:

Բռնության ենթարկված անձի մոտ խարխված է վստահության զգացումը: Բռնությունը նրանց ընտելացրել է, որ ամենամտերիմ մարդիկ նույնիսկ կարող են վիրավորել իրենց: Բռնությունը նաև ընտելացնում է, որ բարությունը որոշակի գին ունի: Բռնությունը նաև սովորեցնում է մերժել բնագոյներն ու ապավինել կյանքը փրկելու վարքագծին:

Օգնեք այցելուին վերականգնել վստահությունը:

-  Նրան արժեքավորող խոսքեր ասեք, օր.՝ «Ես մտահոգ եմ ու կարծում եմ Դուք ավելիին եք արժանի»
-  Խրախուսեք նրան նոր զբաղմունքներ գտնել կամ հմտություններ սովորել, որոնցով նա կարող է հպարտանալ կամ որոնք նա նախկինում զարգացրել է
-  Միասին վերլուծեք, թե իր կյանքում ով կա, որ կարող է իրեն աջակցել, մենք չենք կարող նրան միակ աջակցող օղակը լինել
-  Խրախուսեք, որ նա ուրիշների հետ միասին հաճելի բաներով զբաղվի:
-  Խրախուսեք օգտվել կրթվելու հնարավորություններից:

V Է. Սահմաններ

Շահառուների ինտեգրման գործընթացում ամենակարևոր բաղադրիչներից է համապատասխան սահմանների տարանջատումը: Այնպես, ինչպես վստահությունն է կոտրվում բռնության արդյունքում, նույնպես խախտվում է անձի ունակությունը՝ տարբերակելու առողջ հարաբերությունները անառողջ հարաբերություններից: Բռնարարքի ժամանակ սահմանները կամ թույլ են

տարանջատված, կամ իսպառ բացակայում են: Բռնությունից տուժածների և սոցիալական աշխատողների միջև սահմանները պետք է հստակ զատվեն և պահպանվեն:

Սոցիալական աշխատողները չեն կարող հանդես գալ որպես շահառուի ընկերներ կամ հարազատներ: Չնայած նրան, որ մենք խորապես ցավում ենք նրանց համար և առհասարակ մտահոգ ենք բռնությունը մեր կյանքից բացառելու հարցով, մենք միշտ պարտավոր ենք մեր և շահառուի հետ հարաբերությունները պահել պրոֆեսիոնալ հարթակում: Մենք չենք կարող ունենալ ֆավորիտներ, ցուցադրաբար հակակրել այս կամ այն շահառուին կամ ակնկալել փոխադարձ վերաբերմունք:

Մեր դերը որպես սոցիալական աշխատողներ ենթադրում է, որ մենք մեծաքանակ ջանքեր պետք է ներդնենք շահառուի խնդրի լուծման գործընթացում: Եթե միաժամանակ առաջ գա նաև հոգածության զգացումը, հնարավոր է, որ մենք ստանձնենք փրկչի դեր՝ հավատալով, որ տուժածին պետք է փրկել և ամեն ինչ անել այդ ուղղությամբ: Դա կարող է հանգեցնել նրան, որ մենք դադարենք խրախուսել տուժածին կայացնել իր սեփական որոշումները և ինքնուրույն հանդես գալ: Եթե նա զայրանա կամ, օրինակ, վերադառնա նույն վտանգավոր իրավիճակին, մենք կարող ենք անձնական մակարդակում վերաբերվել՝ զգալով զայրույթ ու վիրավորանք: Փրկչի դերում զգալը կարող է նույնիսկ մղել մեզ դատողություններ անել և քննադատել կամ պատժել նրան սխալ արարքներ անելու կամ մեր խորհուրդներին չհետևելու համար: Սա անընդունելի է: Սա այն պահն է, երբ գիտակցում ենք, որ մեր դերին վերաբերվել ենք ոչ պրոֆեսիոնալ:

Փրկչի դերը նման է բռնարարի դերին, քանի որ այն նույնպես ենթադրում է տուժածի նկատմամբ իշխանության ու գերակայության հարաբերություն: Այն մերժում է կնոջ՝

ինքն իրեն օգնելու կարողությունը: Հարաբերությունների մոդելը, որը իշխանություն դրսևորելով և վերահսկողություն սահմանելով նմանվում է բռնարարի կերպարին, կտրականապես մերժելի է մեր աշխատանքում: Այն բացասական է թե՛ աշխատակազմի, թե՛ տուժածների տեսանկյունից: Նման դերակատարումը ոչ միայն կարող է ֆրուստրացիա ու հիասթափություն առաջացնել մեզ մոտ, այլև՝ խափանել տուժածի ապաքինման գործընթացը: Մեր խոսելաձևի, վարքագծի և կատարած աշխատանքի միջոցով մենք պետք է ձգտենք ստեղծել հարաբերություններ՝ հիմնված հավասարության վրա, այլ ոչ՝ հիերարխիայի: Սա կխրախուսի տուժածի ինքնագործությունը:

Մենք պետք է կարեկցանք ցուցաբերենք տուժածի նկատմամբ՝ միաժամանակ ընդունելով թե որքան ուժ, ճկունություն և ողջամտություն է նա ցուցաբերել ներկայիս իրավիճակին հասնելու և նման դժվար իրավիճակից դուրս գալու համար: Նման մոտեցումը թույլ կտա մեզ աջակցել նրան բացահայտելու իր սեփական զգացողությունն ու դատողությունը իր համար լավագույն լուծումները գտնելու ուղղությամբ և խրախուսել նրան իր սեփական հաջողություններին հասնելու ճանապարհին: Կարևոր է չդրդել, չստիպել տուժածին, ինչպես նաև նրա փոխարեն չգործել, օրինակ՝ նրա փոխարեն առաջարկներ կամ զանգեր չկատարել, հատկապես այն դեպքում, երբ նա չի խնդրել դա: Երբ նա չի համաձայնվում Ձեր առաջարկի հետ, օգտագործեք դա որպես հնարավորություն Ձեր մոտեցումը շտկելու համար, և մի դիտարկեք դա որպես նրա կողմից անշնորհակալության արտահայտում:

Խորհուրդներ սահմանները պահպանելու ուղղությամբ.

-  Մի՛ եղեք շատ պասիվ, հեռացած տուժածից և նրա կարիքների նկատմամբ անտարբեր:
-  Մի՛ եղեք ագրեսիվ՝ հավատացած լինելով, թե գիտեք՝ ինչ

է բռնության ենթարկվածին հարկավոր: Նրա փոխարեն «նրա լավի համար» որոշումներ մի կայացրեք:

-  Մի խղճացեք տուժածին և մի արեք նրա համար բաներ, որոնք ինքը նույնպես կարող էր անել՝ արդյունքում խախտելով ծառայությունների մատուցման պրոֆեսիոնալությունը (օր.՝ նվերներ կամ փոխատվություն նրան առաջարկելը):
-  Մի եղեք չափից դուրս ընկերական՝ շահառուի հետ կիսելով ձեր անձնական ինֆորմացիան: Սա կարող է խախտել սահմանները և վերածել ձեր հարաբերություններն ընկերության՝ շահառուի համար բարդացնելով մեր ծառայություններից հրաժարվելն ու առաջ ընթանալը: Նա կարող է Ձեր նկատմամբ զգալ նույն կապվածությունը, ինչ զգում էր բռնարարի նկատմամբ: Կարևոր է, որ շահառուն ինքնուրույն լինի և կարողանա ինքը լուծել իր խնդիրները:

Սահմանները խախտելու վտանգ կա, եթե.

-  ձգտում եք դուր գալ կամ հավանության արժանանալ շահառուների կողմից,
-  կարծում եք, որ մյուս աշխատակիցները ավելի քիչ են մտահոգված շահառուների համար, քան Դուք,
-  չեք կարողանում մերժել որևէ բան շահառուներից,
-  շահառուն չի ուզում շփվել մյուս աշխատակիցների հետ և սպասում է, որ հաղորդակցվի միայն Ձեզ հետ,
-  շահառուներից նվերներ կամ ծառայություններ եք ընդունում,
-  հաղորդակցությունը մյուս աշխատակիցների կամ ղեկավարի հետ թույլ է:

Շահառուները կարող են պարբերաբար ինչ-որ բան պահանջել կամ խնդրել: Նրանք կարող են անտարբեր լինել և չկատարել Ձեր խնդրանքները: Համբերատարությամբ և ստեղծագործաբար մոտեցեք գործին և նրանց

ներգրավելու համար նոր ուղիներ փնտրեք: Անկեղծորեն ընդունեք, որ ինչ-որ հարցի պատասխանը չունեք: Որևէ բան մերժելիս՝ ցուցաբերեք վճռականություն՝ պահպանելով քաղաքավարությունը: Օգտագործեք ոգեշնչող խոսելաոճ և ցույց տվեք նրանց, որ հավատացած եք, որ նրանք կարող են ինքնուրույն արդյունքի հասնել: Հետաքրքրվեք, թե ինչպես կարող եք աջակցել իրենց արդեն ձեռնարկած քայլերում:

Հետևողականություն

Հետևողականությունը կարող է այցելուին առաջարկածներից ամենակարևորը լինել: Հետևողականությունը նշանակում է, որ մատուցված ծառայությունը միանման է բոլոր շահառուների համար: Այն ենթադրում է, որ կկատարեք խոստացած ամեն ինչ, անկեղծորեն կընդունեք, եթե որևէ բան չեք կարող անել և միշտ պատրաստ կլինեք ընդունել շահառուին անկախ նրանից, թե քանի անգամ նա կվերադառնա բռնարարի մոտ: Հետևողականությունն առանցքային է մեր աշխատանքում, քանի որ այն շահառուին թույլ է տալիս իմանալ, թե ինչ կարելի է ակնկալել, պատասխանատու լինել իրենից ակնկալվողի համար և որ ամենակարևորն է՝ ներշնչում է պաշտպանված լինելու վստահություն: Ի տարբերություն բռնության՝ հետևողականությունը հնարավորություն է տալիս բռնության ենթարկվածի մոտ վերականգնել ճշտի և սխալի, ճշմարտության և խաբեության տարբերակումը, ինչը իր հերթին թույլ է տալիս նրան վստահել իր սեփական դատողությանն ու բնազդներին: Հետևողականության պահպանումը պետք է լինի մեր աշխատանքի անբաժանելի մասը:

VI. ԱՇԽԱՏԱՆՔ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԽՄԲԵՐԻ ՀԵՏ

ա. Հաշմանդամություն ունեցող վերապրածներ

բ. Բռնություն վերապրած տղամարդիկ

գ. Բռնությունը վերապրած լեսբի, գեյ,
բիսեքսուալ և տրանսգենդեր (ԼԳԲՏ) անձինք



Ընշելը բռնություն գործադրելու գլխավոր շարժառիթներից է: Կանանցից շատերին սպառնացող ընտանեկան բռնությունը պայմանավորված է հասարակությունում տարածված սեքսիզմով՝ կանանց նկատմամբ տղամարդկանց գերակայության մասին կարծրատիպերով ու իդեալներով: Օրինակ, այն փաստը, որ ակնկալվում է, որ տղամարդիկ պետք է լինեն տեր, իսկ կանայք՝ հնազանդ, նպաստում է, որ տղամարդիկ նորմալ համարեն վերահսկել և նույնիսկ բռնություն կիրառել իրենց կանանց նկատմամբ, իսկ բռնության ենթարկված կանանց չեն հանդիպում մարդիկ, ովքեր կհամարեն, որ նրանց հետ տեղի ունեցածը սխալ է և ովքեր պատրաստ կլինեն օգնություն ցուցաբերել:

Ճնշման մյուս տեսակները ևս հանգեցնում են ընտանեկան բռնության: Հոմոֆոբիան և տրանսֆոբիան նպաստում են բռնության լեսբի, գեյ, բիսեքսուալ եւ տրանսգենդեր (LGBT) անձանց նկատմամբ: Բռնարարները նաև հղում են անում այն համոզմունքին, թե հաշմանդամություն ունեցող մարդիկ հատուկ կարիքներ ունեցող լիակատար քաղաքացիներ չեն, այդպիսով՝ արդարացնելով իրենց արարքները հաշմանդամություն ունեցողների նկատմամբ:

Բացի ընտանեկան բռնությունից, խտրականությունն ու այլ տեսակի ճնշումը զուգակցվում են տրավմայի հետ, դառնալով տրավմատիկ ապրումների համախումբ, ուստի դրանք չեն կարող հաղթահարվել առանձին-առանձին: Ճնշումն ազդում է ընտանեկան բռնություն վերապրած անձանց ապաքինման գործընթացի վրա, ինչպես նաև որոշիչ դեր է խաղում մեր ծառայություններից օգտվելու կամ դրանց վերաբերյալ տեղեկացված լինելու հարցում: Ճնշման այս տեսակները լրջորեն խոչընդոտում են տուժածներին՝ օգնություն ստանալ: Այն թյուր պատկերացման արդյունքում, թե ընտանեկան բռնությունը տեղի է ունենում միայն առողջ տղամարդու կողմից առողջ կնոջ նկատմամբ, այս նկարագրությանը

չհամապատասխանող տուժածներն ուշադրության
չեն արժանանում և չեն ստանում համապատասխան
Ժառայություններ: Ստորև ներկայացված են որոշ
փաստեր ընտանեկան բռնություն գործադրող և դրան
ենթարկված անձանց վերաբերյալ: Այս փաստերն
անհրաժեշտ է յուրացնել մեր հաճախորդներին
պատշաճ աջակցություն ցուցաբերելու համար:

-  Ցանկացած անձ՝ անկախ ֆիզիկական կազմվածքից,
ուժից կամ սեռից կարող է հանդես գալ որպես բռնարար:
-  Բռնարարը երբեք փոխադարձ չէ: Չնայած,
որ ամուսիններից յուրաքանչյուրը կարող է
բռնություն կիրառել, բռնարարները դա անում
են մյուսին վերահսկելու նպատակով, մինչդեռ
ընտանեկան բռնություն վերապրողը բռնության
դիմում է ինքնապաշտպանության կամ
բռնարարը դադարեցնելու նպատակով:
-  Բռնարարը կարող է տեղի ունենալ՝ անկախ
հարաբերության վաղեմությունից, կենսապայմաններից
կամ հարաբերության տեսակից:
-  Անձի ինքնությունը երբևէ չպետք է օգտագործվի որպես
նրա նկատմամբ բռնություն կիրառելու արդարացում:
Բռնությունը երբևէ վաստակված կամ անհրաժեշտ չէ:

Ընտանեկան բռնության արտահայտումները հիմնականում
միանման են բնակչության բոլոր խմբերի համար: Սակայն
բնակչության հատուկ խմբերի պարագայում բռնարարները
կարող են օգտվել որոշ հավելյալ հանգամանքներից, ինչը
հնարավոր չէր լինի, եթե ճնշմանն ու խտրականությանը
հայաստանյան հանրությունը կողմնակից չլիներ:
Ստորև ներկայացված են որոշ օրինակներ:

VI ա. Հաշմանդամություն ունեցող վերապրածներ

Վիճակագրությունը ցույց է տալիս, որ հաշմանդամություն ունեցող կանայք իրենց կյանքի ընթացքում առավել հաճախ են ենթարկվում ընտանեկան և սեռական բռնության, քան հաշմանդամություն չունեցող կանայք: Հետազոտությունները ցույց են տալիս, որ հաշմանդամություն ունեցողների՝ բռնության ենթարկվելու ավելի բարձր հավանականությունը մասնակիորեն կապված է այն հանգամանքի հետ, որ նրանք առավել հաճախ գտնվում են հաստատություններում, որտեղ իրենց նկատմամբ կա վերահսկողություն: Սա նշանակում է, որ նրանք ավելի հաճախ են հայտնվում իրավիճակներում, երբ կան մարդիկ, ովքեր իրենց նկատմամբ գերակայելու արտոնված իշխանություն ունեն: Ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձինք ամենօրյա կյանքի որոշ ասպեկտներում կարող են օգնության կարիք ունենալ, ինչը խնամակալներին նրանց նկատմամբ որոշակի իշխանությամբ է օժտում: Ոմանք կարող են ճնշել ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձին՝ նրա տեղափոխումը մերժելով: Մեկ այլ օրինակ է կենսական նշանակության իրերի տեղափոխումը, որպեսզի կույր անձը չկարողանա դրանք գտնել: Բռնարարը կարող է դիտմամբ ինֆորմացիա թաքցնել խուլ անձինց, որպեսզի վերջինս չկարողանա օգնություն ստանալ: Քանի որ ճնշման այս տեսակները հնարավոր են դառնում որոշակի հաշմանդամության արդյունքում, դրանք բնորոշ են ընտանեկան բռնություն վերապրած հաշմանդամ անձանց: Նշվածը վերաբերում է նաև ընտանիքի տարեց կամ հիվանդ անդամներին:

Ավելին, կարծրատիպները նույնպես կարող են ազդել բռնարարի գործադրման ձևի վրա, ինչպես նաև՝ այն հանգամանքի, թե արդյո՞ք անձը կարող է օգնություն ստանալ կամ լսելի դարձնել իր խնդիրը: Օրինակ, կա ազդեցիկ կարծրատիպ, որ մտավոր հաշմանդամությամբ

անձանց չի կարելի հավատալ, քանի որ նրանք խաբում են կամ չգիտեն, թե ինչ են խոսում: Սա բռնարարներին անպատժելիության վստահություն է ներշնչում: Սա նաև նշանակում է, որ եթե մտավոր հաշմանդամությամբ անձը դիմի օգնության, հավանական է, որ նրան չհավատան: Պատմականորեն բռնությունն օգտագործվել է որպես հաշմանդամություն ունեցող անձանց կառավարման միջոց տարբեր փակ հաստատություններում, ինչպես նաև ցավալիորեն օգտագործվել է որպես բուժման մաս, ինչը նշանակում է, որ ընտանեկան բռնությունը ոչ միայն անտեսվում է, այլև՝ արդարացվում:

Խոչընդոտներ, որոնց պատճառով հաշմանդամություն ունեցող անձինք և տարեցները չեն հայտնում բռնության մասին

-  Հաղորդակցվելու խնդիրներ ունեցողները չեն կարողանում պատմել բռնության մասին այնպես, որ դա հասկանալի լինի ընտանիքի անդամներին կամ ծառայություն մատուցողներին:
-  Որոշ ընտանիքներ ամաչում են հաշմանդամություն ունեցող երեխայից կամ ընտանիքի անդամից, իսկ բռնության մասին պատմելը նշանակում է բացահայտել իրենց համար ամոթալի այդ հազամանքը:
-  Հաշմանդամություն ունեցող անձինք վախենում են, որ իրենց չեն հավատա:
-  Բռնարարը կարող է սպառնալ հաշմանդամություն ունեցող անձին, որ պատմելու դեպքում կվնասի նրան:
-  Հաշմանդամություն ունեցող անձինք վախենում են իրենց գոյությունը պահպանող խնամակալից զրկվելուց և հավատացած են, որ ստիպված են որոշակի բռնություն հանդուրժել:
-  Հաշմանդամություն ունեցող անձինք վախենում են հեռացվել իրենց տնից և զրկվել իրենց ապրելու վայրն ընտրելու հնարավորությունից:

- 🎗️ Հաշմանդամություն ունեցող անձինք վախենում են, որ նրանց կտեղափոխեն հատուկ հաստատություններ, եթե տանը նրանց նկատմամբ բռնարարքը հայտնաբերվի:

Խոչընդոտներ, որոնց պատճառով հաշմանդամություն ունեցող բռնության ենթարկվածները չեն ստանում Ծառայություններ

- 🎗️ Ծառայությունների հասանալիության պակաս կա՝ պայմանավորված սահմանափակ ռեսուրսներով և աշխատակազմի վերապատրասման բացակայությամբ
- 🎗️ Հաշմանդամություն ունեցողներն իրազեկված չեն, քանի որ հասանելի ռեսուրսների մասին տեղեկատվությունը չի տրամադրվում բրեյլի այբուբենով կամ ձայնագրությամբ, չի սահմանում ընտանեկան բռնությունն այնպես, որ իրենց յուրահատուկ վիճակից բխող չարաշահումները բնութագրի որպես ընտանեկան բռնություն:
- 🎗️ Բռնության ենթարկվածներից շատերն անընդունակ են ինքնուրույն օգնություն խնդրել:
- 🎗️ Հաշմանդամություն ունեցող տուժածները երեխաների խնամակալության իրավունքից զրկման ավելի մեծ վտանգի են բախվելու, եթե բացահայտվի, որ իրենք ունակ չեն ինքնուրույն խնամել երեխաներին:

VI բ. Բռնություն վերապրած տղամարդիկ

Էմոցիոնալ բռնությունը տղամարդկանց նկատմամբ հաճախ հիմնված է այն պատկերացումների վրա, թե ինչպիսին «պետք է լինի» տղամարդը և ինչ պետք է անի: Օրինակ, ակնկալվում է, որ տղամարդիկ պետք է ուժեղ լինեն, չլացեն, լավ աշխատանք ունենան և փող աշխատեն: Էմոցիոնալ բռնությունը տղամարդկանց նկատմամբ կարող է ներառել մատնանշումը, որ նրանք չեն համապատասխանում վերը նշված չափանիշներին և անպետք են դրա

պատճառով: Բացի դա՝ ընդունված կարծրատիպերը, թե կանայք են երեխաների առաջնային խնամողները, կարող են օգտագործվել կին բռնարարների կողմից երեխաներին տղամարդուց խլելու կամ համապատասխան հաստատություններին ներգրավելու սպառնալիքով:

Խոչընդոտներ, որոնց պատճառով բռնություն վերապրած տղամարդիկ չեն հայտնում բռնության մասին

-  Բռնության ենթարկված տղամարդիկ վախենում են, որ մարդիկ իրենց չեն հավատա:
-  Հասարակությունը հակված է այն կարծրատիպին, որ կանայք չեն կարող բռնություն գործադրել:
-  Հնարավոր է, որ նրանց խարանի ենթարկեն ինքնապաշտպանվելու անկարողության համար:
-  Եթե բռնությունը գործադրվել է այլ տղամարդու կողմից (հարաբերությունից դուրս), նրանք կարող են վախենալ որպես նույնասեռական պիտակավորվելուց:
-  Հաճախ ընդունված է համարել, որ նման ծառայությունները մատուցվում են «կանանց և երեխաներին»:
-  Նրանք վախենում են զրկվել իրենց երեխաներից:

Խոչընդոտներ, որոնց պատճառով բռնության ենթարկված տղամարդիկ ծառայություններ չեն ստանում

-  Հասարակության մեջ օգնություն խնդրող տղամարդկանց նկատմամբ առկա է խարան, քանի որ նրանք ընկալվում են թույլ և ոչ տղամարդկային:
Ծառայություն մատուցողները կարող են լինել նույն կարծրատիպերի և համոզմունքների կրողներ:
-  Հավանական է, որ կին տուժածների աջակցության կենտրոնները պատշաճ ուշադրություն չդարձնեն տղամարդկանց կարիքներին:
-  Առկա է տղամարդկանց աջակցության կենտրոնների պակաս:

 Չկան դասընթացներ, որոնք անդրադառնում են տղամարդկանց յուրահատկությունները հաշվի առնող ճգնաժամային միջամտությանը:

24/7 

Հոգեբանական և իրավաբանական խորհրդատվության համար տուժած տղամարդկանց կարող եք ուղղորդել,
Կանանց աջակցման կենտրոն, հեռ: 099-887-808

VI գ. Բռնությունը վերապրած լեսբի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր (ԼԳԲՏ) անձինք

Դժվար է բացահայտել բռնությունը լեսբի կամ գեյ հարաբերություններում, ինչպես նաև հետերոսեքսուալ անձի կողմից ԼԳԲՏ անձի նկատմամբ կիրառված բռնությունը, ինչը դժվարացնում է վեջիններիս օգնություն ստանալը: ԼԳԲՏ հարաբերություններում բռնության ենթարկված անձինք հանդիպում են մի շարք հավելյալ բարդությունների, քանի որ հայաստանյան հասարակությունը հանդուրժողական չէ ԼԳԲՏ անձանց նկատմամբ: Բռնարարը կարող է սպառնալ տուժածին, որ կպատմի նրա հորը կամ ղեկավարին նրա գեյ լինելու մասին: Բռնարարները կարող են օգտագործել նաև վերջիններիս վարկաբեկված դիրքը հասարակությունում, շեշտադրելով, որ ոչ ոք չի օգնի նրանց, քանի որ նրանք, օրինակ, տրանսգենդեր են: ԼԳԲՏ անհատները, ովքեր ընդունված չեն իրենց ընտանիքներում, երբեմն մեծ ընտրություն չունեն բնակության վայրի հետ կապված: Բռնարարները կարող են օգտագործել այս փաստը նրանց դեմ՝ ասելով, օրինակ. «Դու չես կարող ինձնից հեռանալ, քանի որ գյուղում այլ նույնասեռականներ չկան», կամ «Դու ապրում ես իմ տանը, իսկ այստեղ կանոնները սահմանում եմ ես»:

Խոչրդոտներ, որոնց պատճառով ԼԳՏԲ անձինք չեն հայտնում բռնության մասին

-  ԼԳՏԲ հարաբերություններն անվտանգության նկատառումներով հիմնականում թաքնված են հասարակությունից, ինչի արդյունքում տուժածները չունեն օրինակներ, որոնց համեմատությամբ կկարողանան բացահայտել բռնությունն իրենց նկատմամբ:
-  ԼԳՏԲ անձանց ընկերներն ու ընտանիքները երբեմն նույնիսկ չեն ընդունում փաստը, որ նրանք մտերիմ հարաբերություններ ունեն, իսկ այդ հարաբերություններում բռնարարքն՝ առավել ևս:
-  Ընտանեկան բռնություն վերապրած անձը կարող է լինել մեկուսացված և անկարող օգնություն գտնել:
-  ԼԳՏԲ անձանց ընկերներն ու ընտանիքները կարող են հավանություն չտալ նրանց կենսակերպին և համարել, որ բռնությունը դրա արժանի հետևանքն է:
-  Ընտանեկան բռնություն վերապրած անձը կարող է համարել, որ բռնության պատճառն իր սեռական կամ գենդերային ինքնությունն է:

Խոչընդոտներ, որոնց պատճառով ԼԳՏԲ անձանց ծառայություններ չեն մատուցվում

-  Առկա է ԼԳՏԲ բնակչության համար նախատեսված աջակցության ռեսուրսների պակաս:
-  Ընտանեկան բռնություն վերապրած անձինք կարող են վախենալ իրենց ընտանիքի կամ ընկերների հետ կապ հաստատելուց:
-  Կանանց աջակցության կենտրոններն ու կազմակերպությունները չունեն ԼԳՏԲ հարաբերությունների և անհատների կարիքները հոգալու հատուկ պատրաստվածություն: Կարող եք զանգահարել անանուն և անվճար PINK ARMENIA թեժ գծին 060-377-277 ԼԳՏԲ-ի հարցերով

- 🎗 Եթե երկու ամուսիններն էլ արական սեռի են, ապա մեծ հավանականություն կա, որ կալանքը կարող է թյուրիմացաբար կիրառվել ոչ բռնարարի նկատմամբ:
- 🎗 ԼԳԲՏ անձանց նկատմամբ հաճախ ոչ պատշաճ վերաբերմունք է ցուցաբերվել ոստիկանության կամ դատական համակարգի կողմից, ինչի արդյունքում նրանք ընդհանուր անվստահություն ունեն այդ համակարգի նկատմամբ և ապահով չեն զգում հայտնել իրենց նկատմամբ բռնության մասին:

Ինչպես լինել արդյունավետ շահերի պաշտպան

Բռնության ենթարկված հատուկ կարիքներով անձանց արդյունավետ առաջին աջակցություն ցուցաբերելու համար սոցիալական աշխատողները պետք է նախ բացահայտեն և հաղթահարեն իրենց ներքնայնացրած կողմնակալությունը: Բռնություն վերապրած բոլոր անձինք արժանի են մեր օգնությանը՝ անկախ իրենց ինքնությունից: Ահա որոշ խորհուրդներ.

- 🎗 Ձեր նախապաշարումները մի կողմ դրեք մինչև բնակչության հատուկ խմբերի հետ աշխատելը,
- 🎗 Անկեղծորեն ընդունեք, որ մի բան չեք հասկանում:
- 🎗 Հաճախեք դասընթացների կազմակերպություններում, որոնք ունեն բնակչության հատուկ խմբերի հետ աշխատելու փորձ, ինչպես նաև օգտագործեք նրանց աջակցությունը:
- 🎗 Հանրային Տեղեկատվության և Գիտելիքի Կարիք ՀԿ, կամ PINK Armenia (060-377-277) - առաջարկում է դասընթացներ ԼԳԲՏ անձանց հետ կապված խնդիրների վերաբերյալ և կարող է խորհրդատվություն տրամադրել կամ ուղեկցել բռնության ենթարկվածներին ոստիկանություն, դատարան կամ բուժհաստատություն:


- 🎗️ Հույսի Կամուրջ ՀԿ (010-560-134) - առաջարկում է դասընթացներ հաշմանդամության որոշակի տեսակների առանձնահատկությունների վերաբերյալ և կարող է ուղղորդել անհատներին հաշմանդամության կենտրոններ կամ հատկացնել սուրդոթարգմանիչներ:
- 🎗️ Համոզվեք, որ անհրաժեշտության դեպքում թարգմանիչներն ու անհրաժեշտ փաստաթղթերը հասանելի են:
- 🎗️ Թարգմանելիս կամ տեղեկատվություն փոխանցելիս՝ օգտագործեք նույն տերմինները, ինչ բռնության ենթարկվածը: Մի ենթադրեք, թե ով է բռնարարը կամ թե ինչ է տեղի ունեցել: Կոչեք բռնարարին նույն կերպ, ինչպես դա անում է տուժածը (օրինակ՝ ընկեր, ամուսին, հարևան, զուգընկեր, ընկերուհի և այլն):
- 🎗️ Ընդունեք, որ մարդիկ գիտեն, թե անվտանգության որ միջոցներն են առավել արդյունավետ իրենց համար և հետագա քայլերը համաձայնեցրեք նրանց հետ:
- 🎗️ Հատուկ ուշադրություն դարձրեք անվտանգության պլանավորմանը՝ ներառելով բժշկական հաստատությունները, դատարանը և ոստիկանությունը: Խրախուսեք տուժածներին անհրաժեշտության դեպքում դիմել այս հաստատություններին:

ՀԱՎԵԼՎԱԾ

Հավելված 1

Հավելված 2

Հավելված 3



Հավելված 1

Թյուր պատկերացումներ և փաստեր ընտանեկան բռնության վերաբերյալ

Միայն կարծիք.

Ընտանեկան բռնություն վերապրած անձը
կարող է թաքցնել իր սեռական կոմսորոշումը,
ուստի դժվարանա օգնության դիմել:

Փաստ. Ծեծի ենթարկված կանանց բնորոշումը որպես
հոգեպես անառողջ՝ առաջ է գալիս այն ենթադրությունից,
թե ընտանեկան բռնությունից ենթարկվածը պետք է որ
անառողջ լինի, որպեսզի հանդուրժի բռնարարքը: Վերջին
ժամանակների հետազոտությունները ցույց են տվել,
որ ծեծի ենթարկված կանայք տարբեր եղանակներով
դիմակայում են բռնությանը: Ավելին, ընտանեկան
բռնություն վերապրածների մեծամասնությունը հոգեպես
առողջ է, չնայած նրան, որ հոգեկան հաշմանդամություն
ունեցող անձինք պաշտպանված չեն իրենց ամուսնու կամ
զուգընկերոջ կողմից բռնության ենթարկվելուց: Ընտանեկան
բռնության ենթարկված որոշ անձանց մոտ ի հայտ են
գալիս բռնության հոգեբանական հետևանքներ, ինչպիսիք
են՝ հետտրավմատիկ սթրեսի սիմպտոմներ, դեպրեսիան:

Միայն կարծիք.

Ցածր ինքնագնահատականը դրդում է մարդկանց
ներգրավվել բռնարար հարաբերություններում:

Փաստ. Ավանդաբար՝ տեսությունները փորձում էին
ներկայացնել, թե բավարար ինքնագնահատական ունեցող
անձինք թույլ չեն տա իրենց նկատմամբ բռնարարք
իրենց ամուսնու կամ զուգընկերոջ կողմից: Փաստացի,
ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընտանեկան
բռնություն վերապրածների միջև բացի կին լինելուց՝
այլ ընդհանրություններ քիչ կան: Ենթադրությունը, որ
ցածր ինքնագնահատականը մղում է մարդկանց լինել

բռնարար հարաբերություններում գրեթե հիմնավորված չէ, այդուհանդերձ որոշ վերապրածների մոտ նկատվում է ինքնագնահատականի անկում, քանի որ բռնարարները ստորացնում, նվաստացնում և քննադատում են նրանց:

Սխալ կարծիք.

Ընտանեկան բռնության ենթարկված անձինք երբեք չեն լքում իրենց բռնության ենթարկածին, իսկ եթե լքում են, ապա ներգրավվում են բռնարար այլ հարաբերությունում:

Փաստ. Ընտանեկան բռնության ենթարկված անձանց մեծ մասը հեռանում է բռնարարներից, հաճախ՝ ավելի քան մեկ անգամ: Հնարավոր է, որ մշտական բաժանումը հաջողվի մի քանի փորձից միայն, քանի որ նրանց հետ բերելու նպատակով բռնարարները բանեցնում են բռնի ուժ, ֆինանսական վերահսկողություն, երեխաների հարցով սպառնալիքներ, որպեսզի զոհին ստիպի վերադառնալ: Բացի այդ՝ ընկերների, ընտանիքի, ինչպես նաև այնպիսի մասնագետների կողմից աջակցության բացակայությունը, ինչպիսիք են՝ դատական անձնակազմը, հարկադիր կատարման պաշտոնյաները, խորհրդատուները, հոգևորականները, կարող է ստիպել տուժածին վերադառնալ բռնարարի մոտ: Քանի որ հաճախ նոր բռնության վտանգն աճում է, երբ տուժածը լքում է բռնարարին, բաժանվելն էլ ավելի է բարդանում, եթե չկա որոշակի իրավական անվտանգություն և ապահովություն: Բռնության ենթարկվածներն, ովքեր վաղ շրջանում ստանում են իրավական աջակցություն, առավել մեծ հնարավորություն ունեն պաշտպանություն և ֆինանսական ապահովություն ստանալու, ինչը նրանց հնարավորություն է տալիս մշտապես հեռանալ բռնարարից: Չնայած նրան, որ կարող են լինել դեպքեր, երբ բռնություն վերապրած որոշ անձինք ներգրավվում են այլ հարաբերություններում, որտեղ զուգընկերը հետագայում կարող է բռնանալ նրանց նկատմամբ, չկա որևէ ապացույց, որ բռնություն վերապրածների մեծամասնության հետագա կյանքն ընթանում է նման սցենարով:

Սխալ կարծիք.

Բռնարարներն իրենց կողակցին կամ ամուսնուն բռնության են ենթարկում ակոհողի կամ թմրադեղերի ազդեցության տակ:

Փաստ. Ակոհողի կամ թմրադեղերի չարաշահումը չի հանդիսանում ընտանեկան բռնության դրդապատճառ, չնայած այն հաճախ է օգտագործվում որպես արդարացում: Որոշ դեպքերում ակոհողի կամ թմրադեղերի չարաշահումը կարող է մեծացնել բռնության դեպքերի հաճախականությունը և հանգեցնել որոշ դրվագներում բռնության ուժգնացման: Հաշվի առնելով, որ ակոհողի և թմրադեղերի չարաշահումն ինքնին չի հանդիսանում ընտանեկան բռնության դրդապատճառ, պահանջել բռնարարից հաճախել միայն ակոհողի և թմրադեղերի չարաշահման դեմ ծրագրերի դեռևս չի նշանակում արդյունավետորեն պայքարել ընտանեկան բռնության դեմ: Նման ծրագրերը կարող են արդյունավետ լինել այլ ծրագրերի հետ մեկտեղ, ինչպիսիք են՝ միջամտության ծրագրերը բռնարարների համար (որոնք, սակայն այժմ բացակայում են Հայաստանում):

Սխալ կարծիք.

Բռնարարներն իրենց կողակցին կամ ամուսնուն ճնշման են ենթարկում սթրեսի կամ գործազրկության պատճառով:

Փաստ. Սթրեսը կամ գործազրկությունը չի հանդիսանում կողակցի նկատմամբ բռնականության դրդապատճառ: Հաշվի առնելով այն, որ ընտանեկան բռնությունը տարածված է սոցիալ-տնտեսական բոլոր խավերում, այն չի կարելի կապել գործազրկության կամ աղքատության հետ: Նմանապես, անդրադառնալով այն տեսակետին, թե սթրեսը հանգեցնում է ընտանեկան բռնության, առավել հավանական կլիներ, եթե բռնարարները բռնություն կիրառեն իրենց ղեկավարների կամ աշխատակիցների նկատմամբ: Ընտանեկան բռնությունը շարունակում է գործադրվել, քանի որ հասարակությունը հանդուրժում է

բռնությունը կնոջ կամ կողակցի նկատմամբ: Բռնություն գործարդողները հասկանում են, որ կարող են հասնել իրենց նախընտրած արդյունքին ուժի կիրառմամբ և միևնույն է, լուրջ խնդիրների առջև չեն կանգնի:

Սխալ կարծիք.

Մի ծնողի կողմից մյուսի նկատմամբ կիրառվող բռնությունը երեխաների վրա ազդեցություն չի ունենում:

Փաստ. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ծնողներից մեկի կողմից մյուսի նկատմամբ բռնության 50-70%-ի դեպքում երեխաները նույնպես ենթարկվում են ֆիզիկական բռնության: Բացի դա, ընտանիքում բռնության ականատես լինելու արդյունքում երեխաները ստանում են նաև էմոցիոնալ, կոգնիտիվ, վարքային և զարգացման շեղումներ: Ավելին, որոշ երեխաներ (հատկապես տղաները), ովքեր վերապրել են ընտանեկան բռնություն, կյանքի ընթացքում կրկնում են նույն վարքագիծը:

Սխալ կարծիք.

Ընտանեկան բռնությունը կապված չէ ծնողական պարտականությունների կատարման հետ:

Փաստ. Քանի որ երեխաները բռնարար ընտանիքներում հաճախ ենթարկվում են հոգեբանական և ֆիզիկական բռնության, ընտանեկան բռնությունն անմիջականորեն կապված է ծնողական պարտականությունների կատարման հետ: Ընտանեկան բռնության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բռնություն կիրառող ծնողը մյուս ծնողից բացի բռնանում է նաև երեխայի նկատմամբ:

Հավելված 2

Ընտանեկան բռնությունը և կրոնը

Ընտանեկան բռնությանը բախվելիս՝ շատերը փորձում են մխիթարանք ու ուղղորդում փնտրել հավատքի մեջ՝ դիմելով կրոնին: Ուրիշների մոտ էլ կարող է հավատքի անկում տեղի ունենալ մինչև նրանք փորձում են գլուխ հանել իրենց տառապանքից: Շատերի մոտ առաջանում է այն հարցը, թե «ինչո՞ւ աստված թույլ տվեց, որ սա ինձ հետ պատահի»:

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց հետ առնչվող քահանաները պետք է աջակցեն նրանց, պատրաստակամ լինեն խոսել նրանց հետ իրենց հարցերի ու ապրումների մասին: Նրանց խնդիրները «լուծելու» միտում ունեցող խորհուրդներն ավելի թերագնահատում են նրանց ապրումները, մերժում են նրանց տառապանքի խորությունն ու նվազեցնում ապաքինման հնարավորությունը: Փոխարենն ասելով՝ «շարունակիր աղոթել» կամ «ամեն ինչ լավ կլինի, եթե աստծուն ներս ես թողնես քո կյանք», որպես հոգևոր առաջնորդ պատրաստ եղեք լսել բռնության ենթարկվածին և փորձառությամբ լուսավորեք կրոնական ավանդույթի դրական արժեքը՝ միաժամանակ հստակ ընդգծելով, որ բռնությունը երբեք արդարացված չէ և թողություն չի կարող ստանալ: Երբ բռնությունից տուժածները ձեզ են դիմում, փորձեք գնահատել նրանց անմիջական կարիքները և ուղղորդեք նրանց ընտանեկան բռնության կենտրոններ:

Քրիստոնեական գրությունները հստակորեն ամրագրում են, որ **սուրբ գրերը չեն կարող օգտագործվել՝ ընտանիքում անձի նկատմամբ բռնությունն արդարացնելու համար**:

Սակայն գիտենք, որ այդ գրությունները և այլ ավանդական կրոնական գրականությունը կարող են նենգափոխվել: Քրիստոնեական ժամանակակից

համայնքներում մեկ այլ սայթաքում է մարդկանց սովորեցնելը, թե շատ պարզ պատասխաններ կան շատ բարդ խնդիրներին: Այսպիսով, կրոնական համայնքները ոչ միշտ են բավարար կերպով պատրաստված տարբեր իրավիճակներից՝ հիվանդությունից, մահից, բռնությունից, ամուսնալուծությունից տուժած և այլ տրավմաներ ունեցող մարդկանց:

«Հարգեք բոլոր պատվիրաններն ու ամեն ինչ կարգին կլինի»:

«Շարունակեք աղոթել»:

«Ընդունեք միայն Հիսուս Քրիստոսին որպես Տիրոջ և Փրկչի և դուք կլինեք առողջ, բարեկեցիկ ու երջանիկ»:

«Ամեն շաբաթ պատարագին մասնակցեք»:

«Ավելի եռանդով աղոթեք»:

Լավագույնը, որ եկեղեցին կարող է անել ընտանեկան բռնությունից տուժածների համար տառապյալներին օժանդակելն է, աստծո ներկայության նշան լինելը, նրանց ապրումներից բխող հարցերի հետ պայքարելու պատրաստակամությունն է: Կյանքի խնդիրները «լուծելուն միտված» բարի խորհուրդներն անտեսում են տառապողների տառապանքը և դարձնում այն պարզապես մի լոգունգ, մերժում են ցավի խորությունն ու նվազեցնում ապաքինվելու ու նոր կյանք սկսելու հնարավորությունը:

Հոգևորականության դերը. Եթե քահանաներին մոտենում են ընտանեկան բռնության հարցով, նրանք կարող են առաջնորդվել հետևյալ ուղեցույցներով.

1. Տեղյակ եղեք ընտանեկան բռնության դինամիկայից, օգտվեք այդ գիտելիքից՝ իրավիճակը գնահատելիս:
2. Որպես կրոնական հեղինակություն և հոգևոր առաջնորդ՝ օգտագործեք ձեր փորձը կրոնական ավանդույթների դրական արժեքը լուսավորելու համար՝ միևնույն ժամանակ ընդգծելով, որ դրանք չեն արդարացնում և թողություն տալիս ընտանեկան բռնությանը:

3. Բացահայտեք, թե Ձեր ծխի անդամի անմիջական կարիքները որոնք են և ուղարկեք նրանց (օրինակ՝ Կանանց աջակցման կենտրոն՝ 099-887-808), որոնք ոլորտում մասնագիտացած են, կարող են միջամտել և օգնություն տրամադրել:
4. Եթե ձեզ համար ընդունելի է հարցով շարունակել զբաղվել, հավելյալ հոգևոր օժանդակություն ու խրախուսանք տրամադրեք բռնությունից տուժած ընտանիքներին, որպեսզի նրանք լիարժեքորեն օգտվեն առկա հնարավորություններից:

Կրոնական տեքստերի ու աստվածաբանության հետ կապված հարցեր

Տառապանք. Տառապելիս՝ հաճախ մարդու մոտ առաջինը ծագում է այն հարցը, թե ինչո՞ւ է ինքը տառապում: **Սա իրենից երկու հարց է ներկայացնում.** «Ինչո՞ւ տառապանք գոյություն ունի» և «Ինչո՞ւ հենց ես»: Սրանք դասական աստվածաբանական հարցեր են, որոնց լիովին բավարարող պատասխաններ չկան: Մարդը կարող է այս հարցերին փորձել պատասխանել՝ շատ կոնկրետ պատճառահետևանքային կապեր գտնելով:

«Ամուսինս ինձ բռնության է ենթարկում որպես Աստծո պատիժ, որովհետև տասը տարի առաջ ստեղծ ծնողներին ու փախչելով ամուսնացա»:

Այս դեպքում բռնության ենթարկված կինն իր տառապանքը համարում է պատիժ մի բանի համար, որ տեղի է ունեցել վաղուց և որի համար ինքը մինչև հիմա մեղք է զգում: Սա ցույց է տալիս կնոջ ջանքը՝ փորձելու ողջամիտ պատասխան գտնել ամուսնու բռնությանը: Նման եզրակացությունը նույնպես հիմնված է մի շարք աստվածաբանական ենթադրությունների վրա, ասելք՝ աստված խիստ դատաստան է տեսնում իր հետ իր մեղքերի պատճառով

և նա է պատճառն իր տառապանքի՝ որպես պատժի: Ցավոք՝ կնոջ բացատրությունը չէ կենտրոնանում է տառապանքի բուն բնույթի (ամուսնու գործադրած բռնության), չէ էլ՝ դրա պատասխանատվությունը դնում է այնտեղ, որտեղ պետք է, այսինքն՝ բռնարար ամուսնու վրա: Երբեմն մարդիկ փորձում են տառապանքը բացատրել՝ ասելով, թե «Դա է աստծո կամքը» կամ «Աստված դա է նախատեսել իմ կյանքի համար» կամ «Աստծո դասն է սա»: Այս բացատրություններն աստծուն ներկայացնում են որպես խստաբարո, անողոք, դաժան ու սեփական հայեցողությամբ մեկի: Աստծո նման պատկերը հակասում է աստվածաշնչյան աստծուն, որը բարի է, գթասիրտ ու սիրող: Աստվածաշնչյան այս ուսմունքում աստված չի տարբերակում, թե ով պետք է տառապի հանուն տառապանքի, քանի որ տառապանքը չի հաճոյացնում աստծուն: Քրիստոնեական ավանդույթը սովորեցնում է, որ տառապանքը մարդկանց հետ տեղի է ունենում, քանի որ աշխարհը լի է չարիքով ու մեղքով: Բարեպաշտ կյանք ապրելու ձգտումը չի ապահովում, որ մարդը կարող է պաշտպանված լինել ուրիշների մեղսագործություններից:

Քրիստոնեական ուսմունքում որևէ տեղ աստված չի խոստանում, որ մենք այս կյանքում չենք տառապի: Սուրբ գրքում ասվում է, որ աստված խոստանում է ներկա լինել մեզ հետ, երբ մենք տառապում ենք: Սա հատկապես ակնհայտ է սաղմոսներում, որոնք պատկերավոր կերպով վկայում են, թե ինչպես են մարդիկ պահպանում աստծո նկատմամբ հավատարմությունը՝ տառապանքի ժամանակ (տես՝ Սաղմոսներ 22 և 55): Աստծո կողմից լքված լինելու վախը հաճախ ավելի ուժեղ է լինում՝ բռնության ենթարկվելիս և տառապելիս: Բռնության ենթարկվածները հաճախ հենց այս վախն են ապրում, երբ մտածում են, թե գրեթե բոլորն իրենց լքել են՝ ընկերները, ընտանիքի այլ անդամներ, հոգևորականները, ոստիկանները, իրավաբանները, խորհրդատուները: Այդ

իսկ պատճառով շատ հեշտ է նրանց համար միանգամից եզրակացնել, թե աստված է նրանց լքել: Քրիստոնյաների դեպքում աստծո խոստումը բռնությունից տուժածներին կարող է լինել այն, որ չնայած շատերն իրենց կյանքում կարող է լքեն իրենց, աստված նրանց երբեք չի լքի: Այս ուղերձը հնարավոր է գտնել հատկապես կաթոլիկների մոտ: Երբեմն երբ մարդիկ տառապանքը համարում են աստծո կամք, նրանք կարծում են, թե աստված նրանց դաս է տալիս կամ փորձության ենթարկում: Տառապանքի միջով անցնելն իսկապես կարող է փորձություն լինել: Այն ավելի շատ հենց փորձություն է, սակայն միայն եթե տառապող անձն այդ ապրումների հետ միասին ստանում է աջակցություն ու վստահեցում: Ընտանիքի, ընկերների, օգնողների օժանդակությամբ ընտանեկան բռնությանը բախված մարդիկ կարող են վերջ տալ բռնությանը, դուրս գալ այդ իրավիճակից, իրենց կյանքում մեծ փոփոխություններ մտցնել ու աճել որպես հասուն մարդիկ: Սակայն տառապանքի այս գիտակցումը որպես աճելու առիթ, **պետք է բխի հենց տառապողներից** և բխի այն ժամանակ, երբ նրանք վերականգնման ուղին են բռնել:

Ամուսնական հարաբերության բնույթը՝ համաձայն քրիստոնեական տեսակետի

Ընդունված է, որ սուրբ գրքի՝ ամուսնության հետ կապված թելադրանքները տրվում են կանանց և ոչ տղամարդկանց: Դրանցում ասված է, որ կանայք պետք է հնազանդվեն իրենց ամուսիններին: Սա հաճախ մեկնաբանվում է, թե ամուսինը/հայրն է ընտանիքի բացարձակ գլուխը և որ կինն ու երեխաները պետք է առանց վիճարկելու ենթարկվեն իրեն: Ցավոք, այս գաղափարը մեկնաբանվում է նաև այնպես, թե իբր կինն ու երեխաները պետք է նաև հնազանդվեն իրենց ամուսինների և հայրերի բռնությանը: Նման արդարացումը սխալ կերպով օգտագործվում է բռնարարների կողմից,

երբեմն նաև խորհրդատուների, հոգևորականների
և նույնիսկ բռնությունից տուժածների կողմից:
Աստվածաշնչյան գրերին ավելի ուշադիր
հայացքը ցույց է տալիս լրիվ այլ պատկեր:
Օրինակ՝ Եփեսացիս 5:21-ում ասվում է.
«**Իրար** հնազանդ եղէք Աստուծոյ վախովը»
(ընգծումն ավելացված է):

Սա Պողոս առաքյալի Եփեսացիս գրության ամուսնության
բաժնի առաջին և ամենակարևոր տողն է, որը հաճախ
անտեսվում է: Այն հստակորեն մատնանշում է, որ բոլոր
քրիստոնյաները՝ այդքան ու կանայք, պետք է հնազանդ լինեն
իրար: Հնազանդ բառը կարելի է նաև թարգմանել «հարգել»:

«Կանայք, հնազանդեցէք ձեր մարդկանցը,
ինչպես Տիրոջը» (Եփեսացիս 5:22):

Այս ուսմունքը ենթադրում է նրբազգացություն, ճկունություն
և արձագանքելու ունակություն ամուսնու նկատմամբ:
Որևէ կերպ չեն կարող այս տողերը նշանակել, որ կինը
պետք է հնազանդվի ամուսնու բռնարարքների:

«Մարդը կնոջ գլուխն է՝ ինչպես Քրիստոս էլ եկեղեցու
գլուխը, եւ ինքն է մարմնին Փրկիչը: Բայց ինչպես եկեղեցին
հնազանդ է լինում Քրիստոսին, այնպես էլ կանայք՝ իրանց
մարդկանցն ամեն բանի մէջ» (Եփեսացիս 5:23–24):

Ամուսինների այստեղ առաջարկված մոդելը հիմնված է
Քրիստոս-եկեղեցի հարաբերության վրա: Հիսուսի ուսմունքից
ու ծառայությունից պարզ է, որ իր հարաբերությունն իր
հետնորդների հետ տիրապետման կամ ավտորիտարիզմի
հարաբերություն չի եղել, այլ՝ ծառա լինելու: Օրինակ, Հիսուսը
վճարում էր իր առաքյալների ոտքերը՝ որպես ծառայելու
գործողություն: Նա նրանց սովորեցնում էր, որ նրանք,
ովքեր կլինեն առաջինն, իրականում լինեն վերջինը: Ուստի,

լավ ամուսինը չի տիրի ու վերահսկի իր կնոջը, այլ կծառայի նրան ու հոգ կտանի նրա մասին, ըստ սուրբ գրության:
«Այսպես պետք է մարդիկ սիրեն իրանց կանանցը, ինչպես իրանց մարմինները. Ով որ իր կնոջը սիրում է, իրան է սիրում: Վասնզի ոչ ով իր անձը չէ ատել, այլ անում է եւ պահպանում է նորան. Ինչպես Տէրն էլ եկեղեցին: Որովհետեւ նորա մարմնի անդամներն ենք, նորա մարմնիցը եւ նորա ոսկորներիցը» (Եփեսացիս 5:28-29):

Ամուսիններին ուղղված այս թելադրանքը հստակ ու կոնկրետ է: Ամուսինը պետք է հոգա և կերակրի իր մարմինը, ինչպես և իր կնոջը: Ամուսինների մեջ տեղի ունեցող ֆիզիկական բռնությունն այս ուսմունքի ամենաակնբախ խախտումն է և արտահայտում է բռնարարի ինքնատելությունը:

«Մարդը թող իր կնկայ պարտքը վճարէ. Եւ այնպես էլ կինն իր մարդին: Կինն իր մարմնի վերայ իշխանութիւն չ'ունի, այլ մարդը. Այնպես էլ մարդն իր մարմնի վերայ իշխանութիւն չ'ունի, այլ կինը (Կորնթացիս 7:3-4):
Ամուսնու և կնոջ միջև սեռական հարցերում իրավունքներն ու պարտականությունները հստակորեն հավասար և զուգահեռ են տարվում և ներառում են սեռական ակտից հրաժարվելու իրավունքը: Ամուսնական իրավունքների ու սեռական կյանքով ապրելու հարցում հավասարության ակնկալիքը և փոխադարձությունը հստակ է: Այն, որ ասվում է, թե կինն էլ, տղամարդն էլ կարող են «իշխանություն» ունենալ մյուսի մարմնի վրա և ոչ՝ իրենց, վերաբերում է սեռական գործողությանն առնչվող համատեղ, փոխադարձ որոշումներին և ոչ թե սեփական հայեցողությամբ, անկախ որոշումներին: Ամուսինն իրավունք չունի սեփական սեռական կարիքներից ելնելով գործել՝ առանց կնոջ համաձայնության: Նույն կերպ՝ չի կարող կինը: Այս հատվածն ուղղակիորեն հերքում է, որ ամուսնության մեջ սեռական բռնությունը (բռնաբարությունը) թույլատրելի է, մի բան, որ հաճախ է նշվում բռնության ենթարկված կանանց կողմից:

Ամուսնության դաշինքն ու ամուսնալուծությունը

«Ինչպես լավին կամ վատին, մինչև մահը բաժանի մեզ» արտահայտություններն ընդունված է ընկալել, թե պետք է «ամուսնությունն ամեն գնով պահպանել», նույնիսկ այն դեպքերում, երբ ընտանիքի անդամին կոնկրետ մահ է սպառնում բռնարար ընտանիքում: Բացի այդ, բռնությունն ամուսնության մեջ խախտում է ամուսնական դաշինքն ու սեպ խրում հարաբերության մեջ: Երկու դեպքում էլ զուգընկերների տաժած վստահությունը հոդս է ցնդում: Կողակիցներից ոչ ոքից պետք չէ ակնկալել մնալ բռնարար իրավիճակում: Հաճախ, զույգից մեկը կրում է մեծ պատասխանատվություն՝ մնալու հարաբերության մեջ և ամեն ինչ անելու, որ իրենց հարաբերությունները ստացվեն: Սա մեծ մասամբ կանանց է վերաբերում: Դաշնային հարաբերությունը կարող է ստացվել միայն այն դեպքում, երբ դաշինքը կնքած երկու անձինք էլ ունակ են և ցանկանում են այդ դաշինքի վրա ջանք թափել: Ակնհայտորեն աստված չի ակնկալում որևէ մեկից մնալ բռնության ներքո (օր.՝ դառնալ դոան լաթ): Քրիստոնեական ավանդույթի համաձայն՝ ինչպես Հիսուսը չէր ակնկալում, որ իր առաքյալները մնային գյուղում, որտեղ նրանց չէին հարգում ու հոգ տանում (Ղուկաս 9:1-6), այնպես էլ՝ նա չի կարող ակնկալել, որ մարդիկ մնան ամուսնական հարաբերությունում, որտեղ իրենց վրա բռնանում ու չարաշահում են:

Բռնացող տներում ընտանիքը քանդողը ոչ թե ամուսնալուծությունն է, այլ հենց բռնությունը: Ամուսնալուծությունը հաճախ ցավոտ է լինում, հանրությունը պետք է ընդունի արդեն տեղ գտած փաստը: Թեև ամուսնալուծությունը հեշտ չի տրվում, այն ընտանեկան բռնության համատեքստում չարյաց փոքրագույնն է: Շատ դեպքերում անհրաժեշտ միջամտությունը հենց ամուսնալուծությունն է, որպեսզի հնարավորություն տրվի բռնության ենթարկվածին ապաքինվել ու նոր կյանք սկսել ավերիչ ու մահացու վտանգավոր իրավիճակից դուրս:

Ծնողներ և երեխաներ

Ծնողները կարող են չարաշահել աստվածաշնչյան պատգամը՝ «հարգիր հորդ և մորդ»՝ արդարացնելու երեխայի նկատմամբ ֆիզիկական բռնությունը՝ պատճառաբանելով նրա անհնազանդությունը:
Քրիստոնյաների համար երրորդ պատգամի իմաստը հստակեցվում է Եփեսացիսում:

«Որդիք, հնազանդ եղէք ձեր ծնողներին **Տերով**. Որ այն է արժանը: Պատուիր քո հորը եւ մորը, սա է առաջին պատուիրանքը խոստմունքով, Որ քեզ լաւ լինի, եւ երկար ապրես երկրի վերայ: Եւ, հայրեր, մի բարկացնէք ձեր որդեկանցը. այլ մեծացրէք նորանց **խրատով եւ Տիրոջ ուսմունքովը**:» (Եփեսացիս 6:1-4, ընդգծումն ավելացված է)

Երեխաների հնազանդությունն իրենց ծնողներին «Տերով» է, այն կույր ու անքննադատ չէ: Բացի երեխաներին ուղղված խրատներից, խրատներն ուղղված են նաև ծնողներին, որպեսզի նրանք ուղղորդեն և խրատեն իրենց երեխաներին քրիստոնեական արժեքներով՝ սիրով, գթասրտությամբ, կարեկցանքով և արդարությամբ: Երեխայի ցանկացած խրատ պետք է բխի երեխայի լավագույն շահերից: Շատ կարևոր է կոչը հայրերին, որ չհրահրեն երեխաների բարկությունը: Եթե կա մի բան, որ կարող է հրահրել երեխայի բարկությունը, ապա դա ծնողի ֆիզիկական կամ սեռական բռնությունն է:

Շատ են դեպքերը, երբ քահանան ցանկանում է, որ բռնության ենթարկվածը լուծի բռնության դեպքը, նա նրան մղում է բռնարարին ներելուն: Ներողամտությունն այս դեպքում ընկալվում է իբրև բռնությունից տուժածի ապաքինման գործընթացի արագացում: Բռնության ենթարկվածները ներելու իրենց տեմպն ունեն, նրանց չեն կարող ուրիշների ակնկալիքները մղել: Կարող է նույնիսկ տարիներ տևել մինչև բռնության ենթարկվածը ների

բռնարարին: Նրանց ժամանակի կարիքը պետք է հարգվի, նրանք կներեն, երբ պատրաստ լինեն: Ներողամտությունը, մյուս կողմից, ազատագրվելու վերջին փուլն է, այն թույլ է տալիս շարունակել կյանքը:

Հավելված 3

Ծառայություններ մատուցողի էթիկայի ուղեցույց

Որպես ընտանեկան բնությունից տուժածների ծառայություն մատուցող՝ գիտակցում եմ, որ պետք է պահպանեմ էթիկայի որոշակի կանոններ: Ես ստանձնում եմ որոշակի պարտականություններ և հաշվի եմ առնում, որ իմ արաքները պետք է համապատասխանեն ակնկալվող վարքագծին: Ես կհարգեմ ծրագրի նպատակները, կանոններն ու կանոնակարգերը: Ես կապահովեմ գաղտնիություն պահանջող տեղեկատվության գաղտնիությունը:

Խոստանում եմ իմ աշխատանքում լինել ազատամիտ, ձգտել սովորել և ներդնել հետաքրքրություն և ուշադրություն: Ես կապահովեմ պրոֆեսիոնալ վերաբերմունք աշխատանքի նկատմամբ: Ես գիտակցում եմ, որ պարտավորություններ ունեմ իմ աշխատանքի, ղեկավարների, աշխատակիցների, ծառայության շահառուների և հասարակության նկատմամբ:

Լինելով այս ծրագրի նպատակների ջատագով՝ ընդունում եմ հետևյալ վարքագծային կանոնները և պարտավորվում եմ հետևել դրանց: Պարտավորվում եմ գործել հետևյալ կանոններով՝ միաժամանակ գիտակցելով, որ դրանք չեն կարող ընդգրկել և նախատեսել բոլոր հնարավոր իրավիճակներն ու հանգամանքները:

- 
 Պարտավորվում եմ չստանձնել պատասխանատվություն այլ անձանց արարքների համար, խորհուրդներ չտալ և չխրախուսել կախվածություն ինձնից, ինչպես նաև չգործել շահառուների փոխարեն, այլ աջակցել նրանց ինքնուրույն քայլեր իրականացնելու հարցում:
- 
 Պարտավորվում եմ բոլոր շահառուների հետ փոխհարաբերությունները պահպանել պրոֆեսիոնալ հարթակի վրա:
- 
 Պարտավորվում եմ իմ անձնական տվյալները չհաղորդել, չքննարկել իմ անձնական խնդիրները կամ չներգրավվել անհարիր սոցիալական հարաբերություններում:
- 
 Գիտակցում եմ, որ արգելված է իմ անձնական հեռախոսահամարը կամ հասցեն տրամադրել շահառուներին:
- 
 Պարտավորվում եմ ծառայության սահմաններից դուրս շահառուների հետ կապ չհաստատել:
- 
 Պարտավորվում եմ շահառուներին չտալ և չընդունել նվերներ, ինչպես նաև չտրամադրել և չստանալ դրամական փոխառություններ:
- 
 Պարտավորվում եմ շահառուներից որևէ մեկին չվարձել որպես դայակ, տնային աշխատող և այլն:
- 
 Պարտավորվում եմ շահառուի հետ չգործել որպես փաստաբան, խորհրդատու, բժիշկ և այլն, նույնիսկ այն պարագայում, եթե փաստացի հանդիսանում եմ նշվածներից որևէ մեկը:
- 
 Պարտավորվում եմ պահպանել շահառուների անանունությունը:
- 
 Պարտավորվում եմ հարգել, պահպանել տեղեկությունների գաղտնիությունը և չիրապարակել շահառուների վերաբերյալ որևէ տեղեկատվություն:
- 
 Պարտավորվում եմ հաճախել ընթացիկ ժողովներին և ծառայողական վերապատրաստման դասընթացներին:
- 
 Պարտավորվում եմ պատասխանատու անձանց անհապաղ զեկուցել ցանկացած բարդացումների,

արտասովոր հանգամանքների կամ ճգնաժամային
իրավիճակների վերաբերյալ:



Գիտակցում եմ, որ ակոհոլի օգտագործումը կամ
դրա ազդեցության տակ գտնվելը աշխատանքային
պարտականությունների կատարման ընթացքում
կհանգեցնի իմ անհապաղ հեռացմանը ծրագրից:



Գիտակցում եմ, որ ցանկացած անօրինական
գործունեություն կհանգեցնի իմ անհապաղ հեռացմանը
ծրագրից:

Գրականություն

American Bar Association: www.abanet.org

Amnesty International, Armenia - No Pride in Silence: Countering Violence in the Family, (2008). Yerevan, AM: AI Publications.

Barnett, O., & LaViolette, A. (1993). It could happen to anyone: Why battered women stay. Newbury Park, Calif.: Sage.

Best Practices for Domestic Violence Programs, (2000). [Manual] Arizona: Arizona Coalition against Domestic Violence.

Best Practices Toolkit for Working with Domestic Violence – from www.mcadsv.org/projects

Bloom, S., & Farragher, B. (2013). Restoring sanctuary a new operating system for trauma-informed systems of care. Oxford: Oxford University Press.

Campbell JC, Webster DW, Glass N. (2009). The danger assessment: validation of a lethality risk assessment instrument for intimate partner femicide. *Journal of Interpersonal Violence*, 24(4):653-74

Campbell, JC. (2004). Danger Assessment. Retrieved May 28, 2008 from <http://www.dangerassessment.org>

Davies, J., & Lyon, E. (1998). Safety planning with battered women complex lives/difficult choices. Thousand Oaks, Calif.: Sage Publications.

Disability Statistics: Facts & Statistics on Disabilities & Disability Issues
<http://www.disabled-world.com/disability/statistics/>

Domestic Violence Survey in the Republic of Armenia, (2011). [Survey]. Yerevan, AM: OSCE.

Evans, P. (2010). The verbally abusive relationship: How to recognize it and how to respond (Expanded 3rd ed.). Avon, MA: Adams Media.

Everett, G. (2011). Trauma First Aide - Methodology and Techniques. [Handbook]. Santa Fe, NM: Trauma First Aide Associates LLC.

Felitti V.J. et al, 'The Relationship of Adult Health Status to Childhood Abuse and Household Dysfunction', *American Journal of Preventive Medicine*, Vol. 14, 1998, pp. 245-258

Herman, J. (1992). *Trauma and Recovery*. New York, N.Y.: BasicBooks.

Huffine, C. *12 Reasons Why Couples Counseling Is Not Recommended When Domestic Violence Is Present*. [Booklet]. Portland, OR: Oregon Coalition Against Domestic & Sexual Violence.

Jersey Battered Women Services Training Manual

Jones, A. (1994). *Next time, she'll be dead: Battering & how to stop it*. Boston: Beacon Press.

Ogden, P., & Minton, K. (2006). *Trauma and the body: A sensorimotor approach to psychotherapy*. New York: W.W. Norton.

Quinn, M. (2010) *Open Minds, Open Doors: Transforming Domestic Violence Programs to Include LGBTQ Survivors*. [Manual] Boston, MA: The Network La Red.

Supporting Survivors of Sexual Assault: A Journey to Justice, Health, and Healing, (2007). [Manual]. Boston, MA: Jane Doe Inc.

RomáAgvanian, N. (2015) *Language as Cultural Purveyor: Exploring the Armenian Language as a Means to Gender Equality*. Yerevan, AM: Yerevan State University.

Ganley, A. and Hobart, M. (2010). *Social Worker's Practice Guide to Domestic Violence*, (2010). [Manual]. Washington State: Children's Administration, Department of Social and Health Services.

Sociological study on Gender Attitudes and Perceptions in Armenia, (2012). [Booklet]. Yerevan, AM: Women's Support Center.

Trauma -Informed Care Protocol and Best Practices – from www.ncdsv.org/images

Weiss, E. (2004). *Surviving Domestic Violence: Voices of Women Who Broke Free* (New ed.). Volcano, Calif.: Volcano Press.

When violence begins at home: A comprehensive guide to understanding and ending domestic abuse (2nd ed.). (2006). Alameda, CA: Hunter House.

24/7 

թեժ գիծ՝ 099-887-808

wsc.armenia@gmail.com
www.womensupportcenter.org
 WomensSupportCenter